Էջմիածին



1967

ՌՆԺԷ
ԻԴ ՏԱՐԻ

Սեպտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Թ. 9

1967

ՍԱ-8549

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՎԱՀԱԳՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը ոլորտաձև տաղավարության քառանավաձևակի տիպով	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Պատմական այցելություն	5
Վեհափառ Հայրապետի ուղեւորությունը Ժնեւ	9
Հարցազրույց Նրեանի ռադիոյի թղթակցի հետ	39
Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Միջին տարեների սովետի նախագահ Բագրատ Մուրադյանին	42
Փաստոնականք	43
Հնդիկ մագաբար Եկեղեցու պատվիրակության այցը Մայր Աթոռ	45
«Կարնագրություն»—Հուշարձանի բացումը Մայր Աթոռում	47
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	50
Հոգեւոր ճեմարանի վերաբացումը	52
ԵՒՐՈՊ. ՎՐԴ. ՇԱՔԱՐՅԱՆ—Ուխտագնացություն դեպի ս. Երուսաղեմ	54
Ոսկիշե Զարեանցի ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ	60
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	61

Հանձնված է արտադրության 15/VIII 1967 թ. Ստորագրված է տպագրության 10/X 1967 թ.
տպագրական 4 մամուլ թուղթ 60×84¹/₈ պատվեր 605

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1967 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՊՈԼՍԱՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՁՈՐՍՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԵԱՆԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ, ՀՈԳԵՒՈՐ ԷՊԱՍԱԽՈՐԱՅ ԵՒ ԱՌ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ, ՀԱՐԱՒՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ԳԱՀԷ; ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱՍԿԱԼԷ; ՆՈՐԻՆ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Փառք Ամենակալին Աստուծոյ, որ Իր հովանիին ներքն ապահով ու խաղաղ կը պահպանէ մեր սուրբ եկեղեցին և կը լուսաւորէ մեր հաւատացեալ զաւակներուն կեանքի ճամբան, յաջողութեամբ պսակելով անոնց բարի ու առաքինի ձեռաց գործերը։

Մենք յոյժ երջանիկ ենք, որ սուրբ Հոգւոյ Ներշնչմամբ, նախաձեռնած էք հիշատակել ու տօնախմբել չորս հարիւրամեակը առաջին հայերէն տպագրութեան ի Կ. Պոլիս տրնաչան ու միր աշխատանքով մեր եկեղեցւոյ շնորհալի սպասաւոր՝ Երգաբ Դպիր Թոխաթեցիի, որ 1567-ին առաջին անգամ ըլլալով Վենետիկի ոսկերոն հայկական տպարան հաստատեց և լոյս ընծայեց իր «Աբրենարան»-ը կամ «Փոքր բերականութիւնը»։

Հայ տպագրութեան արուեստը, սկիզբ առած Վենետիկի մէջ ԺԶ դարու արշալոյսին, իր սքանչելի զարգացումը ապրեցաւ Ձեր շքեղ քաղաքին մէջ, որ մեր եկեղեցին և իր սպասաւորները գիտցան լուսաւոր էջ մը բանալ մեր պատմութեան մէջ, տպագրական արուեստի միջոցաւ առատապէս բաշխելով մեր ժողովուրդին՝ կենարար շունչը Աստուծոյ և լոյսը գիտութեան։

Այսօր, չորս հարիւր տարիներ յետոյ, ամբողջ մեր ազգը որ ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, երախտագէտ զգացումներով զեղում կը միանայ Ձեզի

բոլորիդ և յարգանքով ու ցնծութեամբ կը մասնակցի Ձեր ուրախութեան և Ձեր հանդիսութիւններուն:

Թալ Տէրը անշէջ փառքի մէջ պահէ յիշատակը և վաստակը Թոթախեցի Աբգար Դպիրին ու մեսրոպատեղծ տառն ու տիպը հայկական:

Թող Տէրը անսասան և շէն պահէ մեր սուրբ հաւատքի Տունը՝ եկեղեցին հայկական և ստեղծարար ազգը մեր հինաւուրց:

Թող Տէրը խաղաղ ու ծաղկեալ պահէ պահպանէ պատմական Աթոռը Ձեր պատրիարքութեան՝ իր սուրբ տաճարներով և հաւատացեալ ժողովրդով:

«Աղուչեմք զձեզ եղբարք՝ ճանաչել զվաստակաւորս և զվերակացուս ձեր ի Տէր, և զխրատիչս ձեր: Եւ համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոց նոցա. խաղաղութիւն արասջիք ընդ միմեանս» (Ա. Թես. Ե. 12—13):

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեսին ձեզ: Ամէն:

Կարեկին Բ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20-ը սեպտեմբերի
1967 փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԶ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
ՀՈՒՐ. 622

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒՄՆԵՐ

Վենետիոն Հայրապետը սույն թվականի նոյեմբերի 10—13 օրերին՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտ. Է. Ռ. Բելկի հրավերով իր պաշտոնական առաջին այցելությունը տվեց ԵՏՆ՝ հաստատության կենտրոնին։

Էկումենիկ շարժման առաջին իսկ օրերից, երբ դեռ լրիվ չէր կազմակերպվել Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, Հայց. առաք. եկեղեցին, Գևորգ Ե-ի օրոք, իր մասնակցությունն էր բերում մեր մատաղ ակները հատկանշող միջեկեղեցական այդ կարևոր կազմակերպության։

1927 թվականին, երբ Լոզանում գումարվում էր հավատո և կարգի առաջին Էկումենիկ համաժողովը, Գևորգ Ե կաթողիկոսի ճանձնարարությամբ, հանում Մայր Աթոռի, ժողովին մասնակցում էին՝ տ. Տիրայր, տ. Ղևոնդ և տ. Գրիգորիս (Պալաբաև) եպիսկոպոսները։

Դա առթիվ Գերագույն հոգևոր խորհուրդը ուշադրություն էր դարձնում մեր նվիրապետական Աթոռներին, բարձր թեմերին ուղարկում մի շրջաբերական-կանոնադրություն, որտեղ ճշտորեն էին սկզբունքները ու ուղիները նվիրված միջեկեղեցական ժողովներին ևս եկեղեցու մասնակցության (տե՛ս «Միություն» ամսագիր, 1927, էջ 282—287)։

Այնուհետև և ես ևս եկեղեցին մասնակցում էր Էկումենիկ շարժման այդ ժողովներին՝ որպես դիտորդ, ինչպես 1937-ին Էդինբուրգի ժողովին, որին մասնակցում էին Հռոմիկ արքեպ. Զորեանը և Մատթեոս եպս. Իսենյանը։

1959 թվականի դեկտեմբերին Մայր Աթոռ էր այցելում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտ. Վիսսերտ Հուֆտը և տեսակցություններ էր ունենում Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդին հայ Եկեղեցու անդամակցության շուրջ։

1962 թվականի օգոստոսին, Ն. Ս. Օծությամբ Տ. Տ. Վազգեն Ա-ի հանձնարարությամբ, Հայց. առաք. եկեղեցին պաշտոնապես անդամ էր դառնում Եկեղեցիների համաշխարհային խորհրդին։

1967 թվականի մարտին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նորընտիր ընդհանուր քարտուղար, դոկտ. Է. Ռ. Բելկը, իր պաշտոնավարության առաջին շրջանին, այցելում էր Մայր Աթոռ ս. Էջմիածին՝ անձամբ ծանոթանալու հայ եկեղեցու գերագույն պետ, Ն. Ս. Օծությամբ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի հետ և խորհրդակցելու Էկումենիկ շարժման և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հետ Մայր Աթոռի ավելի սերտ հարաբերակցության հնարավորությունների մասին։

Մայր Աթոռում գտնվելիս դոկտ. Է. Ռ. Բելկը անձամբ կրկնում էր նաև Եկեղեցիներ-

րի համաշխարհային խորհրդի հրավերը՝ Հայոց Հայրապետին Ժնև այցելելու:

Ն. Ս. Օծությունը սիրով և գոհունակությամբ ընդունելով այդ սրտագին հրավերը, որոշում էր անձամբ տանել Հայց. առաք. եկեղեցու դարավոր կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնությունները ու Իր ողջույնները Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնին:

Պատմական այս այցելության ժամանակ Հայոց Հայրապետի գլխավորած եկեղեցական պատվիրակության կազմում էին՝ Մայր տաճարի լուսարարապետ և Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ եպս. Մանուկյանը, Վիեննայի հայոց հոգևոր հովիվ և Ժնևում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մոտ հայ եկեղեցու մշտական ներկայացուցիչ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը:

Ժնևում հուլիսի 10—13-ը Ամենայն Հայոց Հայրապետը պաշտոնական հյուրն էր Եկեղեցիների համաշխարհային խորհրդի:

Արդարև, այդ օրերը եղան պատմական անմոռանալի օրեր թե՛ Հայոց Հայրապետի և թե՛ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ղեկավարության և կենտրոնի համար:

Հայոց Հայրապետը դիմավորվեց և ընդունվեց որպես գերագույն պետը Արևելքի հնագույն և պատմական եկեղեցիներից մեկի՝ Հայց. առաք. եկեղեցու, խանդավառ արտահայտություններով, բացառիկ պատիվներով թե՛ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ղեկավարության, թե՛ պետական անձնավորությունների և թե՛ քույր եկեղեցիների հոգևոր պետերի և բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից:

Հայոց Հայրապետի այցելությամբ տեղի ունեցած տեսակցություններով, շփումներով, միատեղ կատարված հասարակաց աղոթքներով ամրապնդվում էր Մայր Աթոռ ս. Էջմիածնի և այլ եկեղեցիների բարեկամական կապը էկումենիկ ոգով՝ հետագա ավելի սերտ համագործակցության ցանկությամբ:

Առանձնապես ուշագրավ և սրտագին էին հանդիպումները ու տեսակցությունները Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնում, հաստատության բոլոր բաժանմունքների ղեկավարների և պատասխանատու աշխատողների հետ:

Հուլիսի 11-ին՝ երեքշաբթի օրը, երբ Հայոց Հայրապետը հայ եկեղեցու պատվիրակության անդամներով Իր առաջին պաշտոնական այցելությունն էր տալիս Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնին՝ ողջունելով բոլորին, ասում էր.

«Խոր հուզումով կուգանք ձեզի բերելու Աստուծո օրհնությունը և Մեր քրիստոնեական ողջույնը սուրբ Էջմիածնեն, բազմադարյան կեդրոնը Հայց. առաք. սուրբ եկեղեցիին, որ չորրորդ դարու սկիզբին հաստատվեցավ հայոց հայրապետական Աթոռը ս. Գրիգորի ձեռամբ՝ Լուսավորիչը մեծ Հայաստանի»:

Իր պատմական ողջույնի սույն խոսքի մեջ, որը միաժամանակ կարևոր փաստաթուղթ է միջեկեղեցական հարաբերությունների տարեգրության համար, հայ եկեղեցու պատմության, դերին, առաքելության և արդի կացության նվիրված, Հայոց Հայրապետը հաստատում էր, որ **«Հայց. առաք. եկեղեցին հնագույն եկեղեցիներեն մին է, մեկ ու անբաժանելի, իբր միակ գլուխ ունենալով Ամենայն Հայոց կաթողիկոսը ի սուրբ Էջմիածին, սուրբ գրական Հայաստանի հողի վրա, հայ ազգային պետության ծոցին մեջ»:**

Որպեսզի ուղիղ հասկացվեն Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնում Հայց. եկեղեցին և նրա կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնի տեղն ու դերը, Հայոց Հայրապետը շեշտում էր նաև, որ հայ եկեղեցին ունի միայն տեղական բնույթ և իշխանություն ունեցող մասնավոր Աթոռներ, որոնք սակայն գտնվում են Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր, վերին ղեկավարության ներքո, իսկ պատմականորեն և կանոնական տեսակետից հայ **«եկեղեցվո մեկությունը և ներքին միությունը պայմանավորված է և երաշխավորված Մայր Աթոռ սուրբ Էջմիածնով, իբրև գլուխ հայ եկեղեցվո»:**

Այնուհետև խոսելով էկումենիկ շարժման շուրջ քրիստոնեական եկեղեցիների համագործակցության մասին, Հայոց Հայրապետը շարադրում էր Մայր Աթոռ ս. Էջմիածնի տեսակետները ու ըմբռնումները եկեղեցիների միության հարցում 1965 թվականի հուլիսի 11-ի հայրապետական կոնդակի ոգու համաձայն եզրակացնելով.

«Բոլոր պատմական եկեղեցիները իրենց սուրբերով, իրենց ավանդություններով, իրենց հոգևոր ժառանգություններով և իրենց մշակույթներով կկազմեն համաքրիստոնեական տիեզերական ոգեկան հուշարձան մը, որ իր ամբողջության մեջ լիությամբ կարտահայտե տիեզերքը Աստուծո խոսքին, ու կճառագայթե փառքը Հիսուսի Քրիստոսի»:

Արդի ժամանակներում կրոնական կյանքը հատկանշվում է միջեկեղեցական նման հարաբերությունների աշխուժացման, եկեղեցիների մերձեցման, համագործակցության և նաև ապագա միության կատարված աշխատանքներով:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ջանքերը գնահատելով, Վեհափառ Հայրապետը վստահություն էր հայտնում, որ «Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը, իրեն անդամ բոլոր Եկեղեցիներու գործոն մասնակցությամբ, պիտի կարողանա դառնալ հետզհետե ավելի հզոր ուժ մը համաշխարհային տեսակետով, ի խնդիր աշխարհի խաղաղության սրբազան դատին պաշտպանությամբ»:

Քրիստոնեական Եկեղեցիների նպատակն մերձեցումով և համագործակցությամբ միայն կարող է գործունեություն Եկեղեցին և կատարել իր առաքելությունը ներկա կյանքի դժվարին ու բարդ պայմաններում:

«Վերջին տարիներուն,—ասում էր Վեհափառ Հայրապետը,—կխոսվի դիալոգի մասին՝ Եկեղեցիի և աշխարհի միջև, կամ այլ բանաձևումով՝ Եկեղեցին ներկա աշխարհի մեջ: Մենք ողջունելի կգտնենք այս նոր ոգին և կհավատանք, թե Քրիստոսի Եկեղեցին պիտի մնա կենդանի և պիտի գործե տիրական կերպով աշխարհի և կյանքի մեջ, իր խոսքը համարձակ կերպով ըսելով և իր գործոն նպաստը բերելով ոգեկան ու բարոյական հրամայականներու հաղթանակին համար»:

Հայոց Հայրապետի այցելությունը Ժենև միստամանակ գեղեցիկ առիթ հանդիսացավ արտասանված բազմ ճառերի և ելույթների մեջ հայ Եկեղեցու, Մայր Աթոռ ս. Էջմիածնի, նրա կանոնական, հայ մշակույթի և հայ ժողովրդի հոգևոր, իմացական արժեքների և ազգային բարեհաճությանց մասին անվերապահ և անկեղծ հոգածության և սիրո արտահայտություններին:

Հուլիսի 12-ին Ժենևի կանոնական Պետական խորհրդի նախագահ Լեոնը Շավանը Կառավարական պալատում ողջունելով Հայոց Հայրապետի այցելությունը, հայտարարում էր.

«Ձեզ ազանց որպես ենք Ձեր անձի մեջ ողջունելով հոգևոր բարձրագույն հեղինակությունը մի փոքր ժողովրդի, որը սիրելի է մեզ այն բանի համար, որ բազում դժվարությունների մեջ գտնվելով և մեծ թվով նեղություններ տալով հանդերձ, կարողացավ է մնացել իր մշակույթին, իր լեզվին և որպես հայ ժողովուրդ ապրելու և գոյատևելու իր կամքին»:

Հուլիսի 14—20 օրերին Վեհափառ Հայրապետը Ժենևում հյուր եղավ շվեյցարական գաղութի ազգային-եկեղեցական մարմինների և ժողովրդի:

Առաջին անգամ էր, որ Հայոց Հայրապետը այցելում էր Լեմանի ափերի վրա ապրող իր հոգևոր զավակներին:

Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելության առիթով, Ցվեյցարիայի հայ համայնքը ապրեց հոգևոր ուրախության, ազգային հպարտության բարձր ու անմոռանալի օրեր:

Ցվեյցարիայի հայ համայնքը, որպես հարգեալ հովվություն, ենթակա է Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակության:

Հայ համայնքի պատմությունը շատ հին չէ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո, Ցվեյցարիան նույնպես իր դռները և սիրտը բաց արեց Եղեռնից մազապուրծ հայ որբերի առաջ, որոնք ժենևյան հարազատներ Երկնքի տակ ազնիվ ապրելակերպի, գուրգուրանքի և պաշտպանության գտնելով մեծացան, տուն-տեղ կազմեցին և պիտանի բարեքաջիներ դարձան երկրի և տեղի ժողովրդի համար:

Այսօր Ցվեյցարիայում ապրում են շուրջ 700 հայեր՝ հատատված հիմնականում Ժենևում և Ցյուրիխում: Համայնքը ղեկավարում է գաղութային բնտրյալ մարմինը: Շատով կավարտվի Ժենևի հայոց եկեղեցու շինությունը, որի շուրջ կհամախմբվի ավելի սերտորեն համայնքը՝ ապրելու համար իր պապերի հավատքով և ազգային սրբությունների ոգով:

Թվով փոքր, բայց պտղով ու զգացմունքներով մեծ ու հարուստ Ցվեյցարիայի հայ համայնքը ամենաջերմ գուրգուրանքով ընդունեց իր Հայրապետի շնորհաբեր այցելությունը:

Մի ամբողջ շաբաթ տևական խանդավառության օրեր եղան Ցվեյցարիայի և հարևան երկրներից՝ Ֆրանսիայից, Իտալիայից, Ավստրիայից, Բելգիայից, Գերմանիայից, Անգլիայից այս առթիվ ժամանած բազմաթիվ հայերի համար:

Հուլիսի 14-ին՝ ուրբաթ օրը, Հարգ Հայրապետի պատվին տրված համայնքային ճաշկերույթի առթիվ, հայրապետական ընդունելության մարմնի նախագահ Կարապետ Կազազյան, թարգմանը հանդիսանալով համայնքի սրտիկան սիրո, երախտագիտության զգացմունքներին, հայրապետական օրհնաբեր այցելության առթիվ ասում է.

«Դարերու ամբողջ պատմություն մը կուգա անցի մեր Հայրապետի անձով: Այս երկրի հարազատ ժողովուրդը և պետական անձնավորությունները հասկացան, թե ի՞նչ է ս. Էջմիածինը... Յուրաքանչյուր հայ մինչև ո՞ր կրնա երթալ, երբ իրեն հետ ունի հայրենի ճիրանակությունները և իր Հայրապետի բարությունը»:

Ժենևի գաղութային վարչության նախագահ Գարբ Փիլիպոսյանի ողջույնի, երախտագիտության խոսքերը նույնպես սրտա-

հոյզ էին, ջերմ, իրավ հայկական:

«Դուք մեր մեջն եք, Ձերդ Սրբություն, Դուք մեր հայրենի կենդանի պատգամն եք, հայ հավատքի և ոգեկան ուժի կենդանի խորհրդանշանը...

Ս. Էջմիածնից ճառագայթող հոգեկան ուժի շնորհիվ է, որ հակառակ մութ ուժերի միաբանության դարերի ընթացքում հայ ժողովուրդը հաղթական դուրս է եկել իր բոլոր փորձություններից և կարողացել է ցույց տալ ամբողջ աշխարհին իր հավատի մեծությունը, իր իմացական-բարոյական արժանիքները:

Դուք Ձեզ հետ բերում եք շունչը մեր հայրենիքի, օրհնությունը Մայր Աթոռ ս. Էջմիածնի... Մենք այլևս օտարներ չենք զգում մեզ օտար հողի վրա և ոչ էլ լքված ու մերկ, այլ հարուստ ու երջանիկ»:

Հայոց Հայրապետը ահա այսպիսի եկեղեցասեր ու հայրենանվեր հայ համայնքին անձամբ Իր օրհնությունը տալու մտադրություն էր ունենում ու վերադառնում էր Մայր Աթոռ առավել լիցքավորված Իր ժողովրդի ջինջ սիրով ու անձնվեր պաշտամունքով, նաև միջեկեղեցական շրջանակներում ևս բարձր պահած հայ հավատքի դրոշը և հայ եկեղեցու սուրբ անունը՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորության և օրհնության ներքո:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԻՏԵՎԼՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎ

ՄԵԿՆՈՒՄ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդունելով Եկեղեցիների միաշխարհային խորհրդի ընդհանուր բարեփոխիչ **դոկտ. Է. Բելկի** սիրալիր հրավերը, որպես պաշտոնական այցելություն տալ Բելգիա ու անձամբ տանել Հայց. առաք. եկեղեցու գլխավոր կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնի ողջույնները Եկեղեցիների միաշխարհային խորհրդի կենտրոնին:

Այս առթիվ Գր. Ա. Օձոբյան ուղևորության ծրագրին մեջ էր նաև առաջին անգամ լինելով հայրապետական իր ներկայությամբ մեծարել Բելգիայի հյուրընկալ հողի վրա ապրող իր հոգևոր զավակներին, նրանց բաշխելով հովվական ս. Էջմիածնի կենարար օրհնություններն ու իր ողջույնները:

Հուլիսի 6-ին՝ հինգշաբթի. Վեհափառ Հայրապետը առավոտյան ստաջնորդվում է Մայր տաճար, որ իր աղոթքը կատարելուց հետո մեկնում է օդանավակայան:

Գր. Ա. Օձոբյանը բարի ճանապարհ մաղթելու համար այստեղ են եկել Մայր Աթոռի միաբանությունը, Հեռագույն հոգևոր խորհրդի անդամները, վանքի պաշտոնեությունը, Հայաբնակ թեմական, Եկեղեցական խորհուրդների անդամները ու բահանայից դասը:

Վեհափառ Հայրապետին ճանապարհում է նաև Հայկական ԽՍՀ Միհիթարեանների սովետական ներկայացուցիչ նոյ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Ս. Հովհաննիսյանը:**

Փարիզ 9-ին ինքնաթիռը բարձրանում է օդ և ուղղություն վերցնում դեպի Մոսկվա:

Այս ուղևորության ժամանակ Վեհափառ Հայրապետին ընկերակցում են որպես պատվիրակության մեջտեղ անդամներ Մայր տաճարի խոտարարապետ և Հեռագույն հոգևոր խորհրդի ատենապետ **գեր. տ. Հայկազուն արք. Արբրահամյանը,** Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ **տ. Ներսիսի արք. Մանուկյանը,** ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ **տ. Թորգոմ եպս. Մանուկյանը,** Վիեննայի հայոց հոգևոր հովիվ **տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը** և հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. **Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը:**

Փարիզ 12-ին Վեհափառ Հայրապետը ժամանում է Մոսկվա: Վնուկովոյի օդանավակայանում Գր. Ա. Օձոբյանը դիմավորում են Ռուսաստանի հայոց առաջնորդ և Մոսկվայի հոգևոր հովիվ գեր. տ. **Պարգև եպս. Գևորգյանը,** եկեղեցական խորհրդի անդամները և այլ անձինք:

Հայոց Հայրապետին դիմավորում է նաև ԽՍՀՄ Միհիթարեանների սովետի ներկայացուցիչ գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Պ. Մակարյանը:**

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Հուլիս 10-ին՝ երկուշաբթի, առավոտյան Մոսկվայի Շերեմետևոյի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին և նրա շքախմբի անդամներին դեպի Փարիզ—Ժնև ճանապարհում են տ. Պարգև եպիսկոպոսը, Մոսկվայի հայոց ս. Հարություն եկեղեցու հոգևորականության և եկեղեցական խորհրդի անդամները:

Հայոց Հայրապետին ճանապարհում են նաև Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Մակարցևը և այլ պաշտոնական անձինք:

Ինքնաթիռը երեք ժամվա ապահով և հանգիստ թռիչքից հետո իջնում է Փարիզի Բուրժե օդանավակայանը:

Հայոց Հայրապետին դիմավորելու համար օդանավակայան էր փութացել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ գեր. տ. **Սերովբե արքեպ. Մանուկյանի** գլխավորությամբ, մի պատգամավորություն, որի կազմումն էին Ալեքսանդրիայի հայոց առաջնորդական փոխանորդ տ. **Զավեն եպս. Ճշչինյանը, տ. Գյուտ ծ. վրդ. Նագգաշյանը,** տ. **Վաչե** և տ. **Հայկասեր** վարդապետները, տ. **Պարգև** և տ. **Մեսրոպ** քահանա հայրերը, Փարիզի և Շրջ. կրոնական ընկերակցության վարչության և հոգաբարձության անդամները՝ գլխավորությամբ **Ն. Ֆրենկյանի, Ս. Քարյանի** և **Ա. Օհանյանի,** մամուլի, ռադիոյի ներկայացուցիչներ և հոծ բազմություն՝ շուրջ 150 հոգի:

Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում են նաև ֆրանսիական իշխանության ներկայացուցիչները և Ֆրանսիայում սովետական դեսպանատան հայ ներկայացուցիչ **Մարատ Խարազյանը:**

Ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքերից և մի փոքր հանգստից հետո, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է հանդիսավորությամբ և Իր պաշտոնական ուղեկիցներով դեպի Օռլիի Հիլդոն հյուրանոցը, ուր սեղմ շրջանակի մեջ, ի պատիվ Իրեն, ճաշկերույթ է կազմակերպվում, որին մասնակցում են բոլոր ներկա հոգևորականները, վարչության անդամները:

Այստեղ Հայոց Հայրապետին ողջունելու են եկել նաև անվանի բյուզանդագետ պրոֆ. **օր. Սիրարփի Տեր-Ներսեսյանը** և տիկ. **Մարթա Տիարպեքիրյանը՝** Արգենտինայից:

Օդանավակայան էր եկել նաև այդ օրերին գաստրոլներով Ֆրանսիայում գտնվող անվանի երգահան **Արամ Խաչատրյանը,** Հայոց Հայրապետին ողջերթ մաղթելու:

Ընդունելությունը անցնում է ջերմ, սրտագին մթնոլորտում:

Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը ճաշկերույթի ընթացքում բայի գալուստ է մաղթում Հայոց Հայրապետին՝ հանուն ֆրանսահայության եկեղեցական, ազգային վարչությանց, կազմակերպությունների և բովանդակ ժողովրդի: Խանդավառ ելույթով Վեհափառ Հայրապետին ողջունում է նաև Ս. Քարյանը՝ հանուն վարչությանց:

Վերջում շնորհակալության և օրհնության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը՝ հայտնելով, որ Ինքը Ժնև է մեկնում որպես հյուրը Եկեղեցիների համաշխարհային խորհրդին հուլիսի 11—13-ը՝ և ապա Ժնեվի հայ համայնքին՝ ամսի 18—20-ը:

Ընդունելության վերջում Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլոր սեղանակիցներին և նրանց միջոցով՝ Իր բոլոր զավակներին:

Հիլդոն հյուրանոցում Իրեն հատկացված մասնավոր մի հարկաբաժնում կարճ հանգստից հետո, Վեհափառ Հայրապետը շարունակում է Իր ճանապարհը դեպի Ժնև՝ Իր շքախմբի անդամներով, որոնց թվումն էին տ. Հայկազուն և տ. Սերովբե արքեպիսկոպոսները, տ. Զավեն եպիսկոպոսը և տ. Ներսես ծ. վարդապետը:

Ֆրանսահայության ներկայացուցիչները Օռլիի միջազգային օդանավակայանում բարի ճանապարհ են մաղթում Հայոց Հայրապետին:

ԺԱՄԱՆՈՒՄ ԺՆԵՎ

Օդանավը երեկոյան ժամը 17.25-ին հասնում է Ժնևի Կոռնավեն օդանավակայանը:

Ամենայն Հայոց Հայրապետը օդանավակայանում դիմավորվում է պետական անձնավորությունների հատուկ ընդունելության բացառիկ պատիվներով, որպես թանկագին հյուրը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի:

Հայոց Հայրապետին անձամբ դիմավորում են Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. **Է. Ս. Բլեյկը,** Ժնևի կանտոնի պրոտոկոլի և ինֆորմացիայի պետ **Պոլ Կոտրետը,**

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՊՈՍՏ. Ի. Ս. ԲԼԵՑՈՒՆ Ի. Հ. Ա.-Ի ՊԱՏԱՍԻՆ ԱՌԱՋ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պատասխանատու բարտուղարները, **Ա. Գ. Միթելի**, հայր **Պոլ Վերկեզ**, **Քրիստոֆոր Հինգ**, հայր **Ժորժ Գեցիս** և պետական հաստատությունների ներկայացուցիչներ:

Հայոց Հայրապետի մամանակը Ժենև ոտքդնում է նաև Ազգերի Կազմակերպության մոտ տվյալական կառավարության արտակարգ դեսպանության ներկայացուցիչ **Սերգեյ Կոտրին**:

Ն. Ս. Օծության ներկայ են եղել հայրապետական բնդունելության մասնակցի առաջնորդ **Կարապետ Ղազարյանը**, Ժենևի գաղութային վարչության նախագահ **Ծարլ Փիլիպոսյանը**, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայ եկեղեցու մշտական ներկայացուցիչ և Վիեննայի հայոց հոգևոր հովիվ **տ. Մեսրոպ Ծ. վրդ. Գրիգորյանը**, Մարսելի հայոց թեմի հայրապետական պատվիրակի փոխանորդ **տ. Հակոբ Եպս. Վարդանյանը**, Մայր Աթոռի միաբան **տ. Արսեն վրդ. Բերբերյանը**, Ժենևի հայ եկեղեցու հոգաբարձության նախագահ **Պերճ Յագուպյանը**, Եվրոպայի գանձագահ երկրներից ժամանած գաղութային վարչությանց ներկայացուցիչները, այդ թվում Միլանոյից՝ եկեղեցական վարչության նախագահ **Երվանդ Հյուսիսյանը** և գաղութային վարչության նախագահ **Ստեփան Սրապյանը**, բանաստեղծ **Արամայիս Սրապյանը**, Վիեննայից՝ եկեղեցական վարչության նախագահ **Սարգիս Կարապետյանը**, Հունաստանից՝ **Առարկ Պետրոսյանը** և **Գաբրիել Պզտիկյանը**, մամուլի ներկայացուցիչներ, այլ ազգայիններ և ժողովրդական հոծ բազմություն, շուրջ 400 հոգի:

Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով խանգարված և ջերմ արտահայտությունների ու ծափերի տարափի ներքո հանդիսավորապես առաջնորդվում է դահլիճ, որտեղ պատրաստված հյուրերի դասերը, որ բարձրաստիճան և ոչ բարձրաստիճան հոգևորականներ են վերանակոնը:

Փոքր դադարից հետո ինքնաշարժների հանդիսավոր շքերթը, պատրաստված դասերի ջոկատի առաջնորդությամբ, ուղղվում է դեպի Ժենևի Ինտերկոնտինենտալ պալատական հյուրանոցը, ուր Հայոց Հայրապետին հատկացվում է «Դեսպանական» կոչված շքեղ հարկաբաժինը՝ 19-րդ հարկում:

Վեհափառ Հայրապետի Ժենև ժամանման առթիվ հայ թղթակիցներից մեկը նշում է. «Վեհափառը, զոր բանիցս տեսնելու բախտը ունեցած էի, դարձյալ գինքը գտա առույգ և կենսունակ: Միայն ոտքերակները, որոնք ցանցում էին Իր լուսափայլ դեմքին վրա և մազերում մեջ, հիմա սկսեր էին ավելի աչքառու դառնալ, տարիների հոլովույթին հետ: Օր նոր, հոգ նոր: Բայց ինչ փույթ, Նա Իր հայրագորով թևերը տարածած է սիրտի բոլոր Իր զավակներու վրա: Հոգ չէ, ոմանք «անտակ դրդիներ» ըլլան»: («Ժամանակ», հոլիս 11):

Հուլիս 10-ին, երեկոյան, հյուրանոցի Իր հարկաբաժնում Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել մի շարք այցելություններ և ապնոմենտ երեկոյան Իրեն սեղանակից դարձրեց բացի Իր շքախմբի անդամներից, Ժենևի գաղութային վարչության նախագահ Ծարլ Փիլիպոսյանին, հայրապետական ընդունելության մասնակցի առաջնորդ Կարապետ Ղազարյանին, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի բարտուղար հայր Պոլ Վերկեզին:

Ն այն երեկոյան, ավելի ուշ, հյուրանոցի նկատ Հայոց Հայրապետին ողջունելու հանում Կ. Պոլսի հունաց տիեզերական պատրիարք Ն. Սրբություն Աթանագորասի՝ **տ. Էմիլիանոս միտրոպոլիտը**, որը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մոտ մշտական ներկայացուցիչն է Կ. Պոլսի հունաց պատրիարքության:

Տեղի ունեցավ ջերմ զրույց, ուր նշվեց Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Կ. Պոլսի տիեզերական պատրիարքական Աթոռի գահակալների միջև սիրոր առած և օրավուր զարգացող, ամրապնդող բրիստոնեական եղբայրության ոգին:

ԱՆՅԱ ԺԵՆԵՎԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիսի 11-ին՝ երեքշաբթի. Ամբողջ պաշտոնական այցելության առաջին օրն է: Ամսաթվի մասը 10.30-ին Վեհափառ Հայրապետը շքախմբով Իր առաջին պաշտոնական այցելությունը տվեց Ժենևում, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնին:

Պալատի նախասենյակում առաջ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր բարտուղար դոկտ. Է. Կ. Պեյկը, շրջապատված խորհրդի պատասխանատու ներկայացուցիչներով և նախկին ընդհանուր բարտուղար դոկտ. Վիսսերտ Հուֆտի, ջերմորեն դիմավորեց Վեհափառ Հայոց Հայրապետին և առաջնորդեց պաշտոնական նիստերասենյակ:

Մայր Հայոց Հայրապետն ու ընդհանուր բարտուղարը շուրջ մեկ ու կես ժամ առանձին տեսակցություն ունեցան Հայց. առաք.

եկեղեցու վերաբերյալ հարցերի և Եկեղեցիների հաշտարարային խորհրդի ընդհանուր ծրագրի և գործունեության նպատակ խնդիրների շուրջ:

Այս առաջին խորհրդակցությունից հետո ընդհանուր քարտուղարը իր ընդունելության հյուրասրահում պաշտոնական ողջունեց Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը ժնևում, Եկեղեցիների հաշտարարային խորհրդի հարկի տակ և Ն. Ս. Օծությանը ներկայացրեց Եկեղեցիների հաշտարարային խորհրդի հինգ բաժանմունքների տնօրեններին, որոնք նույնպես, իրենց հերթին, բարի գալուստ մաղթեցին Հայոց Հայրապետին և շքախմբի անդամներին:

Այնուհետև Հայոց Հայրապետը Եկեղեցիների հաշտարարային խորհրդի կենտրոնին տված Իր այցելության առթիվ հանդես եկավ ֆրանսերեն հետևյալ ճառով.

Գերապատիվ դոկտ. Էոթեն Բելեկ

Խոր հուզումով կուգանք Ձեզի բերելու Աստուծո օրհնությունը և Մեր քրիստոնեական ողջույնը սուրբ Էջմիածնեն, բազմադարյան կեդրոնը Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցիին, ուր չորրորդ դարու սկիզբին հաստատվեցավ Հայոց Հայրապետության Աթոռը, ս. Գրիգորի ձեռամբ, Լուսավորիչը Մեծ Հայաստանի:

Սուրբ Էջմիածնի հիմնարկութենեն 1668 տարի հետո, այսօր 11 հուլիս 1967-ին, հարյուր և երեսուներորդ հայոց կաթողիկոսին կվիճակվի սույն ողջույնը բերելու Ձեզի, և Ձեր միջոցավ աշխարհի բոլոր քրիստոնյա քույր եկեղեցիներուն:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին հնագույն եկեղեցիներեն մին է, մեկ ու անբաժանելի, իբր միակ գլուխ ունենալով Ամենայն Հայոց կաթողիկոսը ի սուրբ Էջմիածին, սուրբ գրական Հայաստանի հողի վրա, հայ ազգային պետության ծոցին մեջ: Հայ եկեղեցական մյուս Աթոռները՝ Երուսաղեմի, Անթիլիասի-Կիլիկիո և Կ. Պոլսո, միայն տեղական բնույթ և իշխանություն ունին, և բոլորը կգտնվին Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր վերին հեղինակության ներքև:

Մեր եկեղեցվո մեկությունը և ներքին միությունը պայմանավորված է և երաշխավորված Մայր Աթոռ սուրբ Էջմիածնով, իբրև գլուխ հայ եկեղեցվո:

Այստեղ Մենք անհրաժեշտ կգտնենք ընդգծել այս իրողությունը, և կսպասենք, որ Եկեղեցիներու հաշտարարային խորհուրդի մեջ, ուղիղ հասկցվին՝ հայոց եկեղեցին և անոր կեդրոնը՝ սուրբ Էջմիածին:

Այս հանգիստավոր պահուն, Մենք կը փորձենք մտածումով հետ երթալ դեպի հեռավոր անցյալը, դեպի քրիստոնեության առաջին չորս դարերը, յեցուն քրիստոնեական հավատքի վավերական վկայություններով ու փայլուն իրագործումներով, երբ բոլոր քրիստոնեական կեդրոնները և հավատացյալները իրենց հոգևոր տեսուչներով կկազմեին մեկ մարմին՝ Քրիստոսի խորհրդավոր ու կենդանի ներկայության ապրումին մեջ, սուրբ հոգւոյ ներշնչմամբ:

Կխոստովանինք թե մենք՝ այսօրվան քրիստոնյաներս, հազիվ թե ի վիճակի ենք՝ ըլլալու և ապրելու առաքելական ժամանակներու քրիստոնյաներու հոգեկան վիճակը:

Մարդկային պայմանեն բխած լինելու և գործելու կերպեր, ժամանակներու հոլովույթով ստեղծված իրադրություններ և իրադարձություններ, հառաջ բերին խոր և բազում փոփոխություններ մարդկային հոգիին և հավաքականություններու գիտակցության և կյանքին մեջ, հետևաբար նաև քրիստոնյաներուն և եկեղեցիներուն մեջ:

Այս պատմական ընթացքը, հայ եկեղեցիին համար կներկայացնե մոտ երկու հազար տարիներու պատմություն մը, տրված ըլլալով որ, ըստ հնագույն աղբյուրներու, ս. Թադեոս և ս. Բարթողիմեոս առաքյալները քարոզեցին սուրբ Ավետարանը Հայաստանի մեջ:

Մեզի կթվի, թե այսօր եկեղեցիներու միության մասին մտածելով, չենք կրնար սպասել պարզապես վերադարձ մը դեպի եկեղեցվո պատմության առաջին դարերը, սակայն ստույգ է նաև, թե մենք բոլորս համակված ենք աստվածահաճո զգացումով մը՝ գործելու քրիստոնեական տիեզերական եղբայրության վերականգնման և ամրապնդման ի խնդիր, վերագտնելու համար զմեզ Քրիստոսի սիրույն և խորհրդավոր մարմնին մեջ:

Բոլոր պատմական եկեղեցիները իրենց սուրբերով, իրենց ավանդություններով, իրենց հոգևոր ժառանգություններով և իրենց մշակույթներով, կկազմեն համաքրիստոնեական տիեզերական ոգեկան հուշարձան մը, որ իր ամբողջությանը մեջ լիությամբ կարտահայտե տիեզերքը Աստուծո խոսքին, ու կճառագայթե փառքը Հիսուսի Քրիստոսի:

Մեր առաջադրանքը պետք է ըլլա ուղիղ հասկնալ պատմությունը և ժառանգությունը մեր եկեղեցիներուն, և ա՛յս հասկացողությամբ կենսագործել մեր եկեղեցիներու միությունը, անցյալի ժառանգությանց համադրության հիմքերուն վրա, նոր ժամանակներու մեր առաջ դրած հարցերու լուծման առաջադրությամբ:

Ինչ չափով որ եկեղեցին կարողանա իր կնքվածքով, իր խոսքով և գործունեությամբ առնչվիլ մեր օրերու մարդկության առաջ դրված հարցերուն, և մասնակցիլ անոնց լուծման գործին, ա՛յն չափով եկեղեցին պի-

տի կոչումնամ իրական դիպոկի մեջ դանդ-վիր աշխարհի հետ, կամ, Մենք պիտի նախ-նեարեինք ըսել՝ Եկեղեցին պիտի կարողանա մնայ և գործել աշխարհի մեջ, աշխարհին հետ:

Իրոք, մեր առաջ դրված են այսոր հոգե-ւոր, բարոյական, դաստիարակչական և ըն-կերային բազում հարցեր: Հստակ կերպով նշանաբեենք բայորս, թե մարդկային աշխարհը մեր դարուն կապրի շրջան մը՝ ոգեկան տագ-նապի, բարոյական անհավասարակշռու-թյան և ընկերային խոր հակասություններու: Մարդոց և ժողովուրդներուն կպակսի հոգե-կան ապահով կոված մը, ստուգություն մը, առաջնորդող լույս մը:

Տագնապի շրջան կանցնէ նաև ինքը Եկե-ղեցին, կրոնական դիտակցությունը և կյան-քը:

Բացառիկ կացություններ կպահանջեն, բացառիկ միջոցառումներ և համարձակ քայ-լեր: Կրոնական կյանքի և հասկացողության հին կաղապարները պետք է վերանայվին և դեմ առ դեմ բերվին մեր դարու իրողու-թյանց, մեր դարու հոգերանության և մեր դարու հրամայականներուն հետ:

Քրիստոսի սուրբ Ավետարանը պետք է սորվինք քարոզել այնպես, ինչպես ան նոր գրված ըլլար, մեր օրերու մարդոց ոգետե-լու համար:

Ահա, զուցե մեծագույն հարցը, որ կդրվի մեր Եկեղեցիներուն առջև, հատկապես Էջ-միածնի շարժման առջև:

Անձամբ Մենք լավատես ենք: Կհավա-տանք, թե Քրիստոսի Ավետարանը համա-զումարն է և կենդանի աղբյուրը ոգեկան մեծ ճշմարտություններուն, որուն պիտի վե-րադարձնա տագնապած մարդը, գտնելու հա-մար իր կյանքի իմաստը, իր բարոյական հավասարակշռությունը, իր մխիթարությու-նը, իր փրկությունը:

Եկեղեցիներու առջև դրված մեծ հարցե-րու շարքին, խիստ այժմեական կնկատենք ընկերային արդարության, ժողովուրդներու ազատության և աշխարհի խաղաղության հարցերը:

Ընկերային արդարություն և օգնություն բոլոր շահագործվածներուն և ճնշվածնե-րուն, օժանդակություն բոլոր տկարներ-ուն, արդարություն և ազատություն բոլոր ազգություններուն, եղբայրություն ժողո-վուրդներուն և խաղաղության պահպանում ամբողջ աշխարհի մեջ, ահա՝ երամայական խնդիրներ, որ կհուզեն մեր ժամանակներու մարդկությունը: Ահա՝ խնդիրներ, որոնք պետք է հուզեն նաև զմեզ, իբրև Եկեղեցիներ-ու ղեկավարներ, եթե իրապես կկամենանք հետու չմնալ աշխարհեն և կյանքեն:

Վերջին տարիներուն, կխոսվի դիալոկի մասին՝ Եկեղեցիի և աշխարհի միջև, կամ ալ բանակռվումով՝ Եկեղեցին ներկա աշխարհի մեջ: Մենք ողջունելի կդտնենք այս նոր ոգին և կհավատանք, որ Քրիստոսի Եկեղեցին պիտի մնա կենդանի և պիտի գործե տիրա-կան կերպով աշխարհի և կյանքի մեջ, իր խոսքը համարձակ կերպով ըսելով և իր գոր-ծոն նպաստը բերելով ոգեկան ու բարոյա-կան հրամայականներու հաղթանակին հա-մար:

Իբրև գլուխ և առաջին սպասավորը Եկե-ղեցիի մը, որ անդամ է Եկեղեցիներու հա-մաշխարհային խորհուրդին, Մենք անհրա-ժեշտ գտանք ընդգծել Մեր այս քանի մը մտածումները:

Արդ, սիրելի դոկտ. Բլեյկ, Մենք կաղո-թենք առ մարդասերը Աստված, որ իր սուրբ Հոգիի շնորհներով առաջնորդե մեզ բոլորս, կատարելու համար իր կամքը երկրի վրա, մարդոց աշխարհին մեջ:

«Հայեսցուք ի զօրագլուխն հաւատոց՝ և ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրախու-թեան որ նմա առաջի կայր, տանձն էառ գխաչն, արհամարհեաց զամօթ, նստաւ ընդ աջմէ աթոռոյն Աստուծոյ» (Երր. ԺԲ. 2):

Հանուն Հայաստանյաց առաքելական սուրբ Եկեղեցիի, Մենք վերստին կողջունենք Ձեզ և Եկեղեցիներու համաշխարհային խոր-հուրդը, կօրհնենք Ձեր աշխատանքը և կր-մաղթենք Ձեզի լիակատար հաջողություն Ձեր առաքելության մեջ:

Սուրբ Հոգին թող մնա Ձեզի միշտ զորա-վիգ ու առաջնորդ. Ամեն:

Հայոց Հայրապետի ճառը ունկնդրվեց խոր-ը տպավորությամբ:

Դ. Ա. Օձությունը Իր ազելության առթիվ, որպես նիշատակ, Եկեղեցիների համաշ-խարհային խորհրդի կենտրոնին նվիրեց՝ Մայր Աթոռիս վարպետ ոսկերիչների ձեռ-քով պատրաստված նոյնական ոճով և նույնը զարդերով բանդակված արծաթյա մի սեղ իսկ ընդհանուր քարտուղար դոկտ. Ք. Ա. Բլեյկին անձնական մի գեղեցիկ արծաթյա ափսե՝ Մայր տաճարի նկարով: Դ. Ա. Օձությունը հատատոր ության առանձին բաժիններին տեղերեններին նույնպես նվիրեց ս. Էջմիածնից բերված հուշանվերներ՝ բոլորն էլ հա արվեստի գործեր:

Հանուն Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և նրա բաժանմունքների, Երևան-տագիտության և շնորհակալության չերմ խոսք ասաց փոխ-քարտուղար հ. Պ. Վերկեզեն՝ շեշտելով Համենայն Հայոց Հայրապետի՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնին տված օրհնաբեր ազդեցության պատմական կարևոր նշանակությունը, երբ պատմության մեջ առաջին անգամ լինելով Հայոց առաջ և սուրբ Եկեղեցու դերապետ

պետը, անձամբ այցելում է Ժնև և արտագին մթնոլորտում խորհրդակցում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ղեկավարության հետ ընդհանուր քրիստոնեական եկեղեցին շահագրգռող այժմեական կարևոր հարցերի շուրջ։ Հ. Պ. Վերկեզեն Հայոց Հայրապետի այցելությունը գնահատում է որպես մի նոր առաջընթաց քայլ էկումենիկ շարժման պատմության մեջ, որը միաժամանակ մեծ հույս է ներշնչում նրա հետագա գործունեության հաջողության ճանապարհի վրա։

Հ. Պ. Վերկեզեն շեշտելուց հետո, որ Հայց. առաքելական եկեղեցին Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ 1927 թվականից սկսած իր մասնակցությունն է բերել Լոզանի և այլ միջազգային եկեղեցական հանդիպումների՝ քաջալեր հանդիսանալով միշտ էկումենիկ շարժման հաջողության, եզրակացնում է իր խոսքը՝ ընդհանուր ծափերի մեջ հաստատելով, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհաբեր ներկայությունը վավերական մի նոր վկայություն է այն բանի, որ Հայց. առաք. եկեղեցին, իր գերագույն պետով, ամուր կանգնել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կողքին՝ էկումենիկ շարժման առաքելության հաջողության համար։

Այցելության պաշտոնական մասի ավարտից հետո Վեհափառ Հայրապետին ողջունում են Եկեղեցիների համաշխարհային խորհրդի բաժանմունքների ղեկավարները, այդ թվում՝ «Հավատ և կարգի» բաժանմունքից՝ ղեկավար՝ հ. Վ. Բորովոյ և հ. Կրոսկուրդ, «Եկեղեցի և ընկերություն» բաժանմունքից՝ ղեկավար՝ հ. Ռ. Աբրիլիտ և Ա. Վոն Տեմ Բուսխե, «Էկումենիկ դաստիարակության և երիտասարդական, ուսանող և կանանց համագործակցություն» բաժանմունքից՝ ղեկավար՝ հ. Պ. Վերկեզե, Մ. Ռ. Եունկ և հ. Վ. Կորզևսկի, «Առաքելություն և ավետարանչություն» բաժանմունքից՝ ղեկավար՝ հ. Փ. Պոտտեր, «Միջեկեղեցական օգնություն» բաժանմունքից՝ ղեկավար՝ դոկտ. Ճ. Արբուտնոտ և ուրիշներ։

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գրադարանը, տպարանը այցելելուց հետո, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում լավագույն տպավորություններով և շուրջ երկու ժամ տևող այցելությունից հետո վերադառնում Ցյուրանցի Իր հարկաբաժինը, ուր բարեհաճում է ընդունել մի շարք այցելություններ, որոնց թվում՝ Միլանոյից **Երվանդ Հյուսիսյանի** այցելությունը և ապա հայրապետական ընդունելության մարմնի ատենապետ **Կարապետ Ղազարյանի։**

Հուլիսի 11-ին, ժամը 18-ին, Նյու-Յորքից Ժնև է ժամանում ԱՄՆ-ի Արևելյան թեմի հայոց առաջնորդ **տ. Թորգոմ եպս. Մանուկյանը**՝ որպես հայրապետական շքախմբի անդամ։ Տ. Թորգոմ եպիսկոպոսին ընկերակցում էր Գանատայի հայոց հոգևոր հովիվ **տ. Վաչե վրդ. Հովսեփյանը։**

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԺՆԵՎԻ ՍԵՆ ԺԵՐՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Ծրագրի համաձայն, երեկոյան ժամը 16.30-ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է Ժնևի հին կաթոլիկների Սեն Ժերմեն եկեղեցին, ուր ընդունվում է հանդիսավոր կերպով՝ զանգահարությամբ և եկեղեցական երգեհոնի նվագակցությամբ։

Տաճարում Հայոց Հայրապետին ջերմորեն ողջունում և բարի գալուստ են մաղթում հոգևոր հովիվ Ռիխտերիխը, եկեղեցու վարչության նախագահ Ճ. Պոմանը, սինոդի նախագահ Ալլեն և այլ անձինք։ Ճ. Պոմանը բացատրություններ է տալիս Սեն Ժերմեն եկեղեցու շինության, ճարտարապետական կառուցվածքի մասին։ Եկեղեցին կառուցվել է ԺԴ դարից։ 1873 թվականից ի վեր այն պատկանում է Ժնևի հին կաթոլիկների համայնքին։ Եկեղեցին Սեն Ժերմեն դ՝ Օկսերի անունով է կոչվել, որը հայտնի եպիսկոպոս է եղել Ը դարում և վախճանվել է 448 թվականին։

Սեն Ժերմեն եկեղեցին հաճախ բարյացակամորեն տրամադրվում է Ժնևի հայոց, հայկական ծեսով սրբազան արարողություններ կատարելու համար։

Հայոց Հայրապետը ջերմ գոհունակություն է հայտնում այս հաճելի այցելության առիթով և մանավանդ մասնավոր շնորհակալություն՝ հանուն Ժնևի հայ համայնքի, Սեն Ժերմեն եկեղեցու վարչության և հոգևոր ղեկավարների, նրանց ուշադիր և ճշմարտապես քրիստոնեական վերաբերմունքի համար, որ եկեղեցու դռները հաճախ բացվում են նաև Ժնևի հայերի հոգևոր կարիքների և աղոթքների համար։

Իր խոսքի վերջում Հայոց Հայրապետը օրհնում է բոլոր ներկաներին։

Խմբովին երգված «Ուրախ լեր, ս. եկեղեցի» շարականից հետո, Ժնևում հին կաթոլիկների Սեն Ժերմեն եկեղեցում Հայոց Հայրապետի այցելությունն ավարտվում է Նրա «Պահպանիչ»-ով։

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԺԵՆԵՎԻ ԵՎԱՆԳԵԼԱԿԱՆ ԵՂԵՂԵՑԻՈՅ ՆՈՐԵՐՈՒ ՊԵՏՐՈՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ

Հոկտեմբերի 11-ի ծրագրում նախատեսվել էր Հայոց Հայրապետի պաշտոնական այցելությունը Եկեղեցու մեծ 17-ին հիմն բաղաքում գտնվող ազգային ս. Պետրոս Մայր տաճարը:

Հայոց Հայրապետը Իր պատասխան խոսքի մեջ գոհունակություն ու շնորհակալություն է հայտնում ս. Պետրոս Մայր տաճար Իր այցելության առթիվ ցույց տրված ջերմ ընդունելության և ողջույնի արտասանված խոսքերի համար: Այնուհետև Հայոց Հայրապետը բոլոր ներկաներին հաղորդում է Մայր

Բողոքական Եկեղեցու չորս բարեկարգիչները՝ Կալվին, Ֆարել, Բեզա և Նոքս

Որոշյալ պահին ժամանում է Վեհափառ Հայրապետը և ընդունվում ս. Պետրոս Եկեղեցու հոգևորականության և Եկեղեցիների հանգանակային խորհրդի անդամների կողմից: Եկեղեցու մուտքի առաջ կազմվում է եկեղեցական թափոր, որը հանդիսավորությամբ և եկեղեցու երգեհոնի նվագակցությամբ Հայոց Հայրապետին առաջնորդում է Մայր տաճար, որ հավաքվել է հայ և օտար հավատացյալների հոծ բազմություն՝ շուրջ 4000 հոգի: Տաճարում ներկա են Ժենևի բոլոր եկեղեցական հանգանակների հոգևոր պետերն ու ներկայացուցիչները, պետության պրոտոկոլի սեղանը, կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչը, հրեից բարեկամները:

Հայոց Հայրապետի մուտքը տաճար ջերմորեն ողջունում է Ժենևի Եկեղեցիների էկումենիկ հանգանակության նախագահ, վերապատվելի Ժան Ժորժ Բորելը, Դ. Ս. Օձոյան ամենի մեջ ներկայում ս. Փադեռսի և ս. Բարթողիմեոսի, ս. Գր. Լուսավորչի առաքելաշավիղ և արժանավոր հաջորդին, աշխարհում առաջին քրիստոնյա երկրի և եկեղեցու պետի՝ Ամենայն Հայոց Հայրապետին:

Որոշ ելույթներ ունենալուց հետո Հայոց Հայրապետը Իր գրավոր ողջույնով ողջունում է Հայոց Հայրապետին, այնուհետև պատմական է անում Ժենևի բողոքական ազգային եկեղեցու ծագման և գործունեության, միաժամանակ ուրախությունը հայտնելով հանուն բոլանդակ աշխարհի բողոքականության Ամենայն Հայոց Հայրապետի պատմական այս տաճարին տված օրհնաբեր այցելության առիթով:

Հայոց Հայրապետը Իր պատասխան խոսքի մեջ գոհունակություն ու շնորհակալություն է հայտնում ս. Պետրոս Մայր տաճար Իր այցելության առթիվ ցույց տրված ջերմ ընդունելության և ողջույնի արտասանված խոսքերի համար: Այնուհետև Հայոց Հայրապետը բոլոր ներկաներին հաղորդում է Մայր

Աթոռ ս. Էջմիածնի օրհնությունները ու Իր ողջույնները՝ խոսելով նաև ս. Էջմիածնի կատարած հոգևոր, մշակութային, ազգային, եկեղեցական պատմական առաքելության և դերի մասին հավատացյալ հայ ժողովրդի կյանքում:

Հայրապետական խոսքի ավարտին բոլոր ներկաները միաբերան և միասիրտ արտասանում են տերունական աղոթքը՝ «Հայր մեր»-ը, յուրաքանչյուրը իր մայրենի լեզվով:

Ս. Պետրոս Մայր տաճարում արարողությունն ավարտվում է Հայոց Հայրապետի օրհնությամբ և «Պահպանիչ»-ով, մինչ հայ հոգևորականների դասը երգում է միաբերան, տ. Լեոնեն վարդապետի դեկավարությամբ «Տէ՛ր, կեցո՛ դու զհայս» մաղթերգը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը վերապատվելի հայր Դոմինիսեի առաջնորդությամբ այցելում է Մայր տաճար, ուստ մեծ բարեկարգիչ Կուլվինի պատմական Աթոռը ու տաճարին կից ժողովարանը, ուր Հայոց Հայրապետի պատվին ընդունելություն էր կազմակերպված: Հյուրասիրության ընթացքում Վեհափառ Հայրապետը, ի հիշատակ Իր այցելության, ս. Պետրոս եկեղեցուն նվիրում է հայկական մի խաչքար, իսկ եկեղեցու պաշտոնեությանը՝ հուշանվերներ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հուլիսի 11-ին, երեկոյան ժամը 19.30-ին, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը և ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Կ. Բլեյկը, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, պաշտոնական ընդունելություն է կազմակերպում Ժենևի «Լա Պերլ Դյու Լակ» ճաշարանում:

Ընդունելության ներկա են Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամներ տ. Հայկազուն և տ. Սերովբե արքեպիսկոպոսները, տ. Զգոն, տ. Թորգոմ, տ. Հակոբ, տ. Զավեն եպիսկոպոսները, տ. Մեսրոպ, տ. Ներսես և տ. Վաչե ծայրագույն վարդապետները, տ. Արսեն, տ. Օշին, տ. Վազգեն, տ. Տարոն վարդապետները, գաղութային վարչության նախագահ Շարլ Փիլիպոսյանը, ընդունելության մարմնի ատենապետ Կարապետ Ղազարյանը, Ժենևի եկեղեցու հոգաբարձության նախագահ Պերճ Ցագուպյանը: Հայոց Հայրապետի պատվին տրված պաշտոնական ընդունելության կառավարական հյուրերը գլխավորում է անձամբ Ժենևի կանտոնի Պետական խորհրդի նախագահ Անդրե Շավանը, ընկերակցությամբ փոխնախագահ Ֆ. Պեյրոտի, պետական խորհրդական Վ. Դոնգեի, Հ. Շմիտի և պրոտոկոլի ու ինֆորմացիայի պետ Պ. Կոտրետի:

Մաշկերույթին ներկա էին նաև Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հինգ բաժանմունքների տնօրենները՝ նախկին ընդհանուր քարտուղար դոկտ. Վիսսերտ Հուֆտը, դոկտ. Նոլդե, քարտուղարներ հ. Պ. Վերկեզեն, Ֆ. Պոտտերը, Դոմինիկ Միշելին, Մոսկվայի ռուսաց պատրիարքարանի ներկայացուցիչ Վլադիմիր եպիսկոպոսը, Արքիտեքտ, Նորդհամ, Աբրեհատ և ուրիշ դեկավար աշխատողներ:

Հրավիրյալների թվում էին Ժենևի ազգային բողոքական եկեղեցիների հոգևոր դեկավարներ, հռոմեական եկեղեցու ընդհանուր քարտուղար Մարսել Բոնիֆասի եպիսկոպոսը, ռաբունապետ Ալեքս. Սաֆրանը և ուրիշներ:

Ընդունելության ժամանակ առաջինը Հայոց Հայրապետին ողջունում է դոկտ. Է. Կ. Բլեյկը: Այնուհետև Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մոտ Կ. Պոլսի հունական տիեզերական պատրիարք Ն. Ս. Աթանագորասի մնայուն ներկայացուցիչ Սալարրի միտրոպոլիտ Էմիլիանոսը խոսք առնելով ասում է.

«Ձերդ Սրբություն, Ձեր այցելությունը շատ մեծ կարևորություն ունի ամբողջ էկումենիկ շարժման համար: Ձեր բարձր անձնավորության մեջ մենք տեսնում ու ողջունում ենք կենդանի ավանդությունը և միստիկ ոգեկանությունը հայոց սուրբ եկեղեցու:

Այսօր աշխարհն ու եկեղեցիները արագ շարժման մեջ են: Ձեզ կարող ենք վստահեցնել, որ այս էկումենիկ ընտանիքում անշահախնդիր տրամադրությամբ, սիրով և անկեղծությամբ փորձում ենք ամեն ինչ անել՝ կատարելու համար Փրկչի կամքը, որի ցանկությունն է. «Զի եղիցին ամենեքեան մի»:

Այս ուրախ առիթով լիազորվել եմ Ն. Ս. Կ. Պոլսի տիեզերական պատրիարքի անունից Ձեզ հայտնելու իր ամենախորին եղբայրական զգացմունքները, սերն ու հարգանքը: Մեր երկու եկեղեցիներն էլ ենթարկվել են ծայրահեղ տառապանքների: Այդ տառապանքները մեզ միացնում են. և մեր միությունը կնքվել է մեր սրբերի և մեր մարտիրոսների արյամբ:

Ն. Ս. Աթանագորաս պատրիարքը ցանկանում է, որ այս առթիվ Ձեզ հայտնեմ իր

ԱՆՄԱՀԻՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՀԱՎԱՔԱԿԱՆ ՑԱՐԹՄԱՆ ԽՈՒՐՀՈՒՐԴԱՆՈՑԱՆԸ

մշտական գանկությունը՝ ամեն ինչ կատարելու, որպեսզի մեր երկու եկեղեցիները սահմանվեն ներծնեան միմյանց և միասին բոլոր քրիստոնյա բոլոր եկեղեցիների հետ ներդաշնակ և հաստատակամ առաջնորդություն»:

Իսկ առաջ հանս հռոմեական կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչ տ. Մարսել Բոնիֆասի եպիսկոպոսը և շեշտեց կաթոլիկ Եկեղեցու քրիստոնեական կապը Հայոց առաքելական եկեղեցու և նրա դարավոր կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնի հետ, որտեղ ս. Թադեոսի և ս. Բարթողիմեոսի օրերից մինչև այսօր հնատած հայոց հայրապետները ներշնչվել են Աստվածածնի լույսով, վառ են պահել Արևելքի քրիստոնեական եկեղեցու կյանքը և մինչև այսօր հայոց հայրապետությունը այդ իմաստով հանդիսանում է գեղեցիկ օրինակ այլ քրիստոնեական եկեղեցիների համար:

Իր խոսքի վերջում Բոնիֆասի եպիսկոպոսը նշեց է հայտնում, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը սպասվում է նոր ուղիներ կրացի քրիստոնեական եկեղեցիների հարաբերության և համագործակցության համար:

Վերջում խոսք առավ Հայոց Հայրապետը՝ շեշտելով հայ եկեղեցու կենտրոն, աստվածակառույց ս. Էջմիածնի հայրապետության քրիստոնեական առաքելության կարևոր դերը, որ այս օրերին էլ հատազգային, հայկական շրջանակներից դուրս ևս աշխատում է և իր գործունեությունն է բերում էկումենիկ շարժման և աշխարհի խաղաղության գործին:

Իր խոսքի վերջում Հայոց Հայրապետը Իր ջերմ շնորհակալությունն ու գոհունակությունը հայտնեց Իր պատվին կազմակերպված ընդունելության համար, որտեղ մի անգամ ևս հաստատվեց քրիստոնեական եկեղեցիների համագործակցության անհրաժեշտությունը, առօրյա աշխարհի հրատապ հարցերի լուծման համար, Աստծու փառքին և քրիստոնեական վեհ գաղափարների հաղթանակի համար:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՕՏԵՎԻՍԿ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՏԻԿԻՆ Զ. ՄԻՐՈՆՈՎԱՅԻՆ

Հուլիսի 12-ին՝ չորեքշաբթի. Այսօր առավոտյան ժամը 10-ին, այցելության ծրագրի համաձայն, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Իր շրախմբով՝ Մոսկվայի Սովետական Միության ներկայացուցչության դեկավար տիկին Զ. Միրոնովային:

Ն. Ս. Օծությանը ընկերակցում էին նաև Մոսկվայի գաղութային վարչության ատենապետ Հարությունյանը, հայրապետական ընդունելության մասնակից ատենապետ Կարապետ Ղազարյանը, Միլանի գաղութային վարչության ատենապետ Ստեփան Սրապյանը, Փարիզի «Աշխարհ» թերթի խմբագիր Ալեքսիս Ալեքսանյանը և Վիեննայի գաղութային վարչության ատենապետ Սարգիս Կարապետյանը:

Վեհարանատան մուտքի առաջ Հայոց Հայրապետը դիմավորվում է ջերմորեն տիկին Միրոնովայի և այլ պաշտոնական անձանց կողմից և ասպնջականվում նստարանի, որտեղ տիկին դեսպանուհին ողջունում է Հայոց Հայրապետին՝ շեշտելով, որ ինքը ծանոթ է Ն. Սրբության Ի Հայց. առաք. եկեղեցու խաղաղության ի հեռուստ կատարած աշխատանքներին:

Տիկին Միրոնովան անդրադառնալով Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գործունեությանը, շեշտում է, որ սիրալիր հարաբերություն գոյություն ունի իրենց միջև, և թե Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը աշխատում է եկեղեցիների և ժողովուրդների հարաբերությունների բարելավման գործի համար: Իր ողջույնի խոսքի վերջում տիկին Միրոնովան հաջողություն է մաղթում Հայոց Հայրապետի գործերին և Նրա առաքելությունը Աստծում՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մոտ որպես նրա պաշտոնական հյուր:

Վեհափառ Հայրապետը Իր պատասխան խոսքում շնորհակալություն է հայտնում ջերմ ընդունելության և բարի մաղթանքների համար, նշելով, որ Ինքը եկել է անձամբ Ժնև՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնը, ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Ի. Բելգի հրավերով, միջեկեղեցական հարաբերությունների էլ ավելի սերտացման միջոցների շուրջ խորհրդակցելու և աշխատելու համար՝ աշխարհի խաղաղության և եկեղեցիների համագործակցության: Հաճելի զրույցի ընթացքում տեղի է ունենում նաև հյուրասիրություն:

Ավարտելու Հայոց Հայրապետը հրաժեշտ է առնում լավագույն տպավորություններով ինքնում Սովետական Միության մնայուն ներկայացուցչության պետ տիկին Միրոնովայից:

ԺԱՄԱՆԱԿԻՆ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ՝ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Հուլիսի 12-ին՝ չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին Ժնև է ժամանում Կ. Պոլսի հայոց ամենապատիվ տ. **Շնորհք սրբազան պատրիարքը՝** ընկերակցությամբ գավազանակիր տ. Խաչատուր աբեղա Սարաճյանի, ողջունելու համար Ամենայն Հայոց Հայրապետին:

Օդանավակայանում սրբազան պատրիարք հորը դիմավորում են և բարի գալուստ մաղթում, հանուն Վեհափառ Հայրապետի, տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, տ. Զավեն եպս. Շնչինյանը, տ. Գյուտ, տ. Օշին, տ. Արսեն վարդապետները, Կարապետ Ղազարյանը, Երվանդ Հյուսիսյանը, Ստեփան Սրապյանը: Սրբազան պատրիարքը առաջնորդվում է Ռեգինա հյուրանոցը:

Այնուհետև ժամը 12-ին սրբազան պատրիարք հայրը առաջնորդվում է Ինտերկոնտինենտալ հյուրանոց՝ Վեհափառ Հայրապետի մոտ:

Ամենայն Հայոց Հայրապետի և Թուրքիայի հայոց պատրիարքի ողջագուրումն ու զրույցը տեղի է ունենում ջերմ և արտագին մթնոլորտում:

Սրբազան պատրիարքը Ն. Ս. Օծությանն է ներկայացնում իր և իր հոտի որդիական սերն ու հավատարմությունը՝ Ժնևում Հայոց Հայրապետի առաքելության հաջողության արտաբուխ մաղթանքներով:

Կեսօրվա ճաշի սեղանի շուրջ տեղի է ունենում ջերմ զրույց Վեհափառ Հայրապետի, սրբազան պատրիարք հոր և հայրապետական շքախմբի անդամների ու ծանոթ ազգայինների միջև:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԺՆԵՎԻ ԿԱՆՏՈՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՆՈՐԻՆ ՎԱՍԵՄՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԵ ՇԱՎԱՆԻՆ

Հուլիսի 12-ին՝ չորեքշաբթի, առավոտյան ժամը 12.30-ին Վեհափառ Հայրապետը քաղաքապետարանում պաշտոնական այցելություն է տալիս Ժնևի կանտոնի Պետական խորհրդի մեծարգո նախագահ Անդրե Շավանին:

Ն. Ս. Օծությանն ընկերակցում էին տ. Հայկազուն, տ. Սերովբե, տ. Թորգոմ սրբազանները, տ. Մեսրոպ, տ. Ներսես, տ. Արսեն վարդապետները, Ժնևի գաղութահայ վարչության նախագահ Շարլ Փիլիպոսյանը, հայրապետական ընդունելության մարմնի ատենապետ Կարապետ Ղազարյանը, Ժնևի եկեղեցու հոգաբարձության նախագահ Պերճ Յագուպյանը:

Քաղաքապետարանի մուտքի առաջ պրոտոկոլի պետ Փ. Կոտտրե դիմավորում է Հայոց Հայրապետին և շքախմբի անդամներին ու առաջնորդում Պետական խորհրդի նիստերի դահլիճը, ուր Հայոց Հայրապետին ողջունում է Ժնևի կանտոնի Պետական խորհրդի նախագահ, Նորին Վսեմություն Անդրե Շավանը՝ շրջապատված պետական բարձրաստիճան անձնավորություններով, որոնց թվում՝ փոխ-նախագահ Ֆ. Պեյրո, խորհրդականներ Վ. Դոնզե, Հ. Ծմիտ, կանտոնի ընդհանուր դատախազ Ժ. Եկեր, Գերագույն խորհրդի նախագահ Ֆ. Ռեվակլիե, Ժնևի քաղաքագլուխ Ժ. Պ. Բուենսո, Ժնևի համալսարանի ռեկտոր Դ. Վան Բերխեմ, աստվածաբանական ֆակուլտետի դեկան Ռ. Մարտին Աշար, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և Ժնևի եկեղեցական տարբեր համայնքների ներկայացուցիչները՝ գլխավորությամբ դոկտ. Է. Կ. Բլեյկի:

Մեծահարգ պրն. նախագահը ջերմորեն բարի գալուստ է մաղթում Ամենայն Հայոց Հայրապետին՝ ողջունելով Նրա օրհնաբեր ներկայությունը Ժնևի կանտոնի Պետական խորհրդի պատվո դահլիճում:

Նախագահ Անդրե Շավանը Հայոց Հայրապետի այցելությունը համարում է թանկագին մի շնորհ և այնուհետև խոսում է հայ ժողովրդի հոգևոր, բարոյական զորեղ նկարագրի, քրիստոնեական առաքինությունների և համամարդկային պատմությանը և մշակույթին նրա բերած մեծ նպաստի մասին, ասելով.

«Հափազանց ուրախ ենք Ձեր անձի մեջ ողջունելով հոգևոր բարձրագույն հեղինակությունը մի փոքր ժողովրդի, որը սիրելի է մեզ այն բանի համար, որ բազում դժվարությունների մեջ գտնվելով և մեծ թվով նահատակներ տալով հանդերձ կապված է մնացել իր մշակույթին, իր լեզվին և որպես հայ ժողովուրդ գոյատևելու իր կամքին:

Հայ ժողովրդի և Շվեյցարիայի ու Ժնևի կանտոնի միջև կապերը եղել են երբեմն սերտ: Դեռ անցյալ տարի հիշեցնում էինք, որ կես դար առաջ, երբ ամենադաժան աղետներից մեկը պատուհասեց ձեր ժողովրդ-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԻՆԵՎԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԱՆՊԻՐԵ ՆԱՎԱՆԸ

ալին, մենք արեցինք այն, ինչ որ այն ժամանակ հնարավոր եղավ անել՝ փրկելու և շարունակաբար՝ մեզ մոտ պատսպարելու համար Հայաստանի զանազան մասերից ոմանց: Պետք է միաժամանակ ասել, որ դրա համար մենք մեզ վարձատրված զգացինք, որովհետև Երևանի ազգ ոչ երեխաների ժամի հասարակության մեջ ներգրավված չափահասներ դատելով, իրենց դրսևորելին որպես արժանավոր անձնավորություններ:

Երեկ երեկոյան, էկումենիկ կենտրոնի շրջանակում, ես լսեցի Ձերդ Սրբության այն խոսքը, թե ամեն ինչ սեր է: Մենք մտածում ենք, որ ժողովուրդների միջև սիրո ի նպաստ այս վկայությունը, որ գալիս է ցեղերի և կրոնների կարծեցյալ տարբերությունների պատճառով ստեղծված հակամարտություններից՝ այնքան տառապած մի ժողովրդի ներկայացուցչի կողմից, մեծ արժեք է ներկայացնում, և որ այդ սերը, հուսով ենք, մեզ կառաջնորդի, ոչ շատ հեռավոր ապագայում, այնպիսի մի կացության, երբ ժողովուրդների միջև խաղաղությունը, որին ձգտում ենք մենք բոլորս, կլինի ոչ թե պարզապես պատերազմի բացակայություն, այլ փոխադարձ հարգանք, փոխադարձ սեր, փոխադարձ հասկացողություն»:

Հայոց Հայրապետը Իր պատասխան ոլորտնի խոսքի մեջ ասում է.

Մեծարգո տիար Նախագահ,

Մենք փառք կուտանք Ամենակալին, որ հրավերով Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Կ. Բլեյկին, ուրախությունը ունեցանք այցելելու այս պատմական քաղաքը՝ Ծնն:

Մենք իբրև գերագույն պետը հայ Եկեղեցվո, եկած ենք այցելություն տալու էկումենիկ շարժման կենտրոնին, շարժում, որուն կրմասնակցի մեր Եկեղեցին՝ Հայց. առաք. Եկեղեցին:

Այս հանդիսավոր պահուն Մենք պիտի կամենայինք շատ անկեղծորեն հայտնել Ձերդ գերազանցության, թե Մեր քայլերը ուղղեցինք դեպի ձեր երկիրը բացառիկ ջերմ զգացմունքով և հետաքրքրությամբ, զոր պիտի տեսնեինք առաջին անգամ ըլլալով Մեր կյանքին մեջ և որու մասին այնքան շատ լավ բան լսած էինք ու կարդացած:

Ծնն քաղաքը բնական գեղեցկության զմայելի կոթող մը է և միաժամանակ քրիստոնեական հավատքի լուսավոր մեկ ժառանգությունը ու նաև բարոյական իդեալներու օրրան մը՝ կենսագործված լիությամբ ձեր առնական ու տաղանդավոր ժողովուրդի կողմն, իր պատմության ընթացքին:

Ծնն կխորհրդանշե այսօր բոլորիս համար խաղաղության ոգին և եղբայրությունը՝ ժողովուրդներու: Անհավասիկ ավելի բան կես դարն ի վեր Ծնն քաղաքի անունը համազոր է խաղաղության գաղափարին:

Մենք այստեղ գալով Արարատի սուրբ գրական Երկրեն՝ մեր Հայաստանեն, և քրիստոնեական մեր հավատքի բազմադարյան կենտրոն սուրբ Էջմիածնեն, Մեծարգո Նախագահ, կբերենք Մեր հայրապետական ողջույնը և աստվածային օրհնությունը ձեր Երկրին և ձեր քաղաքին, սրտաբուխ մաղթանքով, որ Տերը պահպանե զանոնք միշտ բարգավաճ ու ծաղկյալ, և որ Ծնյան խաղաղության ոգին հաղթականորեն ճառագայթե ամբողջ աշխարհի վրա: Այսպիսով Ծնը հավատարիմ մարդասիրական իր մեծ ավանդությունները, կատարած պիտի ըլլա նաև քրիստոնեական առաքելություն մը, վասն Քրիստոսի Ավետարանը սիրո և խաղաղության երկնային պատգամ մը է՝ ուղղված մարդկային աշխարհին:

Այս շատ հանդիսավոր առթիվ Մենք չենք կրնար մոռանալ մարդասիրական վերաբերմունքը ձեր երկրին և ի մասնավորի՝ ձեր քաղաքին, հայ ժողովուրդի դժբախտ գավակներուն հանդեպ, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին օսմանյան կառավարության կողմն հայերու դեմ կազմակերպված ջարդի օրերուն երբ հրաշքով ազատված հայ երեխաներ ձեր երկրին մեջ գտան ապաստան և գուրգուրանք՝ ձեր ազնիվ ժողովուրդի կողմն:

Երախտապարտ սրտով Մենք կներկայացնենք այսօր Ձեզի հայ ժողովուրդի և Եկեղեցվո շնորհակալությունը՝ ուղղված Զվիցերիային և հատկապես Ծնն քաղաքին: Անհավասիկ պատմական վկայություն մը ևս՝ Ծնևի ոգեկան մեծ ճառագայթումին:

Թող Աստված միշտ լույսի ու խաղաղության մեջ պահպանե և օրհնե ձեր երկիրն ու ժողովուրդը և Ձերդ Գերազանցության առաքելությունը սպասկ լիակատար հաջողությամբ:

Ակնհայտորեն մեծարգո նախագահը հրավիրում է Հայոց Հայրապետին և բոլոր ներկաներին ընդունելության մի այլ դահլիճ, ուր տեղի է ունենում ջերմ հյուրասիրություն: Ակնհայտեղ Հայոց Հայրապետի, շրջիմարի ամբասների և պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև տեղի է ունենում զրույց՝ սրտագին և գլխարթ մթնոլորտում:

Ծնևի կանտոնի պրն. նախագահը և պետական անձնավորությունները զրույցի ընթացքում գնահատանքի, մեծարանքի խոսքեր են ուղղում հայ եկեղեցու և մենաստանի գլխավորի հասցեին՝ գովելով հայ ժողովրդի քրիստոնեական բարեմասնությունները, նրա ձեռնարկությունն ու աշխատա-

սիրությունը և հյուրընկալ այս երկրի հանդեպ նրանց նվիրվածությունը:

Հրաժեշտի պահին Վեհափառ Հայրապետը, որպես հուշ Իր այցելության, մեծարգո պրն. Նախագահին նվիրում է ս. Էջմիածնի Մայր տաճարի նկարով արծաթյա մի մեծ ափսե՝ հայկական ոսկերչական արվեստի լավագույն նվերներով զարդարված, և այլ հուշանվերներ՝ նախագահի պաշտոնակիցներին:

Այցելության վերջում ոսկյա հուշամատյանի մեջ արձանագրելուց հետո, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Ժենևի կանտոնի Պետական խորհրդի նախագահից, ներկա անձնավորություններից:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲՈՍՍԵԻ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Նույն օրը, հետ միջօրեի ժամը 14.30-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի քարտուղար հայր Պոլ Վերկեզեի առաջնորդությամբ այցելում է Բոսսեի էկումենիկ ինստիտուտը:

Ինստիտուտի մուտքի առաջ հաստատության տնօրեն դոկտ. Նիկոս Ա. Նիսիոտիս շրջապատված դասախոսական կազմով, պաշտոնեությամբ և ուսանողությամբ, ջերմորեն դիմավորում է Հայոց Հայրապետին՝ ողջունելով նրա շնորհաբեր ներկայությունը կրոնական կրթական այդ հաստատության կամարների ներքո:

Դոկտ. Ն. Ա. Նիսիոտիսի առաջնորդությամբ Հայոց Հայրապետը այցելում է ինստիտուտի բոլոր բաժանմունքները և ապա ընդունելության սրահում հարգելի տնօրենը հաստատության ղեկավարության, դասախոսական կազմին և ուսանողությանն է ներկայացնում Ն. Ս. Օծությանը՝ պատմական ծանոթություններ տալով Մայր Աթոռ ս. Էջմիածնի, Հայց. առաք. եկեղեցու մասին, շեշտելով, որ կրթական սույն հաստատության մեջ սովորում են Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ բոլոր եկեղեցիների պատկանող ուսանողներ և ուսանողուհիներ, որոնք էկումենիկ ոգով պատրաստվում են դառնալու համար սպասավորները քրիստոնեական ընդհանուր եկեղեցու և տարածողները՝ քրիստոնեական քաղաքակրթության:

Խոսք է առնում նաև Հայոց Հայրապետը՝ Իր օրհնության և գոհունակության խոսքը հայտնելու Բոսսեի էկումենիկ ինստիտուտի հարգելի տնօրեն դոկտ. Ն. Ա. Նիսիոտիսին, ողջ դասախոսական կազմին, պաշտոնեությանը և ուսանողությանը, որոնց նվիրյալ և անձնազոհ աշխատանքով վարավորվում է քրիստոնեական ընդհանուր եկեղեցին:

Հայոց Հայրապետը ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ողջույնը հաղորդելով կրթական սույն մեծ հաստատությանը, նշում է նման հոգևոր ճեմարանների և աստվածաբանական ինստիտուտների դերն ու նշանակությունը քրիստոնեական եկեղեցու ծառայության և առաքելության ճանապարհի վրա՝ արդի աշխարհի պայմանների մեջ:

Հայոց Հայրապետը շեշտում է, որ այդ գիտակցությամբ և ոգով է, որ Մայր Աթոռի հրիտասարդ միաբանություններից տ. Արսեն վարդապետը եկել է այստեղ իր աստվածաբանական ուսումը խորացնելու, սերտացնելու կապը Մայր Աթոռի և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի երիտասարդական կազմակերպությունների հետ:

Հայոց Հայրապետը հույս է հայտնում, որ հետ այսու էլ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանից ուսանողներ պիտի գան Բոսսեի այս էկումենիկ ինստիտուտ՝ սովորելու, ձեռք-ձեռքի տված այլ հավատավոր երիտասարդների հետ, պատրաստվելու համար քրիստոնեական եկեղեցու վաղվա մեծ առաքելությանը:

Իր խոսքի ավարտին Հայոց Հայրապետը հոգեշունչ պատգամ տալով կրոնական այս հաստատության ղեկավարությանը և ուսանողությանը, նորանոր հաջողություններ մաղթեց նրանց աստվածահաճո, սրբազան ծառայության գործում:

Հանդիպումն ավարտվում է Հայոց Հայրապետի օրհնությամբ:

Վեհափառ Հայրապետը Իր այցելության առիթով Բոսսեի էկումենիկ ինստիտուտին է նվիրում Հայաստանի հոգևոր և մշակութային կենտրոններից մեկի՝ Սանահին վանքի յուղաներկ նկարը, որը մի ժամանակ եղել է նաև Մագիստրոսի ճեմարանը, իսկ հաստատության տնօրեն դոկտ. Ն. Ա. Նիսիոտիսին՝ արծաթյա մի խաչքար, պաշտոնեությանը և ուսանողությանը՝ այլ հուշանվերներ՝ հայ ճարտարապետության և մանրանկարչության նմուշներից:

Այնուհետև տիկին Նիսիոտիսը իր ընտանեկան հարկի տակ ողջունում և հյուրընկալում է Հայոց Հայրապետին, շքախմբի անդամներին՝ ջերմ ու մտերմիկ մթնոլորտի մեջ:

Երեկոյան ժամը 16.30-ին Վեհափառ Հայրապետը օրհնելով Բոսսեի էկումենիկ ինստիտուտի տնօրեն դոկտ. Ն. Ա. Նիսիոտիսի ընտանեկան հարկը, հրաժեշտ է առնում:

Երեկոյան ժամը 17-ին, նիստերացոյի Իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել Շվեյցարիայի հնոստատեսի պատվիրակությանը:

Տեղի է ունենում հարցազրույց Մայր Աթոռ ս. Էջմիածնի, Հայց. եկեղեցու պատմության, եկեղեցիների համաշխարհային խորհրդի հարցերի հետ Մայր Աթոռ ս. Էջմիածնի հարաբերությունների և կրոնական այլ հարցերի շուրջ:

Նույն օրը, երեկոյան, ավելի ուշ, շվեյցարական հնոստատեսի կողմից հաղորդվում է Ամենայն Հայոց Հայրապետի հետ տեղի ունեցած հարցազրույցը:

Դոկտ. Վիսսերտ Հուֆտը և քրոջքական եկեղեցու ներկայացուցիչները ս. պատարագի պահին

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅԱՆ

Երեկոյան ժամը 20-ին, հաճում Վեհափառ Հայրապետի, Ինտերկոնտինենտալ հյուրանոցի շքեղ հաշառումում, ի պատիվ եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Ռ. Բելգի և համատեղության այլ ղեկավար անձնավորությունների, կազմակերպվում է պաշտոնական ընդունելություն:

Հյուրերի թվում էին ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Ռ. Բելգը, դոկտ. Վիսսերտ Հուֆտը, դոկտ. Նոլտեն, միտրոպոլիտ Էմիլիանոսը, Վլադիմիր եպիսկոպոսը, հայր Պոլ Վերկեզեն, Ֆ. Պոտերը, դոկտ. Ռ. Արբուտնոտը, Ա. Դոմինիկ Միխելին և ուրիշներ:

Ընդունելությանը ներկա էին նաև ամենապատիվ տ. Ծնորհք արքեպս. պատրիարք հայրը, տ. Հայկազուն, տ. Սերովբե, տ. Զգոն, տ. Հակոբ, տ. Զարեհ, տ. Թորգոմ արքեպսկոպոսները, տ. Անորոպ, տ. Նեբրոն, տ. Օշին, տ. Գառնիկ, տ. Վազգեն, տ. Արամ, տ. Տարոն վարդապետները, Երևանի Հյուսիսայինը և Ս. Սրապյանը (Միլանոյից), ինչ-

պես նաև ներկայացուցիչները Ժենևի հայ համայնքի, որոնց թվում՝ Շարլ Փիլիպոսյանը, Կարապետ Ղազարյանը, Պերճ Յագուպյանը, Սարգիս Վարժապետյանը և այլ ազգայիններ:

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը:

Այնուհետև սեղանների շուրջ ստեղծվում է քրիստոնեական եղբայրության քաղցր ոգով օծուն, ջերմ ու անմիջական մթնոլորտ:

Վեհափառ Հայրապետը ողջունում է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Կ. Բլեյկին, հետևյալ խոսքերով.

Այս սքանչելի քաղաքին մեջ, շրջապատված ձեզմով, ղեկավարներ և ներկայացուցիչներ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի, ամեն օր և ամեն ժամ կունենանք նոր ուրախություններ, նոր հոգեկան մխիթարություններ:

Ճշմարտապես շատ գոհ ենք, որ եկանք ձեզ մոտ և այս պահուս անգամ մը ևս երջանիկ ենք զձեզ ունենալով Մեր կողքին, այս սիրո սեղանի շուրջ: Մեր այս ուրախությունները սկիզբ առին, գերապատիվ դոկտ. Բլեյկ, Ձեր եղբայրական հրավերովը, որու համար ու նաև Ձեր չափազանց ջերմ համակրանքի արտահայտություններուն համար ընդունեցեք Մեր անկեղծ սրտեն բխած շնորհակալությունները:

Գալով Ժենև և անձամբ հանդիպելով միջեկեղեցական էկումենիկ շարժման բոլոր ղեկավարներուն և ծանոթանալով այս շարժման կենտրոնի կազմակերպության ու անոր ծավալած աշխատանքներուն, Մեր մեջ առավել ամրացավ գնահատանքի զգացումը դեպի Ձեր առաքելությունը:

Սիրելի դոկտ. Բլեյկ և հարգելի Հոգևոր Եղբայրներ, ընդունեցեք այս առթիվ ևս հայ եկեղեցվո և Հայոց Հայրապետի շնորհավորանքի և գնահատանքի խոսքը Ձեր բոլոր իրագործումներուն համար՝ ի փառս Աստուծոյ և ի կատարումն երկրի վրա մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի պատվիրաններուն: Ձեզի հետ է Մեր համակրանքը, Մեր քաջալերանքը և Մեր օրհնությունը:

Այս պահուս Մենք տակավին կգտնվինք երկու սքանչելի տպավորություններուն ներքև: Առաջինը կվերաբերի Մեր այցելության Ժենև քաղաքի և կանտոնի նախագահ, Նորին Գերազանցություն Անդրե Շավանի պալատը, ուր վայելեցինք մեծարգո Նախագահի ոչ միայն սիրալիր ընդունելությունը, այլ մանավանդ հոգեկան մխիթարություն ունեցանք լսելու իր սրտի ջերմ խոսքը դեպի մեր ս. եկեղեցին և դեպի հայ ժողովուրդն ու անոր բազմադարյան մշակույթը: Մենք երախտապարտ ենք այս բոլորի համար Ժենևի պետական բարձր իշխանության և միշտ պիտի մնանք աղոթող Զվիցերիոյ խաղաղության ու անսասանության և զվիցերական աշխատասեր և մեծահոգի ժողովրդի բարօրության և երջանկության համար:

Այսօր, հետ միջօրեի, սքանչելի տպավորություններով վերադարձանք նաև Բոսսե՝ ուսումնական հաստատութենեն: Տեսանք օրինակելի կազմակերպությունը, կարգն ու կանոնը և մանավանդ քրիստոնեական մաքուր ոգին, որով կապրի և կառաջնորդվի այն ձեռնհաս, կորովի տնօրեն Նիսիոտիսի կողմե, հավատավոր հոգի մը և միտք մը լուսավոր, որուն արդար է վստահիլ դաստիարակությունը մեր հոգևոր սպասավորներու նոր սերունդներուն: Մենք ուրախ ենք, որ Բոսսեի մեջ կուսանի այժմ Էջմիածնի միաբանության երիտասարդ անդամներեն մին՝ հ. Արսենը, և Մեր ցանկությունն է, որպեսզի նաև հետագային ուրիշ հայ երիտասարդ հոգևորականներ գան Բոսսե՝ կատարելագործելու համար իրենց աստվածաբանական ուսումը և հաղորդակից ըլլալու համար էկումենիկ շարժման ոգիին:

Այս պահուս հույժ հաճելի է Մեզի ողջունել ներկայությունը շատ համակրելի և բոլորի կողմե սիրված, նախկին ընդհանուր քարտուղար դոկտ. Վիսսերտ Հուֆտին և մաղթել իրեն արնշատություն, որպեսզի շարունակե իր թանկագին նպաստը բերել էկումենիկ աստվածահաճո շարժումին: Արևելյան հին ավանդություն մը կըսե՝ եթե կուզես տարիով ապահովվիլ՝ բրինձ ցանե, եթե կուզես տասը տարիով ապահովվիլ՝ ծառ տնկե, եթե կուզես հարյուր տարիով ապահովվիլ՝ մարդ պատրաստե: Արդ, սիրելի սեղանակիցներ, Մենք ևս կըղձանք ու կտքնինք ապահովել մեր եկեղեցվո կյանքը, անոր կենդանությունը ներկայի և ապագայի համար և, հետևաբար, Մեր ալ առջև կորվի արժանավոր հոգևորականներ պատրաստելու հրամայականը: Նպատակը իրագործելու ճանապարհի վրա Մեզի կրնա օգնել նաև Բոսսեի հաստատությունը: Հաջողություն Ձեզի և Մեզի:

Կվերջացնենք Մեր խոսքը՝ աղոթելով, որ Աստված առավել ամրապնդե քրիստոնեական եկեղեցիներու տիեզերական եղբայրությունը, որ Աստված օգնե մեզի առավել սերտացնելու եղբայրական սիրո կապերը և գործակցությունը Հայաստանյայց առաքելական եկեղեցվո և Եկեղեցիներու համաշխարհային խորհրդի և մեր բոլոր քույր եկեղեցիներու միջև:

Շնորհք և խաղաղություն եղիցի ընդ ձեզ ամենն:

Ընդունելության ժամանակ խոսք է առնում նաև դոկտ. Է. Կ. Բլեյկը, որը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և անձամբ իր

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ Ե. Հ. Խ.-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. Է. Կ. ԲԼԵՑԿԸ

ո ըստ-թյունն է, ճայտնում Ամենայն Հայոց Հայրապետի այս սրատմական այցելության և ճանդիպման ճամար այն երջանիկ ճույսով, որ ունեցաւ ամս ևս Հայց. առաք. եկեղեցին ս. Էջմիածնի դեկավարությամբ իր գործուն մասնակցությունն է բերելու Եկեղեցիների ճամաշխարճային խորճրդի գործունեությանը: Դոկտ. Է. Կ. Բլեյկը այս առթիվ ճաշանվերներն է ճանձնում Հայոց Հայրապետին և շքախմբի անդամներին:

Ընդունելության ժամանակ ողջույնի խոսք է ասում նաև Կ. Պոլսի ճայոց ամենապատիվ տ. Ծնորճք սրբազան պատրիարքը, որին ջերմորեն դիմավորում են բոլոր ներկաները:

Ընդունելության վերջում Վեհափառ Հայրապետը ճայկական մանրանկարչության ընտրելագույն էջերից վերարտադրված երկարներ նվիրեց Եկեղեցիների ճամաշխարճային խորճրդի նախկին քարտուղար դոկտ. Վիսսերտ Հուֆտին և Եկեղեցիների ճամաշխարճային խորճրդի մոտ միջազգային ճարաբերությանց բաժանմունքի պետ դոկտ. Նոյդեկին:

Ընդունելությունն ավարտվում է ընդհանուր խանդավառ մթնոլորտում, խմբային նկարված տերունական ապոթով և Վեհափառ Հայրապետի «Պանդանիա»-ով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՍԻՍ ՊԱՀՈՏԱՄՄԻՆՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՏՈՒՑԱՆ ՄԵՋ

Հուլիսի 13-ին՝ հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 8-ին, Մենոմ, Եկեղեցիների ճամաշխարճային խորճրդի մատուռի մեջ տեղի է ունենում կրոնական մասնավոր պաշտամունք՝ ճայկական ծեսով:

Արարողությանը ճանդես է գալիս Վեհափառ Հայրապետը, և որին մասնակցում են Մենոմ գտնվող բոլոր ճայ ճոգևորականները՝ շուրջ 20 վեղարավորներ:

Պաշտամունքին ներկա են նաև տ. Ծնորճք պատրիարքը, Եկեղեցիների ճամաշխարճային խորճրդի ընդճանուր քարտուղար դոկտ. Է. Կ. Բլեյկը, ճատուկ հյուրերը, պաշտոնյաները և ճոծ թվով շվեյցարացի և ճայ ճավատացյալներ:

Պաշտամունքը բաղկանում է ասմունքներից, ս. գրական ընթերցումներից, շարականներից, ճայ եկեղեցու ճատուկ ճատարակաց ապոթքից:

Պաշտամունքի երգեցողության մասը ղեկավարում է տ. Թորգոմ եպիսկոպոսը:

Զատիկվանց ճուգիչ էր պանը, երբ բոլոր ներկաները միաբերան և յուրաքանչյուրն իր լեզվով արտասանում էր նիկիական ճանգանակը և տերունական ապոթքը:

Արարողության ավարտին ՍԱՏՄ-ի ճայոց ուսուցչուհի տ. Թորգոմ եպս. Մանուկյանը ճանդես է գալիս անգլերեն լեզվով մի քարոզով՝ պատմականը անելով ս. Էջմիածնի և շնչակով նրա կատարած նախանձաժամական դերն ու սուրբ առաքելությունը ճայ ժողովրդի կյանքում ճոգևոր, մշակութային, կրթական, լուսավորական շնորճակալ աշխատանքներում:

Ժամը 10-ից մինչև ժամը 12.30-ին Եկեղեցիների ճամաշխարճային խորճրդի կենտրոնում Վեհափառ Հայրապետը և շքախմբի անդամները առանձին-առանձին ճանդիպումներ են ունենում կենտրոնի բոլոր բաժանմունքների դեկավարների ճետ ճանգամանորեն ծանոթանալով բաժանմունքների գործունեությանը, նպատակներին և ճեռանկարային աշխատանքներին:

«Հավատք և կարգ» բաժանմունքի պետ Հ. Վ. Բոլոտոֆ, «Եկեղեցի և բնակչություն» բաժանմունքի պետ Պ. Աբրեխտ, «Հանրային դատարակություն» բաժանմունքի պետ Հ. Պ. Վիրկեզ, «Առաքելություն և ավետարանչություն» բաժանմունքի պետ Ֆ. Պոտտեր և ««Եկեղեցական միջոցներ» բաժանմունքի պետ դոկտ. Ճ. Արբոտնոտ, ողջունելով Հայոց Հայրապետին, առանձին-առանձին ներկայացնում են իրենց գործունեության ընդճանուր պատկերը:

Վեհափառ Հայրապետը բաժանմունքներին այցելելիս ճայրապետական իր բարձր գնաճատանքն էր ներկայացնում կատարված աշխատանքների ճամար, ապագա գործունեության ուղղությամբ մատնանշելով:

Այնուճետև ճյուրասենյակում Վեհափառ Հայրապետի և տ. Ծնորճք սրբազան պատրիարքի միջև տեղի է ունենում զրույց:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԺՆԵՎԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ՊԱԼԱՏ

Ժամը 14.30-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է Ժնևում Միավորված ազգերի պալատը, ուր ընդունվում է ընդհանուր քարտուղարության արտաքին գործերի տնօրեն Ֆլեշերի կողմից:

Ն. Ս. Օծությունը այնուհետև պաշտոնապես առաջնորդվում է Ժնևում Միավորված ազգերի պալատի ընդհանուր տնօրեն Սբինելլիի մոտ, որը ջերմորեն ողջունում է Հայոց Հայրապետի այցելությունը:

Վեհափառ Հայրապետի և պրն. Սբինելլիի միջև տեղի է ունենում զրույց՝ շուրջ կես ժամ, որից հետո Ն. Ս. Օծությունը այցելում է պալատի հարկաբաժինները և հրաժեշտ է առնում՝ օրհնելով աշխատանքները բոլոր նրանց, որոնք աշխատում և տքնում են «վասն խաղաղության ամենայն աշխարհի» և ստորագրում ՍԱԿ-ի ոսկեմատյանի մեջ՝ «Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Հուլիսի 13-ին՝ հինգշաբթի օրը, երեկոյան, ավարտվում է Հայոց Հայրապետի Ժնևում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի տված պաշտոնական այցելությունը: Երեկոյան հյուրանոցի Իր հարկաբաժնում Վեհափառ Հայրապետը տեսակցություն է ունենում լիբանանահայ ծանոթ մտավորական և ազգային գործիչ պրոֆ. Բարունակ Թովմասյանի հետ:

ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ

Հուլիսի 14-ին՝ ուրբաթ. Այսօր Ժնևում Հայոց Հայրապետի Եկեղեցիների համաշխարհային խորհրդին տված պաշտոնական այցելության վերջին օրն է:

Առավոտյան ժամը 10.30-ին Ինտերկոնտինենտալ հյուրանոցի սրահներից մեկում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մամուլի բաժանմունքի կազմակերպությամբ Վեհափառ Հայրապետը մամուլին ասուլիս տվեց, որին ներկա էին շվեյցարական մամուլին տեղեկատվությանց ներկայացուցիչները, ինչպես նաև անգլիական, ֆրանսիական, գերմանական հեռագրական գործակալությունների և գլխավոր թերթերի, այդ թվում՝ Լա Սուիս, Լա տրիբյուն դը Ժնև, Լը Գորրիե, Ժուռնալ դը Ժնև, Ֆեոյլ դը Լոզան, Դեր Ցոնդակ, Գորրիերե դել Դիչինո, Սեն Կալեր Դակբլատ, Լա վի պրոտեստանտ, Դի օստ Ցվայց, Բազլեր Նախրիխտեն, Լա Լիբերտե և հայկական թերթերի թղթակիցներ:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մամուլի ներկայացուցիչը Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացնում է բոլոր թղթակիցներին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը ֆրանսերեն լեզվով շուրջ 20 րոպե տևող ողջույնի Իր ներածական խոսքի մեջ խոսում է Հայց. առաք. եկեղեցու ծագման, առաքելականության, դավանանքի և ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի հիմնադրման. հայ եկեղեցու մասնակցությանը առաջին երեք տիեզերական ժողովներին, հայ եկեղեցու քրիստոնեական դիրքի, Ե դարում հայկական նշանագրերի գյուտով և հայերեն Աստվածաշնչի թարգմանությամբ սկիզբ առած հայ մշակույթի և հայ արվեստի մասին, որոնք զարգացել են քրիստոնեական լույսի և ազգային ավանդության հիման վրա:

Ն. Ս. Օծությունը խոսում է նաև հայ եկեղեցու արդի կացության մասին, շեշտելով, որ Հայց. առաքելական եկեղեցու նվիրապետական Աթոռները ու թեմերը, գտնվում են կանոնական տեսակետից Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր իրավասության ներքո, մեկ եկեղեցի, մեկ նվիրապետություն՝ ինքգրունքի լույսի տակ:

Ն. Ս. Օծությունը Իր ելույթն ավարտում է՝ անդրադառնալով նաև Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գործունեության և առաքելության, շեշտելով, որ հայ եկեղեցին թեև խորհրդի անդամ է 1962 թվականի օգոստոսից, այնուամենայնիվ շարժման առաջին իսկ օրից, երբ դեռ պաշտոնապես չէր կազմակերպված այդ շարժումը, հայ եկեղեցին իր մասնակցությունն էր բերում շարժման:

Այնուհետև Հայոց Հայրապետը բարեհաճում է պատասխանել թղթակիցների հարցերին:

Մամուլի ասուլիսը տևում է շուրջ մեկ ժամ:

Վերջավորության Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մամուլի ներկայացուցիչը Հայոց Հայրապետին շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում կազմակերպված ասուլիսի համար՝ հանուն բոլոր հեռագրական գործակալությանց և թղթակիցների:

Այսօր ցերեկվա ազատ ժամերին Վեհափառ Հայրապետը ընդունում է բազմաթիվ այցելություններ:

Հունիսի 14-ին, Ն. Ս. Օծության նոսիագանության մեծարը գումարվում է եպիսկոպոսական խորհրդակցական ժողովի առաջին նիստը, որին ներկա են լինում տ. Ճնորհք սրբազան պատրիարքը, տ. Հայկազուն, տ. Ներսես առանձնին նոյ եկեղեցու լյանների մեջ կապված մի շարք ուժեղական հարցեր:

Դարձի օրը Վենետիկ Հայրապետը առանձին անուանակցություն է ունենում ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ եպիս-

Ս. Պետրոս, Ժնև

բոլորն արքեպիսկոպոսները, տ. Թորգոմ, տ. Զարեհ, տ. Հակոբ, տ. Զավեն եպիսկոպոսները:

Եպիսկոպոսական խորհրդակցական ժողովի երկրորդ նիստը գումարվում է հունիսի 17-ին, որին մասնակցում է նաև տ. Գենք եպիսկոպոսը:

Եպիսկոպոսական ժողովներում բնեռ-կրոյուն ունեն:

Այնուհետև, ապրելի ուշ, Վենետիկ Հայրապետը բնդունում է ազգերությունը Միլանոյի հայ գաղութի ներկայացուցիչներին, ապ թեմի Երևանի Հյուսիսային, Ստեփան Երասխանի, գոնս. Արզումանյանի, Ղազարյանի, ավագի Սեֆերյանի՝ տ. Զարեհ եպիսկոպոսի գլխավորությամբ:

Ժամը 14-ին Վեհափառ Հայրապետը ընդունում է հունահայ գաղութի ներկայացուցիչներ Գարեգին Պզտիկյանի և Առաքել Պետրոսյանի այցելությունը և ապա Վիեննայի գաղութահայ վարչության նախագահ Սարգիս Կարապետյանի այցելությունը: Երեկոյան Վեհափառ Հայրապետը ընդունում է Միլանոյից ժամանած Հայկ Ղազարոսյանի այցելությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՅՈՒՐՆ Է ԺՆԵՎԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ

Հուլիսի 14-ից սկսվում է Վեհափառ Հայրապետի Ժնև այցելության երկրորդ շրջանը՝ նվիրված ամբողջությամբ հայ համայնքին:

Շվեյցարահայ համայնքը ապրում է ազգային հպարտության, հոգևոր մխիթարության պատմական խանդավառ օրեր՝ շնորհաբեր ներկայությամբ Ամենայն Հայոց Հայրապետի:

Լեմանի ափերի վրա ապրող հայ ժողովրդի ալանդուխտ, թվով փոքր, բայց սրտով ու զգացմունքներով հարուստ համայնքը սիրում, իր ջերմ սրտի մեջ է առնում Հայոց Հայրապետին, որդիական իր հարգանքն ու երախտագիտությունը ընծայաբերելով առ ոտս հայրապետական Աթոռին, նրա արժանավոր գահակալին և Լուսու Մայր ս. Էջմիածնին:

Վեհափառ Հայրապետի գալուց առաջ Ժնև, հայ համայնքի բոլոր կազմակերպությունների մասնակցությամբ և սրտառուչ համագործակցությամբ կազմվել էր հայրապետական ընդունելության մարմին՝ Կարապետ Ղազարյանի ատենապետությամբ և Վահան Վարժապետյանի ատենադպրությամբ: Ընդունելության մարմնի կազմում էին՝ Շվեյցարիայի գաղութային վարչության նախագահ Շարլ Փիլիպոսյանը, Էոժեն Փափազյանը, Սարգիս Սարգսյանը, օր. Արսինե Դայիյանը: Ընդունելության մարմինը հայ մամուլի տված իր հայտարարության մեջ նշում էր, որ «Զվիցերահայ գաղութը բացառիկ բախտը պիտի ունենա հյուրասիրելու իր Հայրապետը շուրջ շաբաթ մը տեվողությամբ»:

Վեհափառ Հայրապետը հուլիսի 14—20-ը Իր շքախմբի անդամներով լինում է թանկագին հյուրը պատվական այս գաղութի՝ վայելելով Իր հարազատ հոգևոր զավակների սրտաբուխ հյուրասիրությունը, սերն ու գորգուրանքը:

Վեհափառ Հայրապետի շքախմբի բոլոր անդամները, ի գլուխ ունենալով ամեն. տ. Շնորհք պատրիարքին, սիրալիր կերպով հյուրասիրվում են Կարապետ Ղազարյանի հոգածությամբ Ռեգինա գեղեցիկ հյուրանոցում:

ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հուլիսի 14-ին՝ ուրբաթ օրը, երեկոյան ժամը 20.30-ին Ինտերկոնտինենտալ հյուրանոցում Ժնևի հայ համայնքի բոլոր կազմակերպությունները, այդ թվում՝ գաղութային վարչությունը, Շվեյցարիայում հայկական միությունը, եկեղեցական հոգաբարձությունը, եկեղեցական շինության կոմիտեն, Եկեղեցասիրաց տիկնանց և երիտասարդաց միությունը և հայրապետական ընդունելության հանձնաժողովը, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպել էին համագաղութային ընդունելություն:

Արդարև, պատմական անմոռանալի օր էր բոլորի և մանավանդ Շվեյցարիայի հայ համայնքի համար, որն առաջին անգամ էր վայելում իր Հայրապետի օրհնաբեր ներկայությունը:

Առավոտյան ժամերին Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունել էր գաղութի ականավոր և պատասխանատու անձնավորություններին, ժնևահայ համայնքի ազգային-եկեղեցական հարցերի շուրջ մտերմիկ տեսակցություն ունենալու և ապա երեկոյան նախագահելու Իր պատվին տրվող ընդունելության:

Ժամը 21-ին ժամանում են Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը, շքախմբի անդամներն ու հյուր բարձրաստիճան հոգևորականները, հյուրերը և տեղ գրավում պատվո սեղանի շուրջ:

Սեղանն օրհնում է Վեհափառ Հայրապետը: Ընդունելության մարմնի ատենապետ Կարապետ Ղազարյանը ողջունելով Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը համագաղութային այս սրտագին մթնոլորտում, ասում է.

ՊՈՀԱՆԻՍ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹԽԵՎՈՒՄ՝ ՕՐՁԱՊԱՏՎԱԾ ՊԱՐԳԵՎԱՏՈՒՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԱՆԵՐՈՎ

«Վեհափառ Տեր, կրնայիք որ Ձերդ Ս. Օծության առջև կպարզվի, անտվոր չէ, քանի որ միշտ ու ամեն տեղ անոր առարկա եք դարձած և ապագայն, սովորական ալ չէ այն իմաստով, որ շաբաթներն ի վեր ալ-կոծվող հայ ոգին ոչ միայն նկատ մոս, միանալու համար զվիցերահայ ոգի մը հայության և լեցնելու այս պահը՝ իր Հայրապետին դիմաց:

Ձերդ Ս. Օծության Ժենև ժամանումը նոր էջ մը կբանա զվիցերահայ գաղութին մեջ, նոր էջ մը անոր համար որ՝ այս երկրի հյուրընկալ ժողովուրդը և պետական անձնավորությունները հասկցան, թե ինչ են ս. Էջմիածինը և անոր Հայրապետը, և թե յուրաքանչյուր հայ մինչև ո՞ր կրնա երթալ, երբ իրեն հետ ունի իր Հայրապետի բարոյական ուժը:

Ահա առթիվ, հանուն ընդունելության մարմնին, ինձի շատ հաճելի պարտականություն կվիճակի հոս, հրապարակավ մեր երախտագիտությունը հայտնել Զվիցերիոյ և մանավանդ Ժենևի ժողովուրդին և պետության, այն ամենաբարձր պատվին համար, որով պատվեցին մեր Հայրապետը»:

Ակնարկեան Ֆրանսերեն լեզվով ճեռնարկ գեղեցիկ ճառով հանդես է գալիս գաղութային մարմնի նախագահ Շարլ Փիլիպոսյանը՝ արտահայտելով շվեյցարահայ գաղութի զգացումները, և խոսելով այն ծրագրերի մասին, որոնք կապված են եկեղեցաշինության և հանգանքի կազմակերպչական ձեռնարկումների հետ:

«Ձերդ Սրբություն,

Դա՝ ավելի հիշատակելի, ավելի հուզումնալից մի օր մի հատ համար, որ միշտ հիշեն: Է. ապրել իր սիրելի հայրենիքից, բան այն, որ գտնվում է, ինչպես մի երազի մեջ՝ ի ներկայության Ձերդ Սրբության, ու որի համար ներկայացնում է և մարմնավորում նրա դարավոր եկեղեցին և մշակույթը:

Դրա եկեղեցին, աշխարհի մեջ ամենաթանկագինը, հրա պատմ:

Դրա եկեղեցին, որի ծոցում ապաստան են գտել իր նախահայրերը՝ իրենց պատմության ամենամռայլ օրերին, և որի սիրույն նրանք հանդատակվել են և իրենց զավակներին ավանդ թողել այն իրոն իրենց ամենաթանկագին ժառանգությունը:

Դրա եկեղեցին, վերջապես, որին ամեն մի հայ պարտական է իր մշակույթը, իր փառքը և իր գոյությունն իսկ, և առանց որի պիտի չլիներ այն, ինչ որ է այսօր:

Այդ օրը եկել է մեզ՝ Զվիցերիայի հայերի համար:

Դուք մեր մեջն եք, Ձերդ Սրբություն, Դուք մեր հայրենիքի կենդանի պատգամն եք: Մենք ամենրկնեցի երջանկությամբ և հուզումով է, որ ապրում ենք այս անմոռանալի րոպեները, մեր սրտերում պահելու ենք խանդաղատանքով, և որոնք լուսավորելու են մեզանից ամեն մեկի ճանապարհը:

Դուք մեր մեջ եք, ավանդապահը կենսաբար այն ուժերի, որոնք պահպանել են մեր ժողովուրդը ամբողջական բնաջնջումից:

Մեր փոքր ժողովուրդը, իր եկեղեցական հայրերի և հայրապետների պայծառատեսությամբը և իմաստությամբը առաջնորդված, կարողացել է ճանաչել իր ոգեկան ուժերը և դրանց միջոցով պաշտպանել իր հավատքը, իր սրբությունները իր ազգն գնով, իր ազատության գնով՝ նախընտրելով մեռնել, քան հրաժարվել իր հոգեկան ձրդտումներից և իր հավատքից:

Այդ հավատքի և ուժի կենդանի խորհրդանիշը Դուք եք, Ձերդ Սրբություն: Ձեզ նվաստ լուսավորված հոգիների շնորհիվ է, որ հայ ժողովուրդը կարողացել է ապրել: Էջմիածնից ճառագայթող հոգեկան ուժի շնորհիվ է, որ, հակառակ մութ ուժերի միարանության, դարերի ընթացքում հայ ժողովուրդը հաղթական դուրս է եկել իր բոլոր փորձություններից ու կարողացել է ցույց տալ ամբողջ աշխարհին իր հավատքի մեծությունը, իր իմացական, բարոյական արժանիքը, ընդհանուրի սքանչացումին և հարգանքին արժանացած լինելու իր իրավունքը:

Զվեյցարիայի մեր գաղութը, գիտակից իր պարտականության և հպարտ՝ իր նախահայրերից իրենց և իրենց զավակներին ավանդ ձգված թանկագին ժառանգությանն, միշտ ջանացել է արժանի լինել իր առաքելության՝ պաշտպանելով իր ազգային առանձնաձը, հոգեկան ու մշակութային արժեքները և անեղծ պահել ստացի առաջ հայ ազգի անունը և պատիվը:

Այսօր մեր գաղութը բոլորում է բարգավաճման մի շրջան. աշխարհի բոլոր կողմերից նոր ուժեր կգան գոյացնելու մեջ շաբաթը, և ազգ առումով ընդլայնում են իր գործունեության հորիզոնները:

Շնորհիվ այդ. Հակոբ Թովմայանի վերանաձնության, իրականացնելու է մեր գաղութի փափագներից մեկը. շուտով մենք ունենալու ենք մեր եկեղեցին՝ կառուցված մեր հայրենիքի դարավոր վանքերի հարատարպետական ոճի համաձայն: Դա պիտի լինի Զվեյցարիայի մեջ, Եվրոպայի կենտրոնին, վկան՝ հայկական հավատքին, բազաբակրթությանն և ճարտարապետական արվեստին:

Մենք հպարտ ենք մեր եկեղեցիով՝ կառուցված Ժենևի մեջ, բայց, որ միշտ եղել է նաև ազգային մշակույթի կենտրոն, որն ապրել է նաև թալանված և տոնական մի կենտրոն՝ շնորհիվ միջազգային

և պետական բազմաթիվ կազմակերպությունների, և կրոնական մի կենտրոն՝ շնորհիվ Եկեղեցիների համաշխարհային խորհրդին:

Սեր եկեղեցու շինությունը նոր եռանդ է տվել գործունեությանը: Ժենևը հայկական մշակույթի կենտրոն դարձնելու գովելի քանկությունը հրապուրել է մեր հոգիները: Ծրագրել ենք թանգարանի ստեղծումը, նույնինքն եկեղեցիի շենքին մեջ, որին նպատակը պիտի լինի՝ օտարներին ծանոթացնել հայկական կրոնական արվեստը: Եվ մենք մեծ հաճույքն ունենք հայտարարելու, որ այս ծրագրին իրականացման համար ոչ միայն իր հայրական օգնությունն է շնորհել մեր արվեստագետ կաթողիկոսը, այլև խոստացել է ս. Էջմիածնի գործնական աջակցությունը արվեստի տարբեր գործերով: Այսպես ուրեմն, առաջին նվերները մեզ գալիս են մայր հայրենիքից՝ կազմելով հիմը և բանալով ճանապարհը վեհանձն նվիրատուների ուշադրախնդիր արարքներին:

Ոչ ոք կարող է անգիտանալ կենսական կարևորությունը մեր կրոնական արվեստին, որ նշավ խանձարուրը և աղբյուր մեր մշակույթին և որ թափ տվեց հայկական արվեստի ծաղկումին:

Շնորհակալություն ենք հայտնում այն բոլոր հայերին, որոնք եկել են մոտիկ կամ հեռավոր երկիրներից և այսօր գտնվում են մեզ հետ՝ բաժնելով մեր ուրախությունը Ժենևի մեջ, Վեհափառ Հայրապետի այցելության առթիվ:

Ձերդ Սրբություն, երբ վերադառնաք ս. Էջմիածին, Ձեզ հետ տարեք մեր ամենաանկեղծ նվիրվածությունը և հավատարմությունը դեպի ս. Էջմիածին, դեպի մեր հայրենիքը, մեր հազարամյա մշակույթը:

Թույլ տվեք, Ձերդ Սրբություն, որ հայկական մշակույթի ի նպաստ մեր ճիգերի հաջողության համար ամենայն հարգանքով խնդրելու Ձեր հայրական օրհնությունը:

Երկա՞ր ապրեք, Վեհափառ Տեր»:

Ճեյնարիան մաս է կազմում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակության: Տ. Սերովբե արքեպիսկոպոսը խոսք առնելով որպես հայրապետական պատվիրակ, ներկայացրեց գաղութը, նրա ազգային, եկեղեցական կազմակերպությունները, համայնքի նվիրվածությունն ու հավատարմությունը դեպի ս. Էջմիածինն ու մեր հոգևոր ավանդությունները, որոնց շոշափելի արտահայտությունը Ժենևի հայոց նորաշեն եկեղեցին է: Սրբազանը իր խոսքի վերջում գաղութի անունից հրավիրեց Հայոց Հայրապետին մի անգամ ևս Ժենև՝ անձամբ օծելու նորաշեն եկեղեցին:

Ժենևի հայ գաղութը ղեկավարվում է գաղութահայ վարչությամբ, որի կազմում են Շարլ Փիլիպպոսյանը (նախագահ), Վանանդ Վարժապետյանը, Արսինե Տայիյանը, Էդմեն Բաբայանը, Սարգիս Սարգսյանը, տիկին Տետելյանը, տիկին Սոնա Ծիզմեջյանը (քարտուղարուհի) և Զաքարյանը (փոխ-նախագահ):

Ժենևի եկեղեցու հոգաբարձությունը ունի հետևյալ կազմը՝ Պերճ Յազդուջյան (նախագահ), տիկին Արմինե Ստակյան, Մուրադյան, Անդրանիկ Կարապետյան:

Իսկ եկեղեցու շինության հանձնախմբի անդամներն են Կրոնիկ Բաբայան, Շարլ Փիլիպպոսյան, Մուրադյան, Սարգիս Սարգսյան: Եկեղեցու շինության բարերարն է Հակոբ Թուխալյանը, որը նվիրել է 100000 դոլար այդ վեհ նպատակի համար:

Տիկնանց եկեղեցասիրաց միության անդամներն են տիկին Մարսելը (նախագահուհի), տիկին Կոտելը (փոխ-նախագահուհի): Իսկ երիտասարդական կազմակերպության գլխավոր ղեկավարներն են Յազմաջյանը (նախագահ), տիկին Սրմաքեշյանը (փոխ-նախագահ):

Ընդունելության վերջում խոսք առավ նաև Վեհափառ Հայրապետը՝ գնահատանքի ու գոհունակության ջերմ խոսքեր ուղղելով գաղութային վարչության նախագահ Շարլ Փիլիպպոսյանին, Ժենևի համայնքի գործերում և նորակառույց եկեղեցու աշխատանքներում նրա հանդես բերած նվիրումի, զոհողության և դեպի ս. Էջմիածին և հայրենի վերածնված երկիրը նրա տածած սիրո և հավատարմության զգացմունքների համար:

Ապա օրհնեց բոլոր ներկաներին՝ թելադրելով, որ յուրաքանչյուրը իր կարողության սահմանների մեջ ծառայի հայ եկեղեցուն և մեր ժողովրդին:

Այս առթիվ Ն. Ս. Օծությունը անդրադարձավ նաև Ժենևում հայ եկեղեցու շինության վրա, որը իրականացվում է նվիրատվությամբ նախկին եգիպտահայ Հակոբ Թուխալյանի: Վեհափառ Հայրապետը օրհնեց նվիրատուին և հաջողություն մաղթեց, որ շուտով ավարտվեն եկեղեցու և հարակից սրահների շինությունը, որպեսզի Ժենևի հայությունը ունենա իր աղոթքի տունը և մշակույթի կենտրոնը:

Վեհափառ Հայրապետը Իր խոսքն ավարտեց սրտառուչ մի կոչով, որպեսզի Ժենևում ապրող յուրաքանչյուր հայ իր մասնակցությունը ու աշխատանքը բերի եկեղեցու պաշտաման, համայնքային աշխատանքներին՝ առաջնորդված միայն և միայն հայ եկեղեցու և մեր ժողովրդի ծառայության իրավ զգացմունքներով:

Ընդունելությունն ավարտվեց Վեհ. Հայրապետի օրհնությամբ և «Պահպանիչ»-ով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Հունիսի 15-ին՝ շաբաթ.

Այս օրը Վեհափառ Հայրապետի համար լցված այցելություններով ծանրաբեռնված մի օր։ Առավոտյան ժամերին հյուրանոցի իր հարկարարանում Վեհափառ Հայրապետը

Երեկոյան ժամը 21-ին Ինտերկոնտինենտալ հյուրանոցի ընդունելության դահլիճ Լիճ հավաքվել սովի բան 500 հոգի՝ եկած Ճվեյցարիայի տարբեր քաղաքներից, Ֆրանսիայից, Իտալիայից, Բելգիայից, Գերմանիայից, Հոլանդիայից, Անգլիայից, Ավստրիայից, ԱՄՆ-ից, Լիբանանից՝ ներկա լինելու ժնևաբնակ հայերի կողմից Հայոց Հայրապետի պատվին կազմակերպված գրական-գեղարվեստական երեկույթին։

Պատվո սեղանի շուրջ տեղ են գրավել Վեհափառ Հայրապետը, տ. Ծնորհք պատրիարքը՝ շրջապատված արքեպիսկոպոսներով, եպիսկոպոսներով, վարդապետներով և ծանոթ ազգային դեմքերով։

Հանդիսության բացումը կատարեց հայրապետական ընդունելության մարմնի ատենապետ Կարապետ Ղազարյանը՝ շեշտելով Դ. Ա. Օծության ժնևյան այցելության պատմական նշանակությունը և Նրա շնորհաբեր ներկայությամբ հայ հանրույթի ծոցում և յուրաքանչյուր հայ մարդու կրծքի տակ ստեղծ-

Սուրբ հաղորդության

ընդունեց բազմաթիվ այցելություններ։

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետին և այցելում Լոնդոնից ժամանած Արգենտինայի Հիմնադրամի նախագահ և Լոնդոնի հայոց ս. Սարգիս եկեղեցու խնամակալության ատենապետ **Սարգիս Քյուրքճյանը։**

Ժամը 12-ին Դ. Ա. Օծությունը ընդունում և այցելությունը ժնևաբնակ գաղութային վարչության նախագահ **Շարլ Փիլիպոսյանի։**

Ժամը 13-ին Վեհափառ Հայրապետին և այցելում Ալեքսանդրիայի հայոց առաջնորդ **տ. Զավեն Եպս. Շնչինյանը։**

Ժամը 14-ին Վեհափառ Հայրապետին և այցելում Նիս քաղաքի հոգևոր հովիվ տ. Ա. տոմ քնն. Իլինչանը՝ մի խումբ հավատացյալներով։

Ս. Ա. Ս. Ա. Ս. Ա.

ված բացառիկ ոգևորությունն ու ազգային հպարտությունը:

Այնուհետև գաղութահայ վարչության նախագահ Շարլ Փիլիպոսյանը հանդես է գալիս փրանսերեն լեզվով հետևյալ բովանդակից ճառով.

«Ձերդ Սրբություն,

Պատվված և հուզված եմ այն նախապատվության համար, որ ինձ տրված է այսօր Ձեզի քարի գալուստ մաղթելու մեր քաղաքին մեջ՝ Ծվեյցարիայի բոլոր հայերի անունից:

Սինոդյան ժամանակ մեծ հուզում և անպատում մի հրճվանք եմ զգում, որովհետև Դուք Ձեզ հետ բերում եք շունչը մեր հայրենիքին, որից մենք հեռու ենք և որին նույնիսկ չենք ճանաչում, բայց որի կարոտը ունենք մեր սրտերում՝ իբրև մեր էության անբաժանելի մի մասը: «Հայրենիք» բառը մեզ համար դարձել է մի տեսակ քաղցր երազ, անհասանելի ցնորք:

Մի քանի տարի առաջ, Եվրոպայի մեջ Ձեր ճանապարհորդության առթիվ, հույսը ունեինք Ձեզ ընդունելու ժենևի մեջ: Ավա՜ղ, մեծ եղավ մեր հուսախաբությունը, երբ լսեցինք, թե Ձեր թանկագին ժամանակը թույլ չի տալիս Ձեզ փոխելու Ձեր ուղեթը:

Բայց այսօր, անավասիկ, Դուք մեր մեջ եք, և Ձեր ներկայությունը պատռել է քողը և մեր երազներին տվել մարմին և հոգի, և, անհավասիկ, պատկերները կենդանություն են ստանում մեր աչքերին առաջ:

Արարատյան դաշտին վրա ոսկեգույն հասկերը դանդաղ օրորվում են մեր Մասիսից վչող զեփյուռի շունչին տակ և մեր ականջներին հասնում մայր Արաքսի մեղեդին՝ խառն մշակի երգին և հովվի սրինգին:

Դուք մեր մեջ եք, Ձերդ Սրբություն, և Դուք Ձեզ հետ բերում եք մեզ Մայր Աթոռ ս. Էջմիածնի, Հայաստանի մեր եղբարների ողջույնը և ազգային ավանդի մեր բաժինը, որից մենք զրկվել ենք: Այլևս մենք մեզ օտարներ չենք զգում օտար հողի վրա և ոչ էլ լքված և մերկ, այլ հարուստ, երջանիկ և հպարտ:

Այս գիշեր Դուք տեսնում եք Ձեր շուրջը հավաքված ներկայացուցիչները Ծվեյցարիայի մեր գաղութի զանազան մարմինների, այդ թվում՝ Բարեգործականի, նախկին որբանոցի երեցների, Ծվեյցարիայի հայկական միության, եկեղեցու, տիկնանց հանձնաժողովի, ուսանողների ընկերակցության, եկեղեցու հոգաբարձության, երիտասարդների հանձնաժողովի և Ձերդ Սրբությունը ընդունելու համար վերջերս կազմված հանձնախումբի, որին նախագահում է Կարապետ Ղազարյանը՝ բոլորիս ծանոթ իր ձեռնահաստությամբը և նվիրվածությամբը:

Մեր նպատակն ու պարտականությունն է՝ կազմակերպել մեր գաղութի կյանքը՝ հանձայն մեր եկեղեցական և ազգային իդեալին, անխախտ պահել մեր հայրենասիրական զգացումները, արժանավորապես ներկայացնել հայ ժողովուրդը Ծվեյցարիայի մեջ:

Ժենևի մեջ մենք շուտով ունենալու ենք մեր եկեղեցին, որին Ձեր Սրբությունը կարող է տեսնել շինության ընթացքում: Այն լինելու է մեր մեջ Ձեր ներկայության խորհրդանիշը:

Դուք մեր Հայրապետն եք, և մենք երջանիկ ենք այս գիշեր՝ հավաքվելով Ձերդ Սրբության շուրջ և լսելով Ձեր քաղցր ձայնը, որ գալիս է ս. Էջմիածնից, Հայաստանից, ուստի խոնարհաբար և հուզումով խնդրում ենք, Վեհափառ Տեր, Ձեր օրհնությունը»:

Հաջորդաբար ողջույնի խոսքեր են ասում տ. Հայկազուն և տ. Սերովբե արքեպիսկոպոսները, տ. Թորգոմ սրբազանը, Սեդրակ Քարյանը (Փարիզ.), Անդրանիկ Ծառուկյանը (Լիբանան), Առաքել Պետրոսյանը (Աթենք), Սուեիսան Սրապյանը (Միլանո):

Հանդիսության գեղարվեստական բաժնին իրենց մասնակցությունն են բերել Ցյուրիխի երգչախումբը և տ. Արսեն վարդապետը՝ մեներգելով, Գևորգ Էմմիյանը՝ նվագով՝ դաշնակի վրա:

Վերջում ընդհանուր խանդավառության և ծափերի մեջ խոսք առավ Հայոց Հայրապետը, մի անգամ ևս անդրադառնալով Մայր Աթոռի կատարած նախախնամական աշխատանքների և դերին հայ ժողովրդի ծոցում, ծանրացավ հայ եկեղեցու այսօրվա կացության վրա, նվիրապետական Աթոռների փոխհարաբերություններին՝ մի անգամ ևս վճռական շեշտով ու համոզումով հայտնելու, **թե մեկ է Հայաստանյայց եկեղեցին, մեկ է հայոց հայրապետությունը՝ իբրև գլուխ ունենալով Մայր Աթոռ ս. Էջմիածինը և նրա գահակալը:**

Ն. Ս. Օծությունը խոսում էր հուզումով, ապրումով և Իր զգացմունքները, խոհերը, խանդավառությունը փոխանցում բոլոր ներկաներին, որոնք իրենց ծափերով հաստատում էին հայրապետական մտքերի ճշմարտությունը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը ջերմությամբ ողջունում է Կ. Պոլսի հայոց ամենապատիվ տ. Շնորհք պատրիարքի ներկայությունը, ժենևահայ գաղութին տված պատմական այցելության խանդավառ օրերին:

«Մենք ամենապատիվ տ. Շնորհք պատրիարքի, Մեր սիրելի եղբոր հանդեպ ամբողջական և անվերապահ սեր ու վստահություն ունինք»,—ասում է Վեհափառ Հայրապետը, ընդհանուր խանդավառության մեջ:

Իր խոսքի մեջ Վեհափառ Հայրապետը անդրադարձավ նաև մեծանուն գաղութի եկեղեցու շինության հարցի կարևորությանը՝ շեշտելով նաև Ճվեյցարիայում կազմակերպված գաղութային կյանք ստեղծելու անհրաժեշտությունը:

Այս հանդիսավոր առիթով Ամենայն Հայոց Հայրապետը ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշանով զարդարում է Կործրի Ժենևի եկեղեցու շինության բարերար **Հակոբ Թովմայանի**, ինչպես և **Կարապետ Ղազարյանի**, որը թե՛ Ժենևի և թե՛ Կ. Պոլսի եկեղեցական, համայնքային կյանքում աշխատել է բացառիկ նվիրումով՝ կանգ չառնելով նյութական ու բարոյական ոչ մի զոհության առաջ, հոգուտ եկեղեցու և համայնքի:

Ի գնահատություն ազգանվեր երկարամյա ծառայության, Վեհափառ Հայրապետը այս առթիվ Ժենևի գաղութային վարչության նախագահ Շայլ Գրիգորյանին շնորհեց գրիգորյան ատենավոր կոնդակ:

Հայրապետական այս բացառիկ գնահատականները ընդունվեցին երկարատև ծափահարություններով, բոլոր ներկաների կողմից հոգևոր ու նյութական աջակցությամբ:

Այս որոյս առիթով Վեհափառ Հայրապետը Ժենևի հայոց նորաշեն եկեղեցուն է նվիրում ս. Էջմիածնից բերված գեղեցիկ մի խաչքար, ինչպես նաև Մայր աթոռի ջրաներկ մի նկար՝ Ժենևի համայնքին:

Հանդիսությունն ավարտվում է բացառիկ խանդավառ մթնոլորտում:

Բոլոր ներկաները ազատամտորեն իրենց հարգանքն ու սերն են արտահայտում դեպի ս. Էջմիածին ու հրաժեշտ առնում դժվարությամբ, բայց գոհունակ և հպարտ՝ պատմական ու անմոռանալի մի օր ապրած լինելու զգացումով, շնորհաբեր ներկայությամբ Ամենայն Հայոց Հայրապետի:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԺԵՆԵՎԻ ԵՌԻՄԲԵ ՊԵՏՐՈՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆԻ

Հուլիսի 16՝ կիրակի.

Այսօր ժամը 11-ին Ամենայն Հայոց Հայրապետը Ճվեյցարիայի ազգային բոլոր եկեղեցու սուրբ Պետրոս Մայր տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում:

Պատմության մեջ առաջին անգամ էր, որ սույն տաճարում մատուցվում էր հայկական սուրբ պատարագ, ինչ որ եկեղեցական մեծ նշանակություն ուներ էկումենիկ այս դարաշրջանում:

Վաղ առավոտվանից Ժենևից շվեյցարիացի հավատացյալներ և բազմաթիվ հայեր Եվրոպայի երկրներից լեցրել էին Մայր տաճարը:

Եկեղեցու զանգերի ուրախ և ավետավոր ղողանջի ներքո, ժամը 11-ին, ժամանում է Վեհափառ Հայրապետը՝ Իր շքախմբով, և ավանդական մեջ զգեստավորված, եկեղեցական թափորով, աղոթքով ու խնկով և «Տիրածնի խորին» շարականի երգեցողությամբ առաջնորդվում է սուրբ Պետրոս Մայր տաճար:

Եկեղեցական հանդիսավոր թափորին մասնակցում էին նաև հայ և օտար բոլոր հոգևորականները զգեստավորված:

Ս. պատարագի ժամին սեղանին ապասարկում էին ԱՄՆ-ի արևելյան թեմի և Գանատայի առաջնորդ տ. Թորգոմ եպս. Մանուկյանը և հարավային Ֆրանսիայի հայոց հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Հակոբ եպս. Վարդանյանը, Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, Գանատայի հայոց առաջնորդական փոխանորդ տ. Վահե ծ. վրդ. Հովսեփյանը, Մայր Աթոռի միաբան տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը և տ. Արսեն վրդ. Բերբերյանը:

Ս. պատարագի կոմիտասյան բառաձայն երգեցողությունը կատարում է Ցյուրիխի «Արարատ» երգչախումբը՝ Սիրանոյանի երգեհոնի ընկերակցությամբ:

Հայրապետական ս. պատարագին ներկա էին Եկեղեցիների հանաշխարհային խորհրդի ղեկավարությունը և բոլոր եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Ս. պատարագը ամենայն հանդիսությամբ շարունակվում է մինչև «Հայր մեր»:

Պատարագիչ Վեհափառ Հայրապետը խոսում է հետևյալ հերթնչված գեղեցիկ բարոզը:

«Զի թէպէտ եւ մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ.
Խնդամ՝ իբրև տեսանեմ զկարիքն ձեր և զհաստատութիւն
Հաւատոցն ձերոց որ ի Քրիստոս Յիսուս»

(Կողոս. Բ. 5)

Սուրբ Պողոս Առաքյալի այս խոսքը, կրխորհինք, թե ամբողջապես կհամապատասխանեն այն զգացումին, որով համակված է Մեր հոգին, աղոթքի այս սուրբ ժամուն, այս

պատմական հոյակապ տաճարին մեջ, որ փառավոր և վավերական մեկ վկայությունն է Ծնն քաղաքի քրիստոնեական հավատքին և անոր բազմադարյան նույնքան քրիստոնեական կյանքին ու մշակույթին:

Իսկապես խոր է Մեր հուզումը, Մեր խընդությունը, Մեր հոգեկան մխիթարությունը:

«Փառք քեզ Աստուած, փառք քեզ, յաղագս ամենայնի փառք քեզ Տէր»:

Այս բոլոր ուրախությունները Մենք և Մեր պատվիրակության բոլոր անդամները կը-պարտինք Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի շատ հարգելի ընդհանուր քարտուղար դոկտ. Էուժեն Կարսեն Բլեյկին, որ քաղցր խոսքով եղբայրական հրավեր ուղղեց Մեզի, այցելելու էկումենիկ շարժման կեդրոնը ի Ժնև:

Հայ առաքելական ս. եկեղեցին, սույն շարժման սկզբնական շրջանեն իսկ մասնակցած է բազմաթիվ հանդիպումներու և ժողովներու և վերջին տարիներուն անդամ է Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին:

Եվ ահա, այս օրերուն, առաջին անգամ ըլլալով, հայ եկեղեցվո գերագույն պետը՝ Ամենայն Հայոց Հայրապետը, անձամբ կուգա այցելություն տալու միջեկեղեցական համաշխարհային կազմակերպության կեդրոնին, բերելով քրիստոնեական ողջույն և Աստուծո օրհնությունը ս. Էջմիածնեն, հոգևոր պատմական կեդրոնը հայ եկեղեցվո, հիմնված չորրորդ դարու սկիզբն սուրբ Գրիգոր Լուսավորիչի և հայոց Տրդատ թագավորի երանելի օրերուն:

Մենք եկանք նաև մոտիկեն ծանոթանալու Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի կազմակերպության և անոր աշխատանքներուն: Ծանոթանալու այս մեծ շարժման բոլոր պատասխանատու ղեկավարներուն, որոնք աստվածահաճո առաքելության մը դրոշակակիրներն են մեր օրերու աշխարհին մեջ: Մեր այս իղձը կենսագործվեցավ լիությամբ: Այս կերպով Մեր հավատքը առավել ամրապնդվեցավ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի նկատմամբ: Մենք սկսանք առավել գնահատել էկումենիկ շարժումը, անոր կատարած գործը և անոր ձեռք բերած հիշատակության արժանի արդյունքները՝ կրոնական, դաստիարակչական, ընկերային, մարդասիրական և մշակութային տեսակետներե:

Աստծո օրհնությունը և օգնականությունը կհայցենք Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին և անոր բոլոր պայծառատես ղեկավարներուն:

Մեր մեջ առավել զորացավ նաև այն համոզումը, թե Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը, իրեն անդամ բոլոր եկեղեցիներու գործոն մասնակցությամբ, պիտի կարողանա դառնալ հետզհետե ավելի հզոր ուժ մը համաշխարհային տեսակետով, ի խնդիր աշխարհի խաղաղության սրբազան դատին պաշտպանությամբ:

Խաղաղության սպիտակ աղավնին, մեր օրերուն մանավանդ, խորհրդանիշն է բոլոր մարդոց և ժողովուրդներու ամենասուրբ սպասումներուն: Խաղաղության մեր Աստվածը թող քաղցրությամբ ընդունի բոլորին աղոթքները, հեռացնե պատերազմներու կրակը մարդկային կյանքի սահմաններեն:

Եվ երբ կխոսինք խաղաղության մասին, կմտածենք նաև հայ եկեղեցվո և հայ ժողովուրդի ու անոր մայր երկրի մասին, որոնք արևի լույսի չափ կարիք ունին խաղաղ ու անվտանգ ապրելու: Իր պատմության վերածնունդի սկզբնավորության այս բախտորոշ շրջանին մասնավորապես, հայ ազգի ու հայրենիքի համար կենսական են՝ խաղաղությունը, ապահովությունը և շինարար աշխատանքը:

Ով ճշմարիտ ու հարազատ զավակն է մեր եկեղեցիին ու ազգին, ուր որ այ գտնվի աշխարհի վրա, ուղիղ և արդար ապրումներով կհասկնա Մեր այս մաղթանքը: Թող Աստված հավետ պահապան ու մարտակից մնա անցյալի մեջ բազում անգամներ նահատակված և մեր օրերուն փրկության ափին հասած մեր սուրբ եկեղեցիին ու ժողովուրդին:

Երջանիկ ենք աղոթքի այս սուրբ պահուն, Մեր սրտագին շնորհակալությունը հայտնելու Ժնևի կանտոնի իշխանություններուն և հատկապես Մեծարգո Նախագահ Անդրե Շավանին, որ այնքան ազնիվ զգացումներով ընդունեց և պատվեց Մեզ և Մեր պատվիրակությունը: Խորապես զգացված ենք այս սիրալիր վերաբերումեն: Մեր աղոթքներուն մեջ Մենք միշտ պիտի հիշենք Զվիցերիան և Ժնևը, որպեսզի Տերը զանոնք հավիտյան պահե-պահպանե անսասան, խաղաղ ու ծաղկյալ:

Կներկայացնենք նաև Մեր երախտագիտությունը և քրիստոնեական սերը Ժնևի բողոքական ազգային եկեղեցիներու բարձր իշխանության, որ լայն բացավ Մեր առաջ իր եղբայրական սիրտը և իր այս փառավոր աղոթքի տունին դռները: Եվ ահա, այսպես է, որ մենք բոլորս, քրիստոնյա եղբայրներ, միատեղ կաղոթենք մեր Աստծուն, որուն զավակներն ենք ամենքս հավասարապես:

«Ուղիղ եղիցին աղօթք Մեր, որպէս խունկ առաջի քո Տէր»:

Այս սուրբ սեղանեն մեր հայացքը տարածելով ձեր բոլորի վրա, սիրելի հավատացյալ ժողովուրդ, Մեր սիրտը կհրճվի և կլեցվի ջերմագին հույզերով: Այսքան մեծ թվով քրիստոնյաներ, բնիկ ժնևցիներ, Ժնևի հայ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՆԿՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԽՄԲԱՎԱՐՈՒԹՅԱՄԸ՝ ՀԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԼ ՓԻԼԻՊՊՈՍՅԱՆԻ, ԿԱՐԱՊԵՏ ՂԱԶԱՐՅԱՆԻ, ՊԵՐՃ ԵԱԿՈՒՊՅԱՆԻ ԵՎ Տ. ԱՐՍԵՆ ՎԵՌ. ԲԻՐԵՐՅԱՆԻ



համայնքի անդամներ և հայ եկեղեցվո հարյուրավոր զավակներ եկած գանազան դրացի երկիրներեն, հավաքված եք այստեղ՝ աղոթելու համար հայ եկեղեցվո առաջին սպասավորին հետ միասին, որ եկած է ձեր մեջ հեռավոր Արևելքեն, սուրբ գրական Արարատի երկրեն, հավիտենական Հայաստանեն, սուրբ Էջմիածնեն:

Կգգանք, որ բոլորիդ հոգիները ջերմացած են կրոնական ապրումներով: Կգգանք, որ ձեր սրտերու բաժակները կբարձրանան դեպի սուրբ սեղան՝ լեցվելու համար սուրբ Հոգիին շնորհներով և ալնիվ ներշնչումներով:

Թող Աստված քաղցրությամբ ու առատապես լեցնե ձեր սիրտերու բաժակները՝ ի մխիթարություն և ի զորացում ձեր հոգիներուն և ի լուսավորում ձեր կյանքի ճանապարհին: Մնացեք բոլորդ հավատարիմ Քրիստոսի սուրբ Ավետարանին և աշխատեցեք իրագործել երկրի վրա Աստուծո պատգամը՝ սիրո, եղբայրության և խաղաղության:

Մեր սիրտը կթելադրե նաև կոչ ընել Մեր ժողովուրդի զավակներուն, որ հավատարիմ մնան սեր ազգային եկեղեցվո ավանդներուն և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին, վեմ մեր ազգի հոգևոր կյանքին, հարազատ վկան մեր պատմության և երազներու իրականացման: Ի սփյուռս աշխարհի ապրող Մեր զավակներ, իրենց սրտերուն մեջ ամուր պահած ոգեկան լույսը ս. Էջմիածնին, պետք է հավատարիմ մնան նաև իրենց նախնյաց մայր հողին ու հավերժական Արարատին և մանավանդ տեսնեն հայորդակից ըլլան այդ սուրբ հողեն ճառագայթող հայ մշակույթի արժեքներուն՝ կենդանի պահելով իրենց շրթներուն վրա քաղցր լեզուն հայկական:

Հայեր, հավատացյալ զավակներ Մեր, այս սուրբ տեսիլքներով և արժեքներով գոտեպինդ միացե՛ք ու եղբայրացե՛ք և մնացե՛ք մեկ ու անբաժան, խաղաղ ու համերաշխ՝ սուրբ Էջմիածնի աստվածային օրհնության ներքեն:

Ավելի՛ լույս, ավելի՛ սեր և ավելի՛ խաղաղություն հայ ժողովուրդին, մեր ս. եկեղեցվո բոլոր զավակներուն:

Ավելի՛ լույս, ավելի՛ սեր և ավելի՛ խաղաղություն համայն աշխարհին և բոլոր մարդոց հոգիներուն:

«Այսուհետև եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք, մխիթարեցարուք միաբան լերուք, խաղաղութիւն արարէք եւ Աստուած խաղաղութեան եւ սիրոյ եղիցի ընդ ձեզ: Ամէն» (Բ Կորնթ. ԺԳ. 11):

Հավատք ս. պատարագի հաղորդություն են առանում ավելի քան 400 հավատացյալներ, որոնց թվում նաև Ֆրանսիայի սահմանակից Ժյուրա լեռների վրա գտնվող Բելֆոնտին աշակերտական ճամբարի հայ երեխաները՝ շուրջ 150 հոգի, որոնք իրենց ղեկավար տիկին Գազազյանի գլխավորությամբ մասնավոր կերպով եկել էին ներկա լինելու հայրապետական ս. պատարագին և ընդունելու Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը: Պատմական անմոռանալի օր էր մասնավորաբար հայ մանուկների համար:

Երևի ս. Պետրոս Մայր տաճարի տարեգրությանց մեջ անմոռաց կմնա այս պատմական և հավետ հուշարժան հայրապետական սուրբ պատարագի օրը:

Ս. պատարագի ավարտից հետո Վեհափառ Հայրապետը ընդունում է Բելֆոնտին ճամբարի հայ 150 մանուկներին, օրհնում է նրանց և ս. Էջմիածնից բերված խաչեր է բաժանում նրանց: Հուզիչ էր արձանագրել, որ հեռավոր Ֆրանսիայի ափերի վրա ծնած այս փոքրիկները մայրաքաղաքներով էին պատասխանում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հարցումներին:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ ՕՐԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Ս. պատարագից հետո Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը և հայ ու օտար բոլոր հոգևորականները վերադառնում են Ինտերկոնտինենտալ, որ մոտ 15-ին Շվեյցարիայի գաղութական վարչությունը պաշտոնական հրաժեշտի ընդունելություն էր կազմակերպել, որին ներկա էին նաև ավելի քան 400 հայ հրավիրյալներ:

Ներկաներն օրհնում է Վեհափառ Հայրապետը: Այնուհետև, ստեղծված խանդավառ ու հայկական ջերմ մթնոլորտում խոսք են առնում ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարքը, տ. Ներսիսյան արքեպիսկոպոսը, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախկին քարտուղար դոկտ. Վիսսերտ Հուֆտը, ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալ-

յանը, Ժենի եկեղեցիների միության նախագահ, վերապատվելի Պոտմերը, սուրբ Պետրոս Մայր տաճարի ավագերեց Պավելը և ուրիշներ, որոնք սքանչելի կերպով ներկայացրին իրենց հոգեկան ապրումները օրվա ս. պատարագի առթիվ:

Այնուհետև հրաժեշտի պատգամով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը.

Աստված միայն կրնա չափել անհուն ուրախությունը Մեր սրտի այս պահուս, երբ Մենք՝ Հայրապետը ձեր, գալով մայր հայրենիքեն, Մայր Աթոռ ս. Էջմիածնեն, ձեզի ամենուդ կբերենք հայրական սիրո ողջույն և աստվածային օրհնություն:

Աստված ն իր Միածին Որդին հայոց աշխարհին և ժողովուրդին խոսեցավ ս. Էջմիածնեն և ս. Էջմիածնով, անշարժելի, անփոխարինելի և անփոխադրելի վեմը մեր քրիստոնեական հավատքին: Ցնծացեք, հայեր, և փառք տվեք երկնքին, որ կանգուն է ու կենդանի ամենայն հայոց ս. Էջմիածինը: Անոր սուրբ սեղաններեն կբաշխվի լույս և մխիթարություն և հոգիներու փրկության հույս՝ բոլոր իրավ հայ քրիստոնյաներուն համար: Ինչպես դարեր, դարեր շարունակ, նաև այսօր ս. Էջմիածին կշարունակե իր սուրբ առաքելությունը մեր ժողովրդի կյանքին մեջ, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի կրոնական, մշակութային և ազգային տեսակետե: Ս. Էջմիածինը գերագույն երաշխիքն է նաև հայ եկեղեցվո միության ու անքաժանելիության և մեր ժողովրդի ազգային միասնության: Ոչ ոք հավասարազոր չէ և չի կրնար ըլլալ ս. Էջմիածնին: Հավատացյալ ժողովուրդը հայոց իր բոլոր եկեղեցական կեդրոններով կգտնվի ս. Էջմիածնի հոգևոր գերագույն իշխանության ներքո: Ով հայ է և իրավ քրիստոնյա, չի կրնար բաժնվիլ ս. Էջմիածնեն: Մայր Աթոռ ս. Էջմիածնի պատկանելիությունը կարելի չէ քվեի դնել: Ո՛չ, Արարատ վկա, ո՛չ:

Եվ տակավին կհավատանք Մենք, թե արտասահմանի հայության համար հայապահպանման հզորագույն ազդակներն են ս. Էջմիածնի օրհնությունները և Երևանի լույսերը:

Եվ ահա, սիրելի զավակներ Մեր, Մենք ձեզի կուգանք բերելու ամենուդ անխտիր ողջույն և օրհնություն հավերժական սուրբ Էջմիածնեն: Այս հանդիսավոր առթիվ Մենք կուգանք Մեր ողջույնի հետ միատեղ բերելու հայոց գնահատանքը Զվիցերիո Մեր հայ հավատացյալներուն և ի մասնավորի՝ Ժենի քաղաքի հայ եկեղեցական և մշակութային կազմակերպություններուն, որոնք բազում տարիներե ի վեր բարձր կպահեն Լեմանի ափերուն անունը հայ ազգին, հայ եկեղեցիին և հայ մշակույթին, բարի եռանդով լեցուն դեկավարներու շնորհիվ. ինչպես են տիարք Շարլ Փիլիպոսյան, Կարապետ Հակոբյան, Կարապետ Ղազարյան, Պերճ Ցագուպյան, Կրոնիկ Փափազյան, Էոժեն Բաբազյան և շատ ուրիշներ, բոլորը հարազատ զավակները Մեր:

Ջերմ հրավանքով կողջունենք Ժենի հայերու նախաձեռնությունը՝ կառուցելու հայկական եկեղեցին իբրև աղոթքի տունը Զվիցերիո հայության: Մեր իղձն է և պատվերը, որ շատ մոտ ապագային իր լրումին հասնի եկեղեցվո շինության գործը և այս երկրի ու այս քաղաքի բոլոր Մեր հոգևոր զավակները, բոլոր հայերը հավաքվին անոր շուրջ կազմակերպվելով և օրինական ամուր հիմքերուն վրա դնելով իրենց համայնքային կյանքը, ս. Էջմիածնի օրհնության ներքո՝ անմիջականորեն մնալով Արևմտյան Եվրոպայի հայրապետական մեր պատվիրակին: Մեր անկեղծ գնահատանքը և օրհնությունը բոլոր անոնց, որոնք բարոյապես կամ նյութապես իրենց նպաստը մատուցին ձեր համայնքի ս. Հակոբ եկեղեցվո շինության գործին: Մեր գնահատանքը և օրհնությունը մեծահարգ տիար Հակոբ Թոփալյանին՝ ձեր մեծ բարերարը, շինարարը ձեր եկեղեցիին:

Ողջունելի և գնահատանքի արժանի կնկատենք նաև ձեր ծրագիրը,—ջերմագին իղձը տիար Փիլիպոսյանի,—ս. Հակոբ եկեղեցվո կից ունենալու հայ արվեստի նվիրված թանգարան և դահլիճ մը, որ պետք է ծառայե իբրև հավաքավայր մշակութային ձեռնարկներու: Այս բոլորը սքանչելի ծրագիրներ են մեկը մյուսը ամբողջացնող, մեկը մյուսը արժևորող: Հայ եկեղեցի, հայ արվեստ և մշակույթ, հայ կրթություն՝ ահա ամբողջական պատկերը հայ հոգիին և անոր փառավոր իրագործումներուն դարերու ընթացքին: Հայ ժողովուրդը կրոնական հավատքի և մշակույթի ժողովուրդ է: Այդպես կճանչնանք մենք զմեզ, այդպես կճանչնա քաղաքակիրթ աշխարհն զմեզ: Եվ Մենք կկարծենք, թե ուղիղ և արդար է այս դատողությունը՝ հիմնված մեր ժողովրդի բազմադարյան կյանքի փորձին վրա: Հիշենք այստեղ կոթողային պահը հայոց պատմության, ե դարը մեր ոսկեշող, որ ամենավավերական մարմնացումն է և ճառագայթումը հայոց կրոնական հավատքի, մշակութային հանճարի և հայրենանվեր ազատատենչ ոգիի միասնության:

Թող հավետ անսասան ու պայծառ մնա այդ միասնությունը, և Ժենի փոքրիկ հայ համայնքը իր եկեղեցական, իր մշակութային և հայրենանվեր կյանքով ու գործունեությամբ հարազատ, անքաժան մաս մնա վերածնած հայ ժողովրդին:

Կեցցե Հայաստանյայց առաքելական ս եկեղեցին և ժողովուրդը մեր համայն:

Վեհափառ Հայրապետը ողջունում է

Կեցցե Զվիցերիոյ հայ համայնքը և Աստուծոյ օգնությամբ լիակատար հաջողություն անոր բոլոր ազնիվ ծրագիրներուն և իղձերուն:

Հայոց Հայրապետի օրհնությամբ վերջանում է ճաշկերույթը:

Այսպիսով սուրբ պատարագով ավարտվում է Հայոց Հայրապետի այցելությունը Ժնևի հայ համայնքին և վերջ է դրվում համայնքային պաշտոնական ծրագրի գործադրությանը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վեհափառ Հայրապետը դեռևս մի շաբաթ էլ մնաց Ժնևում՝ տեսակցություններ ունենալով և՛ Ժնևի, և՛ Եվրոպայի տարբեր երկրներից եկած ազգային-թեմական իշխանությանց ներկայացուցիչների հետ, եկեղեցական հարցերի կապակցությամբ:

Հուլիսի 16-ին՝ կիրակի, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը ընդունում է Մարսելի թեմի և ազգային-եկեղեցական մարմինների այցելությունը հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Հակոբ եպս. Վարդանյանի գլխավորությամբ:

Ավելի ուշ Ն. Ս. Օծությանն է այցելում Լիոնի եկեղեցական և հայկական ազգային միության վարչությունը՝ Լիոնի հոգևոր հովիվ տ. Դավիթ Ծ. վրդ. Սահակյանի գլխավորությամբ.

Ժամը 19-ին Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը տ. Գնել եպս. Ներսիսյանի և Հարություն Կուժունու, որոնք ԱՄՆ-ից վերադառնում էին Լիբանան՝ Սահակյան երկրորդական վարժարանի շինության հանգանակությունից:

Ժամը 20-ին Վեհափառ Հայրապետին է այցելում լոնդոնահայ ազգային-եկեղեցական վարչության անդամ Հարություն Մուքաֆյանը, այնուհետև՝ ԱՄՆ-ից Հերրի Բըրտը, որը հատուկ եկել էր Վեհափառ Հայրապետին տեսնելու և կարևոր մի նվիրատվությամբ որսիացնելու Մայր Աթոռը.

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետին էին այցելում Մարսելից տեր և տիկին Արիզոն և Էլիզա Զրբաշյանները, որոնք Մայր տաճարի պայծառության համար անում էին կարևոր մի նվիրատվություն:

Հուլիսի 17-ին՝ երկուշաբթի.

Ամբողջ օրը հյուրանոցի Իր հարկաբաժնում Վեհափառ Հայրապետը ընդունում է բազմաթիվ այցելություններ:

Առավոտյան ժամը 11-ից մինչև 14-ը Ն. Ս. Օծությանը էին այցելում Լոնդոնի ազգային-եկեղեցական վարչության անդամները՝ Հարություն Մութաֆյանը, Հայկ Գալստյանը, Խաչիկ Մտրապյանը և Ալեքսանյանը՝ տ. Պապակ արքեպիսկոպոսի գլխավորությամբ:

Տեսակցությանը ներկա էին նաև Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Ժամը 15-ին Վեհափառ Հայրապետին այցելություն տվեց Լիոնի ծանոթ ազգային Կարպիս Ճնգըստրյանը մի անգամ ևս ուրախացնելով Մայր Աթոռը իր նվիրատվությամբ:

Ժամը 16-ին Վեհափառ Հայրապետը ընդունում է հավաքական ունկնդրության Շվեյցարիայի հայկական միության, գաղութային վարչության անդամներին՝ նախագահ Շարլ Փիլիպպոսյանի գլխավորությամբ:

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետին է այցելում Ժենևի եկեղեցական հոգաբարձության նախագահ Պերճ Յագուպյանը:

Հուլիսի 18-ին՝ երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը ընդունում է Ժենևում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մոտ Կ. Պոլսի հունաց տիեզերական պատրիարքի ներկայացուցիչ Էմիլիանոս միտրոպոլիտի այցելությունը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետին է այցելում Հ. Բ. Ը. միության նախագահ Ալեքս Մանուկյանը, որը հատկապես եկել էր ողջունելու Հայոց Հայրապետին՝ Նրա Եկեղեցիների համաշխարհային խորհրդին տրված այցելության կապակցությամբ, և կարևոր մի նվիրատվությամբ ուրախացնելու Ն. Ս. Օծությանը:

Պ. Ալեքս Մանուկյանը սրտաբուխ և ինքնահոժար կերպով ստանձնել է Էջմիածնի հին վեհարանի նորոգության և թանգարանի վերածման հետ կապված բոլոր ծախսերը:

Նույն օրը, տարբեր ժամերի, Վեհափառ Հայրապետին այցելեցին նաև Վենետիկից տ. Ներսես վրդ. Տեր-Ներսիսյանը, միլանահայ տեր և տիկին դոկտ. Արզումանյանը և փարիզահայ «Յառաջ» թերթի կողմից տիկին Արփինե Միսաքյանը, «Նայիրի» շաբաթաթերթի խմբագիր Անդրանիկ Ծառուկյանը, փարիզահայ «Աշխարհ» թերթի խմբագիր Ա. Ալեքսանյանը և «Խրատ» թերթի խմբագիր դոկտ. Համբարձումյանը և վերապատվելի Գառնուգյանը:

Հուլիսի 19-ին՝ չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում Մոնսկոյի Շարլ Ոյուլ եպիսկոպոսը, որը եկել էր մասնավորապես Ժենև՝ ողջունելու Հայոց Հայրապետին և Նրան նվիրելու ս. Էջմիածին կատարած իր ուղևորության նվիրված գիրքը, 1965 թվականի աշնան:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Մայր Աթոռիս բարերար տեր և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրքչյանների: Վեհափառ Հայրապետը ուրախ սրտով ապաքինում է մաղթում Ա. Քյուրքչյանին:

Ժամը 13-ին Կարապետ Ղազարյանը ընդունելություն էր կազմակերպել իր հյուրանոցում ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարքի մեկնումի առթիվ:

Ընդունելությանը ներկա էին Վեհափառ Հայրապետը և քսաներկու հոգևորականներ:

Այնուհետև մասնավոր տեսակցություն է տեղի ունենում Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարք հոր միջև:

Ն. Ս. Օծությունը սրբազան պատրիարք հոր միջոցով Իր ողջույններն ու օրհնություններն է հղում ստամբուլահայ Իր հավատացյալ զավակներին:

Ժամը 14-ին, հանուն Վեհափառ Հայրապետի, սրբազան պատրիարք հորը դեպի Ստամբուլ են ճանապարհում տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, տ. Գյուտ, տ. Արսեն վարդապետները և այլ պաշտոնական անձինք:

Ժամը 15-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է Ժենևի հայոց ս. Հակոբ եկեղեցին, ուր դիմավորվում է եկեղեցու շինության հանձնաժողովի նախագահ **Կրոնիկ Բաբազյանի**, վարչության անդամների և հայ համայնքի ղեկավար անձնավորությունների՝ այդ թվում՝ Շարլ Փիլիպպոսյանի, Կարապետ Ղազարյանի և ուրիշների կողմից:

Այցելությանը ներկա էր նաև Ամերիկահայ Հերրի Բրրտը:

Ժամը 18-ին Վեհափառ Հայրապետը ընդունում է Ժենևի եկեղեցական հոգաբարձության և եկեղեցասեր տիկնանց հանձնաժողովի անդամներին՝ Պերճ Յագուպյանի գրախավորությամբ:

Հուլիսի 20-ին՝ հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Երուսաղեմի անգլիական եկեղեցու պետ Մեգինեն արքեպիսկոպոսի, Լոնդոնից Երուսաղեմ իր



ԺՆԵԼԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԿԱՌՈՒՑՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՐԱՐ ՀԱԿՈՒՑ ԹՈՓԱԼՅԱՆԸ

ճանապարհի վրա և տեսակցություն է ունենում վերջին դեպքերի կապակցությամբ Երուսաղեմի ս. տեղյաց մեջ ստեղծված նոր կացության առնչությամբ:

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետը մասնավոր տեսակցություն է ունենում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամներ դոկտ. Նոլտի և Կոմինիկ Միքելյանի հետ:

Այսօր Ժենև է ժամանում Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի դիվանապետ **տ. Շահե եպիսկոպոսը**, Վեհափառ Հայրապետի՝ Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքին տված հեռագրի հիման վրա, Երուսաղեմի ներկա կացության շուրջ ստույգ տեղեկություններ ստանալու համար:

Տ. Շահե եպիսկոպոսը Ժենև է ժամանում հուլիսի 20-ին և ներկայանում Վեհափառ Հայրապետին՝ մամը 13-ին:

Վեհափառ Հայրապետը, այս առաջին տեսակցությունից հետո, հուլիսի 21-ին կրկին տեսակցություն է ունենում երկրորդ անգամ տ. Շահե եպիսկոպոսի հետ և ապա ամսի 28-ին երրորդ տեսակցությունը՝ Ցյուրիխում:

Հուլիսի 20-ին ավարտվում է Վեհափառ Հայրապետի այցելության պաշտոնական շրջանը Ժենևի հայ համայնքին:

Ն. Ս. Օծությունը, ընդունելով Երևանի Հյուսիսյանի հրավերը, մի քանի օրով հանգստանում է Բորկենշտոկում և այնուհետև՝ Կարլսրուի Վարի առողջարանում՝ մինչև օգոստոսի 14-ը՝ տ. Ներսես Ծ. վարդապետի ընկերակցությամբ:

Վեհափառ Հայրապետը հուլիսի 29-ին, Շվեյցարիայից մեկնելուց առաջ, հետևյալ շնորհավորական հեռագրերն է ուղարկում.

ՏԻՐԵՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԵ ՇԱՎԱՆԻՆ,
ՆԱԽԱԳԱՀ ԺՆԵՎԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ձեր հիանալի երկրից և Ժենև քաղաքից հեռանալիս, հանում Հայաստանյայց Եկեղեցու, խնդրում եմ Ձեզ՝ ընդունել Մեր ամենախոր երախտագիտությունը և Մեր օրհնությունները: Թող միշտ լույսի, խաղաղության և բարգավաճման մեջ ապրի Շվեյցարիան:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

23 ՀՈՒԼԻՍԻ, ԲՈՒԿԱՐԵՍՏԻ

ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐԱԿԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԴՈԿՏ. Է. Կ. ՅԱՆՑԿԻՆ

Հայտնում ենք Մեր խորին գոհունակությունը Ձեր եղբարական ջերմ բնդունելության համար: Թող Տերը Ձեզ զորավիգ լինի և օրհնի Ձեր մեծ առաքելությունը:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

23 ՀՈՒԼԻՍԻ, ԲՈՒԿԱՐԵՍՏԻՈՒ

ԺՆԵՎԻ ԳԱՂԼԻԹՈՒՂԱՅՑ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՇԱՐԼ ՓԵԼԻՊՈՒՆՅԱՆԻՆ

Ձեր սրանչելի քաղաքից և նույնքան սրանչելի հայ համայնքից Մեր մեկնումի պահին հայտնում ենք Մեր ջերմագին գոհունակությունը և ձեզ բոլորիդ տալիս ենք Մեր հայրապետական օրհնությունը:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

23 ՀՈՒԼԻՍԻ, ԲՈՒԿԱՐԵՍՏԻՈՒ

29 ՀՈՒԼԻՍԻ, ԲՈՒՐԿԵՆՇՏՈԿ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԱՊԵՏ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

... ապրումներով բաժանվեցինք ձեր քաղաքից և Մեր զավակներից։ ... ի... գերազանց եղավ և մխիթարիչ՝ ձեր աշխատանքով և առատաձեռնությամբ։ Ձեր վարձը կատար։ Աստված օրհնի Ձեզ և Ձեր ընտանիքը։

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՍԱՅՐ ԱԹՈՌ

Օգոստոսի 14-ին Վեհափառ Հայրապետը Կարլովի Վարիից մեկնում է Պրագա և օգոստոսի 16-ին ժամանում Մոսկվա։

Շերեմետևոյի օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորում են տ. Պարգև եպս. Գևորգյանը։

Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում են նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Մակարցևը և Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Օգոստոսի 19-ին՝ շաբաթ օրը, երեկոյան ժամը 9-ին, շուրջ քառասունհինգօրյա բացակայությունից հետո, Մայր Աթոռ է վերադառնում Վեհափառ Հայրապետը։

Երևանի օդանավակայանում պաշտոնապես դիմավորվում է Ն. Ս. Օծությունը։

Վեհափառ Հայրապետի ժամանումը ողջունում է նաև Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը։

Ն. Ս. Օծությունը առաջնորդվում է ս. Էջմիածնի Մայր տաճար, որ լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, հանուն միաբանության, բարի գալուստ է մաղթում Հայոց Հայրապետին։

Ն. Ս. Օծությունը ողջունում է բոլորին և համառոտակի խոսում Ծնն կատարած Իր այցելության մասին և, օրհնելով միաբանության անդամներին, առաջնորդվում է վեհարան։

Բարի գալուստ մեր թանկագին Վեհափառ Հայրապետին։

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԵՐԵՎԱՆԻ ՌԱԴԻՈՅԻ ԹՂԹԱԿՑԻ ՀԵՏ

Օգոստոսի 30-ին՝ շաբաթշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը վեհարանում բարեհաճում է ընդունել Երևանի ռադիոյի թղթակցին և պատասխանել մի շարք հարցերի՝ ծանն Իր կատարած ուղևորության մասին.

ՀԱՐՑ.—Վեհափառ, թույլ տվեք, ուշադրություն դարձնելով Ձեր վերադարձը արտասահմանյան ուղևորությունից, մի քանի հարցով դիմել Ձեզ:

— Խնդրեմ, ուրախությամբ:

— Կարծում եմ, մեր ունկնդիրների համար հետաքրքիր կլինեն իմանալ Ձեր՝ Ամենայն Հայոց Հայրապետի Ցվեյցարիա կատարած ուղևորության նպատակը և այդ ուղևորության արդյունքը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Պաշտոնական հրավերով, Մենք այցելություն տվինք Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնին ի ժամ, Մայր Աթոռս սուրբ Էջմիածնին՝ անձամբ տանելով Մեր ողջույնը և օրհնությունը՝ իբրև գերագույն պետը հայ եկեղեցվո, որ ինչպես հայտնի է, անդամ է միջեկեղեցական այդ մեծ միության: Մենք մասնակցեցինք Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կազմակերպության կառույցին և անոր բազմակողմանի աշխատանքներուն և առավել ամրապնդեցինք մեր եկեղեցվո եղբայրական կապերը: Վերադարձանք սքանչելի տպավորությամբ և մեր եկեղեցվո գործակցությունը առավել ընդլայնելու ու զարգացնելու անհրաժեշտության գիտակցությամբ:

ՀԱՐՑ.—Ձերդ Սրբություն, եթե կարելի է, սեղմ բնութագրեք Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գործունեությունը: Ցանկալի էր իմանալ հիշյալ խորհրդի գերագույն նպատակը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հիմնական նպատակն է՝ ստեղծել եղբայրական համախմբումը բոլոր քրիստոնյա եկեղեցիներում՝ փոխադարձ սիրո և հարգանքի մթնոլորտի մեջ, միասնաբար և գործակցաբար իրականացնելու նամար Ավետարանի պատգամները ներկա աշխարհի մեջ: Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը կենդանի շարժում մն է, որ կնգաի իր խոսքը ասել և իր աշխատանքի բաժինը բերել կրոնական, դաստիարակչական, մշակութային և ընկերային

մարզերու մեջ։ Մենք կհավատանք, թե աշխարհի խաղաղության պահպանման հրամայական և ազգերու և պետություններու համերաշխ գործակցության իդեալը, առաջնահերթ նպատակները պետք է նկատել Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի, որ ցարդ գնահատելի ջանքեր ի գործ դրած է արդեն այս ուղղությամբ։

ՀԱՐՑ.—Վեհափառ, մեզ հայտնի է, որ Ծվեյցարիայում ևս հայ համայնք կա, և Դուք, Ձեր ուղևորության ընթացքում, հանդիպումներ եք ունեցել սնոլի հայերի հետ։

Խնդրում եմ, մի քանի խոսք Ծվեյցարիայի հայ գաղութի կյանքի մասին։

ՊԱՏԱՍԽԱՆ.—Զվիցերիո մեջ կապրին շուրջ հինգ հարյուր հայեր, մեկ մասը Մեծ եղեռնի որբերեն, որոնք Առաջին համաշխարհային պատերազմեն հետո բերված են Զվիցերիա, բարեսիրական զվիցերական կազմակերպություններու կողմե։ Հայերու մեծ մասը այժմ կապրի Ժնև քաղաքին մեջ, ուր այս օրերուն կկառուցվի հայոց առաջին եկեղեցին, և որուն օծումը պիտի կատարվի հառաջիկա տարի։ Եկեղեցվո կից կկառուցվի նաև սրահ մը՝ հայ արվեստի թանգարանի համար, ինչպես և դահլիճ մը, որ պետք է ծառայե իբրև հավաքավայր մշակութային ձեռնարկներու համար։ Այսպիսով, սկիզբ կառնե Ժնևի հայ համայնքի կրոնա-մշակութային և ազգային կազմակերպյալ կյանքը, ս. Էջմիածնի աստվածային օրհնության ներքո։

ՀԱՐՑ.—Արտասահմանյան մամուլում և ռադիոյում տեղ գտած լուրերի համաձայն, Ժնևում Ձեզ այցելել են մի շարք երկրների հոգևոր առաջնորդներ և ազգային գործիչներ։ Ձերդ Սրբություն, թերևս մեր ունկնդիրների համար անհետաքրքիր չէր լինի իմանալ, թե ընդհանուր առմամբ ինչ հարցեր են հուզել Ձեր ժնևյան այցելուներին։

ՊԱՏԱՍԽԱՆ.—Մեր ներկայությունը Ժնև բացառիկ ուղևորություն ստեղծեց ոչ միայն Զվիցերիո հայության ծոցին մեջ, որոնք բոլորը անխտիր հավաքվված էին Հայոց Հարաստանին շուրջ, այլ նաև դրացի ու հեռավոր երկիրներե՝ Ֆրանսիայեն, Իտալիայեն, Միացյալ Նահանգներեն, Կ. Պոլսեն, Հունաստանեն և Լիբանանեն՝ շուրջ 400 և ավելի հայ ազգային ծանոթ դեմքեր, մտավորականներ և հավատացյալներ փութացեր էին գալ Լեռնանի ափերը՝ մասնակցելու տեղվույն հայ համայնքին կազմակերպած հանդիսություններում և մանավանդ հայրապետական ս. պատարագին, որ մատուցվեցավ հուլիս 16-ին բողոքականաց ս. Պետրոս պատմական Մայր տաճարին մեջ։ Մենք խորապես մխիթարվեցանք ի տես այս եկեղեցական-ազգային միասնության սքանչելի արտահայտության ու անգամ մը ևս համոզվեցանք, թե ս. Էջմիածինը իրապես հրաշագործ է և անփոխարինելի ազգային սրբավայր համայն հայ ժողովուրդի համար, իբրև ազգային-հոգևոր գերագույն միակ կեդրոնը ամբողջ հայության։

Ժնև եկան Մեզ ողջունելու 21 սրբազան եպիսկոպոսներ և վարդապետներ ու 4 քահանաներ՝ գլխավորությամբ Կ. Պոլսո ամենապատիվ Ծնորհք սրբազան պատրիարքի, ինչ որ Մեզ մեծապես ոգևորացուց։

Ժնև Մեր գտնվելու օրերուն ունեցանք երկու եպիսկոպոսական խորհրդակցություններ, մեր եկեղեցին հուզող մի քանի հարցերու մասին։

ՀԱՐՑ.—Մամուլում զանազան լուրեր են տպագրվել նաև Երուսաղեմի սրբավայրերի (սուրբ տեղյաց) իրավական վիճակի մասին։ Խնդրում եմ Ձեր կարծիքը այս հարցի առնչությամբ։

ՊԱՏԱՍԽԱՆ.—Երուսաղեմի մեջ ստեղծված այժմյան կացության առնչությամբ Մեր օրինական ցանկությունն է, որ սուրբ տեղյաց մեջ նաև հետայսու լիապես հարգվին և սրբությամբ պահպանվին դարերով հաստատված եկեղեցական իրավասությունները։ Ինչպես հայտնի է, սուրբ տեղյաց մեջ Հայաստանյայց առաքելական եկեղեցին ներկայացնող Երուսա-

ղեմի հայոց պատրիարքությունը իր օրինական դարավոր իրավունքներով ու ճեղինակությամբ կմասնիանա հավասար իշխանություն և իրավունքներ վայելով եկեղեցիներն մին՝ լատինաց և հունաց օրթոդոքս եկեղեցիների կողքին: Մենք վստահ ենք, թե այս իրավական գոյավիճակը ամենախոս կերպով կպանպանվի հան հետագային:

ՀԱՐՑ.—Վեհափառ, չէի՞ք կամենա որևէ, որիշ բան ավելացնել Ձեր առաջնորդներին:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Մենք երջանիկ եղանք պաշտոնական այցելություն տալու Ժնևի կանտոնի նախագահ, Նորին Գերազանցություն Ակոդրն Ճավանին, որ Մեզ ընդունեց բացառիկ ջերմությամբ և խոր հասակրանքով դեպի հայ եկեղեցին, դեպի հայ ժողովուրդը և մշակույթը:

Մենք՝ իբրև Հայոց Հայրապետ, երախտագիտությամբ կմնանք ազնիվ Ազիցերին սքանչելի երկրին և հոյակապ սքանչելի Ժնև քաղաքի բարությանն և խաղաղության համար:

— Թույլ տվեք, Վեհափառ, մեր ունկնդիրների և մեր խմբագրության կողմից շնորհակալություն հայտնել Ձեզ այս օգտաշատ ու հաճելի զրույցի համար:

— Խնդրեմ, սիրով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Օգոստոսի 30-ին՝ չորեքշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում, Կառավարական տանը, այցելեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բադալ Մուրադյանին:

Հայոց Հայրապետին ընկերակցում էին Մայր տաճարի լուսարարապետ և Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը և հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի և Ամենայն Հայոց Հայրապետի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում:

Զրույցին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԳԵՐԱԳՈՒՅՆ, ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՈՐԻՆ, ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԿԱԶՈՒՆ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

Ձերդ Գերազանցություն,

Իմ ամենաանկեղծ շնորհակալությունն եմ հայտնում Ձեր 20 հունիսի 1987 թվակիր նամակի համար. ցավում ենք, որ «Լ'Օսսերվատորե Ռոմանո» թերթի մի քանի ոչ ճիշտ արտահայտություններ տեղիք են տվել որոշ երկմտությունների: Ակդարև, մենք քաջ գիտակցում ենք Մայր Աթոռ ս. Էջմիածնի տեղն ու դիրքը և կարող ենք Ձեզ հավաստիացնել, որ Նորին Սրբություն Խորեն կաթողիկոսը երբեք չի ուզեցել ներկայանալ որպես Հայաստանյայց եկեղեցու գլուխ, որպես ամբողջ հայ եկեղեցին ներկայացնող: Եթե Սուրբ Հայրը դիմել է նրան ասելով՝ «Հանձին Ձեզ Մենք ողջունում ենք ամբողջ հայ եկեղեցին»,—այդ նրա համար է եղել, որ նա ցանկացել է օգտվել այդ ալցելության առիթից՝ արտահայտելու համար իր ամբողջ հարգանքն ու ամբողջ սերը Հայաստանյայց եկեղեցու և հայ ժողովրդի նկատմամբ: Եվ որովհետև նա գիտեր, թե ինչ տեղ է գրավում Ամենայն Հայոց Գերագույն կաթողիկոսը հայ եկեղեցու մեջ, ճիշտ դրա համար էլ նա առանձնապես հիշատակել է Էջմիածնի Մայր Աթոռը որպես Հայաստանյայց եկեղեցին ղեկավարողը:

Մյուս կողմից,—և Ձերդ Գերազանցությունն այդ հասկանում է,—հենց այն հարգանքը, որ մենք ունենք դեպի հայ եկեղեցին, մեզ արգելում է միջամուխ լինել այն հարցերի մեջ, որոնք հավանաբար կարող էին քննարկվել այդ եկեղեցու ներսում: Վերջապես, կցանկանայի ճշտել Ձերդ Գերազանցությանը, որ «Լ'Օսսերվատորե Ռոմանո»-ն սուրբ Աթոռի պաշտոնաթերթը չէ: Այդ պաշտոնաթերթը «Ակտա Ապոստոլիկաս Սեդիս»-ն է: «Լ'Օսսերվատորե Ռոմանո»-ն օրաթերթ է, և Ձերդ Գերազանցությունը կհասկանա անշուշտ, որ դժվար է որոշ հանգամանքներում վերստուգել այն բոլոր արտահայտությունները ու տիտղոսները, որ տալիս են թղթակիցները, որոնք կարող են ճշտիվ իրազեկ չլինել Արևելքի սուրբ եկեղեցիների տիտղոսներին և կազմակերպությանը:

Հուսով եմ, որ այս մի քանի տողերը կվարատեն մտահոգությունները Ձերդ Գերազանցության, որն ամեն կերպով կարող է վստահ լինել Ամենայն Հայոց Գերագույն կաթողիկոսության նկատմամբ սուրբ Աթոռիս ունեցած բարի դիտավորությունների և տրամադրությունների մասին:

Շնորհակալություն հայտնելով Ձերդ Գերազանցությանը իր եղբայրական անկեղծության համար, խնդրում եմ բարի լինել ընդունելու հարգալից սիրո իմ զգացմունքների արտահայտությունը ի Տեր մեր Հիսուս Քրիստոս:

ԿԱՐԴԻՆԱԼ ԲԵԱ

ՎԱՏԻԿԱՆ, 11 ՀՈՒԼԻՍԻ 1967 Թ.

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԻՆԱԼ ԲԵԱՅԻՆ՝ ՆԱԽԱԳԱՀ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ

ՎԱՏԻԿԱՆ

Հուզումով կարդացինք Ձերդ Գերազանցության 11 հուլիս 1967 թվակիր նամակը և ուրախությամբ հաստատեցինք, թե ինչքան, իսկապես, եղբայրական է Ձեր վերաբերմունքը դեպի հայ եկեղեցին և դեպի հայ եկեղեցու պատմական միակ կենտրոն սուրբ Էջմիածինը: Ձեր տված լուսաբանությունները «L'Osservatore Romano» թերթի մի քանի ոչ ճիշտ արտահայտությունների մասին Մայր Աթոռ ս. Էջմիածնի դիրքի և հեղինակության վերաբերյալ և մանավանդ Ձեր գրության անկեղծ ոգին գոհունակություն պատճառեցին մեզ բոլորիս:

Մենք համոզված ենք, թե Ձերդ Գերազանցությունը ճիշտ է հասկացել մեր արդար մտահոգությունները: Եվ կցանկանայինք հավաստիացնել Ձեզ, թե մենք ևս ճիշտ ենք հասկանում ու բարձր գնահատում Ձեր նամակի ոգին:

Ուրախալի է, որ եկեղեցիների միջև լինեն այսպիսի փոխադարձ եղբայրական սիրալիր հարաբերություններ:

Սուրբ Ավետարանի ճշմարիտ ոգին է, որ ճառագայթում է: Կարծում ենք, թե համամիտ կլինեք, որ Ձեր վերոհիշյալ նամակը հրապարակենք Մայր Աթոռիս պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրում:

Ընդունեցեք, Ձերդ Գերազանցություն, Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոսի ջերմագին ողջույնները և բարեմաղթությունները և մեր աղոթքները Ձեր նվիրական գործերի հաջողության համար:

«Եւ ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս և Աստուած և Հայր մեր, որ սիրեացն զմեզ և ետ մեզ մխիթարութիւն յաւիտենից՝ և յոյս բարեաց շնորհօք, մխիթարեսցէ զսիրտս ձեր և հաստատեսցէ յամենայն բանս և ի գործս բարութեան» (Բ. Թես. Բ. 16—17):

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ատենապետ Գերագույն Հոգևոր խորհրդի

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, 12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1967 Թ.

ՀՆԴԻՍ ՄԱՍԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սեպտեմբերի 21-ին՝ հինգշաբթի օրը, Վեհափառ Հայրապետի հրավերով, գիշերվա մամը 11-ին Մայր Աթոռ ս. Էջմիածին է մեկնում հնդիկ մայրաքաղաք եկեղեցու պատվիրակությունը՝ Քոչինի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն **Տ. Հովհաննես Մար Սեվերիոսի** գլխավորությամբ:

Պատվիրակությանը կազմում էին՝ **Տ. Թովմաս Մար Տիմոթեոսը՝** Քերալայի նահանգի Կալիկատի միտրոպոլիտը, Քոթայամի առաջնորդարանական հեմարանի փոխ-տեսուչ **հ. Մ. Վ. Ջորջը,** Քերալայի կաթողիկոսական կոլեջի դասախոս **հ. Պ. Ա. Սամվելը** և կաթողիկոսարանի բարտուղար **Հակոբոս Ստեփանը:**

Պատվիրակությանը ուղեկցում էր Մոսկվայից՝ Վոլոկորոցկի և Վելիկոլուցկուժսկի **տ. Մելիքսեդեկ եպիսկոպոսը:**

Երևանի օդանավակայանում, հանում Հայոց Հայրապետի, քույր եկեղեցու պատվիրակությանը դիմավորում են՝ լուսարարապետ տ. Հայկազուն արք. Աբրահամյանը, հեմարանի տեսուչ տ. Նելսոն Ն. վարդապետը և տ. Մուշեղ վարդապետը:

Իջման ս. սեղանի առաջ իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, հյուրերը առաջնորդվում են վեհարան, ուր հրանց ընդունում է Ամենայն Հայոց Հայրապետը:

Ողջույնի, բարիգալստյան ջերմ արտահայտություններից հետո, քույր եկեղեցու ներկայացուցիչները հյուրընկալվում են վեհարանում:

Սեպտեմբերի 22-ին՝ ուրբաթ օրը, պատվիրակությունն այցելում է Մայր տաճար և ս. Հռիփսիմեի վանք:

Այնուհետև հյուրերը Երևանում այցելում են ս. Սարգիս եկեղեցին, Սեղբոս Մաշտոցի անվան Մատենադարան և մամը 12-ին ուղևորվում են գնում Օշական՝ ս. Սեղբոս Մաշտոցի գերեզմանը:

Մամը 3-ին վեհարանի սեղանատունը, պատվիրակության և հրան ընկերակցող անձանց պատվին, տրվում է պաշտոնական ճաշկերույթ՝ մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանության:

Ընդունելությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հոգևոր եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաբյանը:

Վեհափառ Հայրապետը ընդունելության մասնակից խոսք առնելով, Իր ուրախությունն ու գոհունակությունն է հայտնում հնդիկ մայրաքաղաք եկեղեցու պատվիրակության՝ Մայր Աթոռ ժամանման ուրախ առիթով, պատմելով, որ Նրանք լավագույն հիշողություններ է պահել պատմական այն այցելությունից Քոթայամ՝ քույր եկեղեցու աթոռանիստ կենտրոնը, 1963 թվականի նոյեմբերին:

Վեհափառ Հայրապետը ընդգծում է նվիրական պարտականությունը քույր եկեղեցիների և ճշմարիտ բրիստոնյաների, պաշտպան կանգնելու աշխարհի խաղաղության գործին:

Ն. Ս. Օծությունն Իր խոսքն ավարտում է՝ բաժակ բարձրացնելով Հնդկաստանի բարգավաճման, մայրաքաղաք քույր եկեղեցու պետ, Ն. Գերություն Ոգեկ կաթողիկոսի արեշատության, մայրաքաղաք եկեղեցու անսասանության և բարեպաշտ հավատացյալ ժողովրդի բարգավաճման համար:

Հայոց Հայրապետի սիրալիր խոսքերին պատասխանում է Տ. Հովհաննեսն միտրոպո-

լիտը՝ շնորհակալություն և երախտագիտություն հայտնելով Հայոց Հայրապետի սիրալիր հրավերի, ջերմ ընդունելության և սրտառուչ խոսքերի համար, և բաժակ է բարձրացնում հայ և մալաբար եկեղեցիների եղբայրական համագործակցության, հայ և հնդիկ ժողովուրդների բարօրության կենաց:

Վեհափառ Հայրապետը բաժակ է առաջարկում Ն. Սրբություն Ալեքսի պատրիարքի կենաց, շեշտելով, որ հայ և ռուս պրավոսլավ եկեղեցիները եղբայրներ են, և հայ ժողովրդի պատմության վերջին հիսնամյակում մանավանդ, ռուս բարի ժողովուրդը կատարել է մեծ և շնորհակալ գործ՝ հայ ժողովրդի ազգային զարթոնքի համար: Այս զգացմունքներով, ի դեմս տ. Մելքիսեդեկ եպիսկոպոսի, Վեհափառ Հայրապետը բաժակ է բարձրացնում Տ. Ալեքսի պատրիարքի կենաց:

Հայոց Հայրապետի հուզիչ խոսքերին պատասխանում է տ. Մելքիսեդեկ եպիսկոպոսը երախտագիտական և շնորհակալության զգացմունքներով, շեշտելով, որ հայ և ռուս եկեղեցիների և ժողովուրդների բարեկամությունը խորը արմատներ ունի՝ հիմնված փոխադարձ սիրո, հարգանքի վրա:

Մալաբար քույր եկեղեցու պատվիրակության պատվին տրված ճաշկերույթն ավարտվում է խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Երեկոյան ժամը 7-ին հարգարժան հյուրերը այցելեցին հոգևոր ճեմարան, ուր նրանց ջերմորեն ողջունեց տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը՝ ծանրանալով ճեմարանի անցյալի պատմության, հայ եկեղեցու կյանքում նրա կատարած մեծ դերի և այժմյան վիճակի, ուսանողության թվի, ուսումնական ծրագրի վրա:

Ուսանողները, ի պատիվ հյուրերի, կատարեցին մի շարք կրոնական երգեր և շարականներ:

Վերջում Տ. Հովհաննես միտրոպոլիտը և Քոթայամի աստվածաբանական ճեմարանի փոխ-տեսուչ հ. Մ. Վ. Ջորջը հանդես եկան ճեմարանի ուսանողության ուղղված խրատական խոսքով:

Սեպտեմբերի 22-ին՝ ուրբաթ.

Այսօր առավոտյան ժամը 10-ին հյուրերը և նրանց ընկերակցող անձինք ուխտի գնացին ս. Գեղարդի վանքը և այցելեցին Գառնիի ավերակները:

Սեպտեմբերի 23-ին՝ շաբաթ.

Հնդիկ մալաբար եկեղեցու պատվիրակությունը և նրան ընկերակցող անձինք ուխտի գնացին Սևանի պատմական վանքերն ու գրոսապտույտ կատարեցին լճի վրա:

Երեկոյան ժամը 8-ին վեհարանում հյուրերը դիտեցին «Էջմիածին» կինոնկարը:

Սեպտեմբերի 24-ին՝ կիրակի, առավոտյան ժամը 9-ին, քույր եկեղեցու պատվիրակությունը և նրան ընկերակցող անձինք հրաժեշտ առին Հայոց Հայրապետից և մեկնեցին Կին:

Օդանավակայանում հարգելի հյուրերին ճանապարհեցին՝ գեր. տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, տ. Ներսես ծ. վարդապետը և տ. Մուշեղ վարդապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՀՆԴԿ ՄԱՍԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԸՆԿԵՐՈՎ



«ԿԱԹՈՂԻԿԷ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 24-ին՝ կիրակի օրը, աղոթքով, ս. պատարագի մատուցմամբ ու հայրապետական օրհնությամբ, հանդիսավոր իրադրության մեջ կատարվեց Մայր Աթոռի շրջափակում, արևելյան մեծ դարպասի մոտ, դեպի Մայր տաճար տանող ճանապարհի հարավային մասում, «Կաթողիկէ»—հուշարձանի բացումը՝ նվիրատվությամբ բնիկ քղեցի, ամերիկահայ Ստեփան Տեր-Գրիգորյանի, ի հիշատակ Տեր-Գրիգորյան գերդաստանի, ի հիշատակ նշեցյալների և 1915 թվականի Եղեռնին նահատակված շուրջ քսանհինգ հարազատների և իրենց հայրենական այգու՝ «Կաթողիկէի»:

Օրվա հանդիսավոր ս. պատարագը մատուցում է ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Գնել եպս. Ծերենյանը, որը և «Հայր մեր»-ի ժամանակ բարոզում է «Ինչուրս դիք և կատարեցէք» բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան հատուկ կարգ՝ նվիրատվի մնողների, հարազատների և Տեր-Գրիգորյան և Պարսյան ընտանիքների նշեցյալների հիշատակին նվիրված:

Եկեղեցական արարողության ավարտին, Վեհափառ Հայրապետը թափորով, աղոթքով ու շարականով առաջնորդվում է «Կաթողիկէ»—հուշարձանի մոտ՝ կատարելու համար աղբյուրի հանդիսավոր բացումը, իսուններում հավատացյալ ժողովրդի և ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Իտալիայից, Լիբանանից ժամանած ուխտավորների ներկայությանը:

Մայր Մաշտոցից կատարվում են շինության կառուցման և կանգուն մնալու մասին համապատասխան աղոթքներ ս. գրական ընթերցումներ, երգվում՝ շարականներ: Ապա Վեհափառ Հայրապետը ընդհանուր խանդավառության և ծափերի մեջ կտրում է ժապավենը և նույն րոպեին հոսում է նորակերտ աղբյուրի ջուրը՝ որպես օրհնություն, որպես բարիք և կենդանություն:

Մայր Աթոռի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը իր բովանդակալից ելույթում բացատրում է օրվա հանդիսության նշանակությունը՝ ոգեկոչելով նաև հիշատակը Տեր-Գրիգորյան գերդաստանի նահատակ նշեցյալներին, որոնց հիշատակին և հայրենական Քղի քաղաքի ու այգու հավերժության համար կանգնեցվել է «Կաթողիկէ»-ը հայրենի հողի վրա, ս. Էջմիածնի նվիրական կամարների ներքո:

Զարմանալի հուզիչ ու տպավորիչ էր նվիրատուի՝ 80-ամյա ծերունազարդ Ստեփան Տեր-Գրիգորյանի շնորհակալության և երախտագիտական խոսքը ուղղված Հայոց Հայրապետի և հայրենի կառավարության, ընթերցված դողդոջուն ձայնով, բայց տիրական հավատքով և հայրենասիրությամբ.

«Վեհափառ Հայրապետ,

Հոգևոր Հայրեր,

Քույրեր, Եղբայրներ,

Պանդխտությանս 58 տարիներու անավոր ու անույշ հարվածներեն առողջությունս վտանգված, բժշկական թելադրությամբ պարտավոր էի զգուշանալ երկար ու հեռավոր ճամբորդութենե մը: Սակայն կրկին Հայաստանը այցելելու և նորեն մայր հայրենիքը տեսնելու և ս. Էջմիածնի մեջ աղոթելու ջերմ ու վառ բաղձանքս մեղմացուց բժշկական պատվերը, և ահա Էջմիածնա գրկին մեջ հաճելի երազի մը իրականացումը կապրիմ այնքան խանդավառորեն:

Հայկական Մեծ եղեռնի այլուսնուտ տարի-

ներեն յետոյ նեռոյ, 1918 թվականին, ցաւագին իրողությունը խորապես ցնցեց հոգեկան ամբողջությունն, երբ բարբարոս ու ոճրածին թուրքին կողմե խժդժորեն նահատակված մեկուկես միլիոն արյունակիցներուս մեջ եւ Աստուծոյ տրբազան հոգին վրա։

Ընդունեն կես դար նեռոյ, այս նամեռոյ տարեդարձն խոնարհաբար հայտնեցի տեր շնորհազարդ Վեհափառ Հայրապետին՝ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին։



Աղբյուր-հուշարձանի հանդիսավոր բացումը

ալ ունեցա գերդաստանիս 28 անդամներու անմոռանալի կորուստը, երեխաներեն մինչեւ 93 տարեկանը։

Նաեւ հիմնովին քանդված տուն-տեղ, կալվածք ու համանուն կաթնաղբյուրը մեր, որ գոյություն առած էր գերդաստանիս նահապետ մեծ հորս՝ տեր Գրիգոր ավագ քահանայի ձեռամբ ծննդավայր Քղի քաղաքի մերձակա բարձրադիր լեռան ստորոտը։ Աղբյուր մը, որուն օրինյալ ջրովը շաղախված էր հարազատներուս միսն ու ոսկորը դարերե ի վեր։

Հետեւաբար, բազմանդամ գերդաստանիս որպես մեկ վերապրող սգակիր անդամը՝ նվիրական պարտականություն զգացի զոհությունն ու նվիրումի ամեն գնով, արժանավոր հուշարձանով մը հավերժացնել հարազատներուս քաղցր հիշատակը մայր Հայրենիքի տրբազան հողին վրա։

Այսօր՝ այս պահուս, գերազանցորեն երջանիկ կզգամ, որ Նորին Սրբությունը Իր և հայրենի կառավարության բարեհաճությամբ ընդունեց խնդրանքս՝ իրականացումովը այս կաթնաղբյուր-հուշարձանին, հոգեկան սուրբ գոհունակություն պարգևելով ինձ։ Եվ պատահաբար գերդաստանիս հավետ բաժնված ընջեցյալներուս չարչարված հոգիներն ալ պիտի հրճվին այս հիշատակարանի օրհներգությամբ։

Այժմ երախտագիտական խոր զգացումով համակված, անհուն շնորհակալություններս կհայտնեմ մեր շնորհազարդ Հայրապետին՝ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին, և հայրենի կառավարության, որոնց բարի ու ազնիվ կամեցողությամբ կարելի եղավ իրականացնել այս կաթնաղբյուր-հուշարձանի կառուցումը ս. Էջմիածնա նվիրական հողին վրա։

Թող մեր ինքն սպրի հայ ժողովուրդը, Հայաստանի կառավարությունը և Հայոց Հայրապետը:

Ստեփան Տեր-Գրիգորյանը ընթերցում է իր նրախտագիտական խոսքը

Հանդիսության պաշտոնական բացումից հետո, վեհափառ Հայրապետը մոտենում է աղբյուր-հուշարձանին և ըմպում նրա սառնորակ ջուրը՝ «Հոգուց» արտասանելով հայ ժողովրդի բոլոր նահատակների հիշատակին:

«Եղէք ջուր ուրախութեան յաղթերացն փրկութեան (Եսայ. ԺԲ. 3):

Աղբյուր-հուշարձանի վրա փորագրել է հետևյալ արձանագրությունը.

Ի հայրապետության Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի, 1967 թվականին կառուցվեց սույն աղբյուր-հուշարձանը՝ նվիրատվությամբ ամերիկահայ Ստեփան Տեր-Գրիգորյանի, ի հիշատակ քրեցի նահատակ Գրիգոր ավագ քահանա Պարսյանի, մեծ հոր՝ Ավագի, ծերունիների՝ Մանուկ և Ալիս Տեր-Գրիգորյանների, 1915 թվականի Եղեռնին նահատակված բազմաթիվ հարազատների և նրանց հայրենական այգու՝ «Կաթնաղբյուր»-ի:

Աղբյուր-հուշարձանի նկարիչն է վաստակավոր ճարտարապետ Իսահակ Իսրայելյանը, շինարար-ճարտարապետը՝ Տիրման Խաչատրյանը՝ Մայր Աթոռի ինժեներ, վարպետ քարտաշները՝ Հրաչիկ Ստեփանյանը, Դավիթ Դավթյանը և Սարգիս Բոբոյանը:

Մարտ 3-ին, վեհարանում, օրվա նախագահության պատվին, ընդունելություն էր կազմակերպված, որին հրավիրված էին Մայր Աթոռի միաբանությունն ու Կենտրոնի հոգևոր իշխանների անդամները, ոչխարապարապ ս. Էջմիածնում գտնվող հյուրերը, այդ թվում Կանադայի առաջնորդական փոխանորդ տ. Վազգեն վրդ. Հովսեփյանը, ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Վազգեն վրդ. Գրիգորյանը, Մայր Աթոռի բարերար Երվանդ Հուսիսյանը (Միլանոյից), տեր և տիկին Արծրուն-Էլիզա Զըրբաշյանները (Սարսելից), բանաստեղծ-գրող Արամայիս Արապյանը (Միլանոյից), Ստեփան Տեր-Գրիգորյանը և Հակոբ Թորոսյանը, Հակոբ Նազարյանը (Ամերիկայից), երաժշտագետ Աշոտ Պատմագրյանը և հասարակական գործիչ Փանոս Թիթիզյանը (Լիբանանից), Սարգսյան Փոսիազյանը (Պլովդիվից) և այլ հյուրեր:

Ընդունելության ժամանակ վեհափառ Հայրապետը ս. Գրիգոր Լուսավորչի Առաջին կարգի շքանշանով զարդարեց կուրծքը «Կաթնաղբյուր»-հուշարձանի նվիրատու Ստեփան Տեր-Գրիգորյանի կուրծքը:

Ջերմ մթնոլորտում ելույթներ ունեցան ճարտարապետ Միրզայի Մազմանյանը, Աշոտ Պատմագրյանը և Փանոս Թիթիզյանը: Վեհափառ Հայրապետին ուղղված խորունկ երախտագիտության և շնորհակալության սրտառուչ խոսք ասաց Ստեփան Տեր-Գրիգորյանը:

Ընդունելությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԾԱՆՈՒՑՈՒՄ



Մայր Աթոռի Դիվանը այսու լիազորված է հայտնելու, թե Վեհափառ Հայրապետի վերջին ուղևորության ընթացքում, հուլիսի 22—30 օրերին, կորել է Նորին Ս. Օծության հայրապետական մետաղյա կնիքը, որի նմուշը հրատարակվում է առընթեր։

Սույն կնիքը այսուհետև համարվում է անվավեր։

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒ

20 օգոստոս 1907

* * *

Օգոստոսի 13-ին՝ կիրակի.—Վերափոխումն սուրբ Աստուածածնի։

Օրվա մեծ տանի առիթով Մայր տաճարում պատարագեց լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը։

Ս. պատարագին ներկա էին բազմաթիվ ուխտավորներ և սփյուռքի զանազան կողմերից եկած ուսուցիչներ։

Հավարտ ս. պատարագի տեղի ունեցավ «Կարգ խաղող օրհնելոյ»։

* * *

Օգոստոսի 14-ին՝ Երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց։

Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ «Վասն համօրէն ննջեցելոցն»։

* * *

Օգոստոսի 20-ին՝ կիրակի.—Երկրորդ կիրակի զկնի Վերափոխման։

Հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը պատարագեց Մայր տաճարում։

Ս. պատարագին ներկա էին ֆրանսահայ բազմաթիվ ուխտավորներ։

Ավելի ուշ Մայր տաճար այցելեցին Ֆրանսիայի, Բելգիայի տարբեր դավանությանց մի խումբ հոգևորականներ, որոնք վերջում բնդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից։

* * *

Օգոստոսի 24-ին՝ Երինգշաբթի.—*Երեկոյան ժամը 6-ին, վեհարանում, տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ընդլայնված նիստը, որտեղ Վեհափառ Հայրապետը շուրջ երկու ժամ խոսեց հուլիսի 10—13 օրերին Ժնևում եկեղեցիների համաշխարհային խոր-*

Հրոյի և ապա հուլիսի 19—20 օրերին մեկ-մանուկ հանդիսների ոսկած իր այցելության ազգային-եկեղեցական արդյունքների մասին։

Նիստին ներկա էին Մայր Աթոռի միաբանություն, մայրավանքի զեկավար աշխատողներ, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Վերատուգիչ հանձնաժողովի և Արարատյան թեմի թեմական խորհրդի անդամները։

Մայր տաճար այցելեց Ֆրանսահայ երկրորդ ուխտավորների խումբը։

Վեհափառ Հայրապետը, վեհարանում, ընդունեց նրանց։

* * *

Օգոստոսի 25-ին՝ ուրբաթ.—Երեկոյան ժամը 6-ին, վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը։

* * *

Օգոստոսի 27-ին՝ կիրակի.—Տոն գիտի պատոյ սրբուհւոյ Աստուածածնի։

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան ժամը 6-ին Մայր Աթոռ ժամանեց հոգ. տ. Մամբրե վրդ. Մարգարյանը։

* * *

Օգոստոսի 31-ին՝ հինգշաբթի.—Այսօր ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը վեհարանում ընդունեց այցելություններ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Իրանից, Կիպրոսից, Եթովպիայից եկած և ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող շուրջ 30 հայ ուսուցիչ-ուսուցչուհիների խմբի։

Ն. Ս. Օծությունը մտերմիկ զրույցի ժամանակ հետաքրքրվեց սփյուռքահայ ուսուցիչների կյանքով և գործունեությամբ և ապա օրհնելով նրանց կրթանվեր գանձերը, հայրություն մաղթեց նրանց։

Այցելության ժամանակ ուսուցիչների խումբը հյուրասիրվեց Մայր Աթոռի բարիքներով՝ խաղողով ու գնդով։

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետը ընդունեց Բելգիայից ժամանած մի խումբ ուխտավորների այցելությունը։

* * *

Սեպտեմբերի 3-ին՝ կիրակի.—Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

Ս. պատարագին ներկա էին շուրջ 30 ուխտավորներ, որոնք ընդունվեցին Վեհարանում Վեհափառ Հայրապետի կողմից։

* * *

Սեպտեմբերի 10-ին՝ կիրակի.—Բաբելկեն-դան ս. Խաչի պատոյ։

Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Հովհաննես քհն. Մարուքյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև ամերիկահայ ուխտավորները։

Ժամը 2-ին Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը՝ հյուրախաղերով մայր հայրենիքում գտնվող Մեսրոպյանի հանրածանոթ երգչուհի Լիլի Զուրաբյանի։

* * *

Սեպտեմբերի 17-ին՝ կիրակի.—Խաչվերաց։

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում պատարագեց գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը։

Ս. պատարագին ներկա էին՝ Վեհափառ Հայրապետը և ուխտավորների մեծ խումբ։

Երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց Մայր տաճարում և վանքի շրջափակում խաչվերացի ավանդական թափորը։

* * *

Սեպտեմբերի 18-ին՝ երկուշաբթի.—Ցիստակ մեռելոց։

Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Նշան քհն. Թելլերյանը։

Հավատաս. պատարագի տեղի ունեցավ հոգեհանգիստ՝ «Վասն համօրէն ննջեցելոց»։





ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 11-ին՝ երկուշաբթի օրը, ամառային արձակուրդներից հետո, հոգևոր ճեմարանի դռները աղոթքով ու օրհնությամբ վերաբացվեցին ուսանողության առաջ: Սկսվեց 1967—1968 ուսումնական տարին:

Վերաբացման հանդիսության նախագահում էր Վեհափառ Հայրապետը:

Հանդիսությունն սկսվեց ՀՍՍՀ պետական հիմնի նվագով: Այնուհետև, հոգևոր ճեմարանի սաների երգչախումբը կատարեց «Որք զարդարեցին», «Նմանեալ Մովսիսի», «Աշակերտք Քրիստոսի» շարականները և ճեմարանի քայլերգը:

Ճեմարանի վերակացու արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը ընթերցեց Մատթեոսի Ավետարանից սերմնացանի առակը, իսկ Բ լսարանի ուսանող Հովհաննես Գրվզգյանը՝ Լարեկից սուրբ Հոգու ուղղած աղոթք-աղերսը (Բան ԼԴ):

Ճեմարանի վերատեսուչ տ. Ներսես ծ. վարդապետը ողջունելով հոգևոր ճեմարանի 28-րդ ուսումնական տարեշրջանի բացումը, ուսանողներին դիմեց բովանդակալից խրատականով՝ հորդորելով այս տարին ևս լինի աշխատասիրության, կարգապահության, աղոթքի և ինքնամփոփման տարի, հայցելով Աստծու օգնականությունն ու Վեհափառ Հայրապետի օրհնությունը կրթական, հոգևոր այս հաստատության աշխատանքների արդյունավորության, պտղաբերության, ուսանողության իմացական, ոգեկան ուժերի աճման և հարստացման համար:

Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետը Իր պատգամն ու օրհնությունը տրվեց ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողության՝ հորդորելով լինել որքան աշխատասիրության, նույնքան և սոլոթի մարդը:

Հոգևոր ճեմարանի 1967—1968 ուսումնական տարվա վերաբացման հանդիսությունն ավարտվեց հայրապետական օրհնությամբ և «Պահպանիչ»-ով:

Այս տարի հոգևոր ճեմարանի ուսանողության ընդհանուր թիվը լինելու է 40՝ բաժանված Ա, Բ, Գ դասարանական և Ա, Բ, Գ լսարանական բաժինների վրա, ըստ հետևյալի.

Ա դասարան՝		7
Բ	»	8
Գ	»	7
Ա լսարան՝		4
Բ	»	9
Գ	»	9

Սպասվում են 4 ուսանողներ Բուխարեստից և 5-ը՝ Բեյրութից:

Օգոստոսի 31-ին, երեկոյան ժամը 18-ին, հոգևոր ճեմարանի տեսչարանում գումարվեց մանկավարժական խորհրդակցական ժողով, ուր մտքերի փոխանակությունից հետո վերանայվեցին ու հաստատվեցին 1967—1968 ուսումնական տարվա պլանը, դասաժամերը և ամբողջ տարվա գործունեության ծրագիրը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի վերաբացման առիթով, Վեհափառ Հայրապետը վեհարանում ընդունեց դասախոսներին:

Տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը դ. Ա. Օձոյան ներկայացրեց մանկավարժական ժողովում քննության առնված հարցերը՝ խնդրելով Նրա օրհնությունը ուսումնական նոր տարվա առիթով:

Վեհափառ Հայրապետը ուրախությամբ ողջունելով դասախոսների վերադարձը դեպի իրենց սիրելի աշխատանքը՝ դեպի հոգևոր ճեմարան, Իր գոհունակությունն ու ուրախությունը հայտնեց և զրույցի ժամանակ դասախոսների ուշադրությունը հրավիրեց մի շարք կարևոր ուսումնա-դաստիարակչական աշխատանքների վրա, ավելի այդպիսիներ դարձնելու համար դասավանդությունները:

Սեպտեմբերի 12-ին՝ երեքշաբթի օրը, հոգևոր ճեմարանի կամարների տակ հնչեց նոր դասավանդության զարթոնքի զանգը:

Սկսվեց 1967—1968 ուսումնական տարին:

ՆԱՐԵՍ ՎՐԴ. ՇԱՔԱՐՅԱՆ

(Ս. Գևորգյան վանքի վանահայր)

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄ

(Ճամփորդական նոթեր)

Քրիստոնյայի համար չկա ավելի քաղցր զգացումնք, քան գնալ ուխտի դեպի քրիստոսակոխ ս. Երուսաղեմ, երկրպագել մեր Փրկչի գերեզմանը, լինել բոլոր այն սրբավայրերում, որոնք կապված են Քրիստոսի տնօրինական գործերի հետ։

Տարիներ շարունակ իմ հոգու իղձն է եղել, երազը՝ տեսնել աստվածաշնչական սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը։ Եվ ահա այս տարի զատկական տոնի օրերին (Զատիկը՝ հին տոմարով ապրիլի 30-ին) իրականացավ իմ իղձը, երբ Գորկու և Պսկովի մարզերի մի խումբ ուս հավատացյալների հետ տ. Հովհաննես արք.-ի գլխավորությամբ, ուխտի գնացինք Երուսաղեմ։

Երուսաղեմը ուխտի քաղաք է, բայց հայ ուխտավորի համար այդ քաղաքը ունի նաև մի այլ նշանակություն։ Վաղ ժամանակներից սկսած հայ ժողովուրդը և հայ եկեղեցու անունը կապված է եղել այդ վայրերի հետ։ Աստվածաշնչում ակնարկություններ կան Հայաստանի և հայ ժողովրդի մասին։ Նոյի տապանը կանգ առավ Արարատ լեռան վրա։ Մեր ժողովուրդը ս. Գրքում կոչվում է «Թորգոմայ ազգ», իսկ Հայաստանը՝ «Երկիրն Արարատայ»։ Քրիստոնեության մուտքով Հայաստան, հայ ժողովրդի անունը ընդմիշտ կապվեց աստվածակոխ ս. վայրերի հետ։ Մեր պատմահայր Մովսես Խորենացին վկայում է, որ Քրիստոսի ժամանակ Եղեսիայում իշխող հայոց Արգար թագավոր պատգամավորություն ուղարկեց Երուսաղեմ՝ Ղազարիրեն համար Փրկչին հրավիրելու։ Քրիստոսն և Արգար թագավորի թղթակցությունը եկեղեցական մատենագրության հնագույն և արժեքավոր ավանդություններից մեկն է։ Այդ ավանդության հետ է կապված նաև հայ առաջին եկարիչ Նանայի և քրիստոնեական եկեղեցիների սրբությունների անձնուագործ դաստարակի պատմությունը։ Երուսաղեմի հետ է կապված նաև ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Երրորդ թագավորի անունները՝ առաջին սրբավայրերի և եկեղեցիների շինության առնչությամբ։ Ս. Երուսաղեմի հնագույն տաճարներից մեկը՝ ս. Հարության տաճարում ս. Գրիգոր Լուսավորիչ հոյակապ եկեղեցին, Լուսավորչի անունով է։ Ըստ ավանդության Լուսավորիչը այնտեղ է երգել «Լույս Զվարթ» երգը։

Այնուհետև մեր եկեղեցական մատենագրության մեջ Ը դարում Անաստաս վարդապետ Հերապոլսեցին իր փոքր, բայց պատմական մեծ արժեք ներկայացնող աշխատության մեջ, որը ունի «Վասն Վանքերէից Հայոց, որ յԵրուսաղէմ» վերնագիրը, վկայում է, որ իր շրջանին հայոց վանքերի թիվը ս. տեղերում 72 է։ Արդարև, դարերի ընթացքում հայ ժողովուրդը ս. երկրում ունեցել է բազմաթիվ վանքեր։ Քաղաքական և կրոնական հալածանքները խլել են մեզանից այդ վանքերից շատերը։ Այնուամենայնիվ, կրոնական միջազգային այդ լաղաքում դարձյալ կանգուն են հայոց վանքերը, ինչպես Սրբոց Հակոբյանց վանքը, ս. Հրեշտակապետացը, ս. Փրկիչ, ս. Հարություն եկեղեցիները, ս. Աստվածածինը և Բեթղեհեմի ս. Այրի վրա, Հոպպեի ս. Նիկողայոս եկեղեցին և այլն։ Հին օրերից մինչև այսօր բազմահազար ուխտավորներ (թագավոր, կաթողիկոս, իշխան, հոգևորական, զինվորական, այրենատավոր, մտավորական ու շինական) այցելել են ս. Երուսա-

գնում: Երուսաղեմի միաբանության անդամ Էկրտիչ եպս. Աղավնունին իր «Միաբանք և այցելուք» աշխատության մեջ տվել է ս. քաղաքը այցելող ուխտավորների անունները:

Ահա թե ինչու պատմական այս հիշողություններով, ինքնատեսական և ազգային զգացմունքներով տոգորված, ուխտի էի գնում այդ սրբազան երկիրը:

Մեկնում: Ապրիլի 25-ին «Լվ.—18» հայրենական ինքնաթիռով ուղևորվեցինք դեպի Բեյրութ՝ Լիբանանի մայրաքաղաքը: Շուրջ 10 ուխտավորներ էինք: 4—5 ժամվա թռիչքից հետո, հասանք Բեյրութ: Օրը կիսով էր, և մենք հնարավորություն ունենք ծանոթանալու Լիբանանի այդ գեղեցիկ քաղաքին: Ինձ դիմավորելու էին եկել Գևորգ վարդապետ Կարպիսյանը և մի քանի ազգականներ ու բարեկամներ: Իջնում ենք ս. Էջմիածնից, մայր Հայրենիքից, Վեհափառ Հայրապետից, մեր ճանապարհորդությունից և ուխտագնացությունից: Բեյրութի մեջ պտույտ կատարելուց հետո վերադառնում ենք տաճարավանք, որտեղ ենք՝ առնում մեր բարեկամներից և մեկուկես ժամվա թռիչքից հետո, ուխտավորների խմբի հետ, հասնում ենք Հորդանանի մայրաքաղաքը՝ Ամմանը: Մեզ դիմավորում է Ամմանի հոգևոր հովիվ տ. Անուշավան վրդ. Ջրպանյանը:

Այդեղ ուշ է Երուսաղեմ գնալու համար: Պետք է Ամմանում գիշերել և վաղ առավոտյան շարունակել ճանապարհը դեպի Երուսաղեմ, որը, ըստ տվյալների, հեռու է Ամմանից շուրջ 120 կիլոմետր:

Անցնում է առաջին գիշերը արաբական այս հողի վրա: Առավոտ է, զարթնել եմ և իմ հյուրանոցի պատշգամբից դիտում եմ չորս կողմը: Ամեն կողմ արևվեցած դաշտ, գույն և աշխուժություն,

Առավոտ է, պատրաստ ենք ու անհամբեր՝ ուղևորվելու դեպի Երուսաղեմ:

Երուսաղե՜մ, Երուսաղե՜մ: Ճանապարհը Ամմանից դեպի Երուսաղեմ ձգվում է ատոմածաշնչական միջատակներով հարուստ վայրերի ընդմիջով: Ահա ճանապարհի կեսին մեր աչքի առաջ փռվել է Մեռյալ ծովը, որը Միջերկրականի մակերևույթից ցածր է 400 մետր: Արդարև, երբ ափին կան գեղեցիկ հյուրանոցներ, տաղավարներ, անտառներ, հանգստի այլ վայրեր, գործարաններ. ծովի այի ջուրը օգտագործվում է գիտականորեն, և Մեռյալ ծովը ոչ թե մեռել է, այլ ապրում է սեր կյանքով և նոր կյանք պարգևելով իր շուրջը ապրող ժողովուրդներին:

Այնուհետև մեր մեքենան ուղղվում է դեպի Հորդանան գետը: Հայացքով փորձում եմ փնտրել այն վայրը, որը մկրտվել է Քրիստոսը: Հորդանանը պտտոր է և շրջակա հողերի գույնն ունի: Գետը սկիզբ է առնում Հերմոնի փեշերից: Գետի երկարությունը 3000 կմ է: Իջնում ենք մի պահ Հորդանան գետի ափը, լվացվում, «Գետ, մի զարմանիր» երգն եմ ես էլ սկսվում. իմ հոգին լի ալիքների մեջ թաղվեր:

Կենտրոնն ստանում ենք Երիքով: Գեղեցիկ է քաղաքը, ճարճչենիների, բանանենիների անտառներով շրջապատված, փարթամ կանաչի մեջ թաղված, և բարգավաճ խորքում, հեռավորության վրա, կանգնած է «Փորձության լեռը»: Երևակայում եմ, որ լեռան կատարին շատ գեղեցիկ և փարթամ պետք է լինի համայնապատկերը, և որ Հիսուսարար մեր Փրկիչն՝ Քրիստոսին, բարձրացնում է «Փորձության լեռ», ցույց տալու համար նրա՝ աշխարհի գեղեցկությունը, և՝ նրա վայելքը, ինչպես նաև այդ աշխարհի ունայնությունները:

Կանգնում է Երուսաղեմի կարոտը, պետք է շտապել, և մենք շարունակում ենք դեպի առաջ: Ճանապարհը բարձրանում է դեպի վեր, անցել է արդեն երկու ժամ, բայց դեռ մենք չենք հասել: Նայում եմ ժամացույցիս և հաշվում եմ ոտքերս: Հոգնում ավելանում է, և վերջապես բարի վայրերը ժամով ցույց է տալիս քաղաքը: Ահա Երուսաղեմը՝ լույսերի ետևից, գեղեցիկ իր աշտարակներով, եկեղեցական կաթողիկեներով, հին պարիսպներով, պատմական մզկիթներով: Առաջին հայացքից զգում ես, որ արդարև մտնում ես մի սուրբ և կրոնական շնչով ծծուն մի քաղաք:

Ս. Հակոբա վանքում: Ճանապարհը դեպի հայոց վանք անցնում է հին պարիսպների առակով և ոլորապտույտ ճեղ ճանապարհով: Մոտենում ենք դեպի մուտքը վանքը, որտեղ պետք է իջնենք մեր ուսն ուխտավոր բարեկամները, իսկ այնուհետև ես, որպես հայ վարդապետ, պետք է մտնեմ Ս. Հակոբյանց վանքում:

Հասել եմ վանքի դռան առաջ: Ինձ դիմավորում են թարգման Գևորգ վարդապետն ու Վեհանդ արեղա Սամուելյանը, և ծանոթ բարեկամներ: Հոգումը միշտ ուղեկիցս է, խեղդում է ինձ, արցունքներ կան աչքերիս մեջ, և ես ինձ կորցրել եմ, շարժվում և խոսում եմ մեքենայաբար, այնուամենայնիվ, հետո՝ գրկախառնումներ, բարիգալուստի խոսքեր, նոր հոգոտներ, համբույրներ, ու առաջնորդվում եմ դեպի տաճար «յուխտ և լիակրպագութիւն»:

Արտասուքի մտնում եմ Ս. Հակոբյանց վանքի գլխավոր մեծ դարպասից ներս, որ ամեն ինչ հնաբույր է, զանգվածային, տպավորիչ ու խորհրդավոր: Ինձ նախ առաջնորդում են ս. Գլխադիրի մատուռը: Ուխտավորի երկյուղածությամբ մտնում եմ ներս՝ կատարելու տարիների իղձս: Ամեն կողմ լույս ու խորհրդավորություն, խունկ ու աղոթք, պլպլացող կանթեղներ և հայկական եկեղեցու խունկի անուշ բուրմունք: Մոտեցի եմ գալիս ս. Գլխադրի իսկական առաջ և աղոթում: Ավագ խորանի առաջ ես կատարում եմ իմ ուխտն ու աղոթքս: Այնուհետև վարդապետ հայրերի ուղեկցությամբ առաջնորդվում եմ դեպի հայոց պատրիարքարանը՝ իմ որդիական հարգանքները մատուցելու սրբազան պատրիարքին:

Ուստիճանները մեզ տանում են դեպի վեր՝ երկրորդ հարկ պատրիարքարան:

Իր ազնվության համատարած նշույլ՝ Ամենապատվությունը, միշտ ժպտագեմ ու սիրալիր, ընդունում է ինձ ջերմորեն: Համբուրում եմ ս. աջը, հաղորդում եմ Վեհափառ Հայրապետի հայրական ողջույնները,

Սրբազան պատրիարքի մոտ են Անթիլիասից ուխտի եկած Ոսկան և Զարեհ աբեղաները:

Ավելի քան երկու ժամ մնում եմ Նորին Ամենապատվության մոտ, վայելում եմ նրա քաղցր ներկայությունը:

Ուշ երեկո է, բարի գիշեր եմ մաղթում սրբազան պատրիարք Հորը: Իմ ուխտավորության շրջանին ինձ բնակարան է հատկացվում «Պախչա քաղ»-ում: Սիրելի էր միջավայրը, վանական այդ մթնոլորտը՝ շրջապատված եպիսկոպոսներով, վարդապետներով ու աբեղաներով, որոնք առաջին իսկ րոպեից ինձ ընդունում են և շրջապատում սիրով ու գուրգուրանքով: Նյութից մեջ նախկին ծանոթներ ունեի՝ Կյուրեղ վրդ. Կարիկյանը, Հանիել վրդ. Շամլյանը, որը մեր ս. Էջմիածնի նախկին ճեմարանցին էր, որոնք ինձ հանգամանորեն ծանոթացնում են միաբանական քաղի միջավայրին, միասին բարձրանում ենք դեպի միաբանական շենքերի տանիքը, ուր մեր աչքերի առաջ պարզվում է հոյակապ մի տեսարան՝ ս. քաղաքի համայնապատկերը՝ մինչև Հեռու Մեղալ ծով:

Երեկո է արդեն. օրը այսպես անցնում է տպավորություններով և հուշերով լեցուն:

Զատկական հանդիսություններ: Տարվա բոլոր կրոնական հանդիսություններին ու ամիսներին հետաքրքիր է այստեղ: Ուխտավորը առնվազն մեկ տարի պետք է մնա՝ ամբողջովին տեսնելու և վայելելու համար ս. տեղյաց հանդիսությունները, բայց այդ պատեհությունը զրկված է ինձ: Ես ուխտավոր եմ մի քանի օրերի համար միայն: Պետք է նշել, սակայն, որ Երուսաղեմի ամենահետաքրքիր շրջանը Զատկվա ուխտավորության շրջանն է: Զատիկը աշխարհի բոլոր կողմերից բերել հավաքել է ամեն դավանանքի հավատացյալների: Հաճելի է տեսնել, որ հայ ուխտավորի հետ միասին նույն տաճարում աղոթում են կաթոլիկները ու ուղղափառները, անգլիականները ու ռուսները, քրիստոնյա արաբը: Զատկական այս շրջանը կրոնական ուխտավորության օր է նաև և՛ հրեաների, և՛ արաբների համար:

Առանձնապես այս օրերին Ս. Հակոբյանց վանքը ստանում է տոնական հանդիսավոր օրերի տեսք: Վանքը ուխտավորներով լեցուն է: Թարգմանչաց վարժարանը և հոգևոր ճեմարանի շենքերը, ուխտավորական այլ շենքերի հետ, տրամադրված են ուխտավորներին: Այս տարի շուրջ 2000-ի է հասնում ուխտավորների ընդհանուր թիվը:

Ավագ շաբաթն է՝ Զատկվա հանդիսությունների կենտրոնը, հանդիսություններ, որոնք շատ տպավորիչ են, հուզիչ ու խորհրդավոր: Նման հանդիսություններ դուք երբեք չեք գտնի հայկական ոչ մի վանքում:

Ես հասա Ավագ չորեքշաբթի երեկոյան, ուրեմն բախտավորությունը պետք է ունենայի մասնակցելու Ավագ հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ և կիրակի՝ Զատկի հանդիսություններին: Արդարև, չի կարելի բառերով բացատրել այն վեհությունը, այն հոյակապ հանդիսությունները ու ծիսակատարությունները, ուխտագնացությունները, որոնք տեղի են ունենում այս օրերին Ս. Հակոբյանց պատմական տաճարի կամարների տակ ու նրա շրջապատում:

Ապրիլի 27-ին՝ Ավագ հինգշաբթի օրը, առավոտ շուտ, եկեղեցու քաղցր զանգերը մեզ հրավիրում են պաշտամունքի: Ամբողջ միաբանությունը ներկա է ժամերգության, որը պաշտվում է Մայր տաճարի կամարների տակ: Արարողությունից հետո խմբով գնում ենք վանական սեղանատուն, ու առաջին անգամ է, որ միաբանության հետ կիսում եմ հյուրասիրության աղն ու հացը և ամփոփում մեր եղբայրական կապը և ուխտը Ս. Հակոբյանց մեր սիրելի հարազատների հետ:

Ավագ հինգշաբթի ժամը 10-ին Մայր տաճարում սկսվում է վերջին ընթրյաց հիշատակին նվիրված հանդիսավոր ս. պատարագը: Օրվա պատարագիչն է լուսարարապետ տ. Հայրիկ արքեպիսկոպոս Ասլանյանը: Մայր տաճարը լիքն է ուխտավոր բազմությամբ: Ամեն կողմ աղոթք, խունկ և երկրպագություն: Հավարտ ս. պատարագի բազմաթիվ ուխտավորներ հաղորդություն են առնում: Ժամը 13-ին վերջանում է ս. պատարագը, իսկ ժամը 16-ին Մայր տաճարում տեսի է ունենալու ամենահուզիչ արարողություններից մեկը՝ Ոտնալվան:

Ժամը 16-ին Մայր տաճարի աջակողմյան և ձախակողմյան դռները լցվել են արդեն պաշտոնական հյուրերով, իսկ Մայր տաճարը՝ ուխտավորներով: Ավագ սեղանը վարագուրված է շատ գեղեցիկ և նկարազարդ մի վարագույրով և նրա ետև պատրիարք սրբազանը զգեստավորված է: Ահա հուշիկ բացվում է վարագույրը և Ավագ սեղանի վրա, իր ամբողջ փայլով ու շքեղության մեջ, տեսնում ենք սրբազան պատրիարքին՝ շրջապատված միաբանության եպիսկոպոսներով, վարդապետներով՝ ըստ կարգի: Սրբազան պատրիարքը անձամբ ինքն է կատարում Ոտնալվայի արարողությունը և մեկ-մեկ լվանում է 12 առաքյալների փոխարեն 12 միաբանների ոտքերը՝ ի նշան խոնարհության և հեզության:

Կյանքիս ամենագեղեցիկ, հուզումնալից օրերից մեկը անցկացրեցի Ավագ հինգշաբթի օրը երեկոյան, երբ ներկա եղա Խավարման գիշերի արարողությանը: Ամբողջ տաճարը լիքն էր աղոթավոր ուխտավորներով: Միաբանությունը պատրիարք սրբազանի գլխավորությամբ ներկա էր հանդիսության: Առավոտյան ժամերգություն, այնուհետև՝ Խավարման գիշերվա երկար ավետարանների շինիչ ընթերցումներ, ամեն ինչ կատարվում էր պատշաճ լրջությամբ, Երուսաղեմի հատուկ շքով ու հանդիսությամբ: Խավարման գիշերը քարոզում է տ. Կյուրեղ վարդապետը, անդրադառնալով մատնիչ Հուդայի միջոցով կատարված մատնության անավորության. «Հուդա, համբուրելո՞վ մատնես զվարդապետն»:

Արարողությունը վերջանում է գիշերվա ժամը երկուսին:

Ապրիլի 28-ին՝ Ավագ ուրբաթը, ես մայրավանքում ունի յուրահատուկ գեղեցկություն: Ժամը 10-ին Մայր տաճարում կատարվում է «Կարգ խաչելու-

թեան»։ Այնուհետև մամը 15-ին նկեղեցու վանքի դողանջները բոլորին հրավիրում են թաղման արարողության։ Ավագ սեղանի առաջ, ատյանում, զարդարված է գեղեցիկ ջահերով, խաչերով, աշտանակներով ու մոմերով, խաչվով ու մեռած Ծածկոցներով՝ Քրիստոսի գերեզմանը։ Այդարև ամեն ինչ տպավորիչ է, գեղեցիկ։ Ս. Հակոբյանց միաբանությունը իր դանձաստան լավագույն սպասները հանել է զարդարելու համար և՛ Քրիստի գերեզմանը, և՛ Ավագ սեղանը։ Ջահերը զմրուխտ կանաչում են, հուշիկ փախչող իրիկվան ծիրանի լույսն է վվարթ։ Պատրիարք արքայանը անձամբ նախագահում է հանդիսության։ Հաղորդարար այսպես պատրիարքի ձեռքն է տրվում Հեթում Ի թագավորի միակտուր սպան արքայական գավազանը։

Ապրիլի 29-ին՝ Ավագ շաբաթ, հանդիսության միմեկական մասը կատարվում է ս. Հարության տաճարում։ Առավոտյան ժամերգությունը պաշտվում է Մայր տաճարում, և այնուհետև մամը 10-ին միաբանության գլխավորությամբ լուսարարապետ սրբազան գնում է դեպի ս. Հարության տաճարը, որի դռները փակ են և հայոց պատրիարքության հրամանով բացվելու է այդ օրը։

Ռենկարարդի է խանդավառությունը և մոլեռանդի բանակը։ Ամբոխ փողոցներ, մոտակա և հեռավոր լեռի-լեռներ են բարձրացել և բարձակրոն ուխտավորներով։ Հանդիսավոր թափորը, ս. Հակոբ վանքից նկող, սանցնում է մայրուղիներ մեջ՝ հարիվ ճանապարհ բանալով դեպի ս. Հարություն։ Իսամ 11-ին բացվում է ս. Հարության տաճարի դռները և մոլեռանդը խուժում է, ինչքան հնարավոր է, ավելի մոտիկ դեպի ս. գերեզմանը, նորից լինելու համար ամենահետաքրքրական՝ պատկական շրջանի ուխտավորությունը հատկանշող լույսի հանման հանդիսության։ Քրիստոսի գերեզմանը մեծ շուքով քիչ առաջ կնքվեր։ Դռան առջև կանգնած են հայ, լատին և հույն պատրիարքությունների ներկայացուցիչներ։ Ես ևս, որպես ուխտավոր, կանգնել եմ ս. գերեզմանի դռան առաջ։ Մոտ մամը 13-ին մամանում է հայոց պատրիարքը և բարձրանում դեպի Գողգոթա՝ հայոց մասը, նորից լինելու համար լուսահանության հանդիսության։

Ս. Հարության տաճարը հարյուրավոր խորանների ու սուրբ նվիրական տեղերի մի ամբողջություն է։ Հսկա տաճարի կամարների տակ հանգել են բոլոր կանթեղներն ու մոմերը, ոչ մի լուսավորություն, միայն Քրիստոսի թափուր գերեզմանի վրա պլպլում են երեք կանթեղներ, հայ, հույն և կաթոլիկ եկեղեցիների։ **Մամը 13-ին երեք հարանվանությունների լուսահան վարդապետները մտնում են Քրիստոսի գերեզմանի մատուռը։** Մի պահ կանգ են առնում «Հրեշտակի վեմ» կոչվող քարի առաջ և այնուհետև երկրորդ հարկի մատուռ՝ թափուր գերեզմանը, որի վրա են երեք պլպլարար կանթեղները։ Լուսահան վարդապետների ձեռքին գեղեցիկ մոմեր կան, որոնք պետք է վառվեն գերեզմանի վրա մշտավառ կանթեղի լույսից։ Քրիստոսի լույս գերեզմանից վառված լույս մոմերով դուրս է գալիս լուսահան մեր Պատրիարք վրդ. Գարեգինը և իր մեռքի լուսավառ մոմերի տրցակը հանձնում մատուռի հանդիսավոր լույսի փոխանցման համար հանդիսավոր պատարագանից հետ լուսահաններին, որոնք ընդհանրապես Երուսաղեմի հին հայերից են, տեղացի, և որոնք այդ պաշտոնը կատարում են մատանգալով։ Նրանք բոլորն ոտքով, ամենաարագ թափով լույսը հասցնում են վերև՝ հայկական Գողգոթա, որ բաժին է հայոց պատրիարքը։ Վերջինս հոգումով վերցնում է ս. գերեզմանից իրեն հասցված լույսը, որով և սրբում է հերքանում գտնվող բոլոր մոմերին, խաչակնքում հայկական վանքերի քարյար դողանջների առաջ։ Թնդում է տաճարը, նույն հայկական վանքերին հաջորդում են մյուս տաճարական վանքերի դողանջները, շարականների երգը, քշոցների ու նվագարանների ձայները, ուխտավորների վառարանության օրհնությունները, որոնք մի անգամ ևս ցույց են տալիս լույսի հայթանակը, կյանքի հայթանակը մահվան նկատմամբ, «լուսաորեա, լուսաորեա Երուսաղէմ, Քրիստոս յարեալ ի մեռելոց»։ Միաձայնակ կարդվում է թափոր՝ Քրիստոսի գերեզմանի շուրջ։ Այս օրվա թափորի թավուրապետը պետք է լինի լուսահան վարդապետը։ Կազմվում է հայկական թափորը Քրիստոսի ս. գերեզմանի մատուռ շուրջ։ Մեր թափորի մասն են կազմում նաև դպրոցներն ու աստիճանները՝ բոլորն էլ զգեստավորված, խաչով և խաչվառով։ Հայկական թափորը հոգատարձ շրջանակով լցվում է, պտտվում է գերեզմանի շուրջ մոլեռանդ մոլեռների ներկայությամբ։ Թափորը իր երեք անգամվա պտույտի համար պահանջում է մոտ երեք ժամ։ Արևմեն կանգնած երգում ենք, թնդում են տարբեր լեզվով հոգևոր երգերն ու շարականները։ Այնուհետև միաբանությունը նկեղեցական թափորով նույն հանդիսությամբ վերադառնում է Ս. Հակոբյանց վանք. մինչ միաբանության մի որոշ մասը մնում է նրանց Մրագալույի պատարագը կատարելու համար հայոց երկրորդ Գողգոթայի ս. սեղանի վրա։ Իսամ 16-ին դողանջում են տոնական ու հանդեսական հարության ավետիրով խանդավառ Ս. Հակոբյանց Մայր տաճարի զանգերը։ Մրագալույի պատարագն է, որ սկսվում է։ Ներկա է միաբանությունը, և տաճարը դարձյալ լցված է հավատացյալներով։

Հանդիսության նախագահում է ամենապատիվ սրբազան հայրը։ Հոգևոր հնամարտի ուսանողները ընթերցում են Դանիելի գիրքը։ Սկսվում է հանդիսավոր Մրագալույի ս. պատարագը։ Օրվա սլաստարագիչը ուխտավորարար ս. Երուսաղեմում գտնվող Նարեկ վրդ. Շաքարյանն է։ Դա իմ առաջին ուխտի պատարագն է ս. տեղյաց մեջ։ Ս. պատարագից հետո տեղի ունեցավ նախատոնակ ս. Զատկի։ Եկեղեցական արարողությունից հետո թափորով և «Ելեալ յարեալ ի մեռելոց» շարականի երգեցողության տակ միաբանությունը բարձրացավ դեպի վանքի սեղանատունը։ Պատրիարք հայրը շրջապատված միաբանների, այդ օրը Զատկվա նվագակատարությունը կատարում է վանքի սեղանատունը։

Ելույթ ամբողջ գիշեր բաց են Ս. Հակոբյանց վանքի

դոները: Ռեխտավորների խմբերը գնում են ու գալիս մոմերով, դեպի ս. Հարություն և ս. Հակոբ, դեպի ս. Հրեշտակապետաց: Ցնծում են բոլորի հոգիները: Հարության լույսի ճառագայթումն է երևում դեմքերին, երանց նիստ ու կարի մեջ: Ս. Հակոբյանց տաճարի գմբեթի, ս. Հրեշտակապետաց վանքի գլխավոր մուտքի, պատրիարքարանի և այլ շենքերի բոլոր լույսերը վառվում են: Երիտասարդությունը վանքի բակի մեջ երգում է, պարում և ուրախանում:

Ապրիլի 30-ի ս. Ջատիկը՝ ս. Հարության տաճարում: Գիշերվա ժամը մեկն է: Քաղցրալոր ճնչում են եկեղեցու զանգերը, մինչ «կենդանի մի կոչնակ» իր անուշիկ ձայնով զարթեցնում է բոլորին. «Եկայք հավատացեալք յեկեղեցի»: Կես ժամ հետո թավորը արդեն կազմ ու պատրաստ է: Թափորը շարժվում է հանդիսությամբ դեպի ս. Հարության տաճարը, ուր ս. Գր. Լուսավորիչ եկեղեցում կատարվում է առավոտյան ժամերգությունը: Իսկ Քրիստոսի գերեզմանի վրա՝ զատկական պատարագը: Պատարագում է լուսահան տ. Կյուրեղ վարդապետը: Սրբազան արարողության ներկա են պատրիարք սրբազանը, միաբանությունը և ուխտավորությունը: Թնդում են ս. Հարության երգերն ու աղոթքները, և ս. պատարագը շարունակվում է հոգևոր ուրախությամբ: Օրվա քարոզիչն է ուխտավոր տ. Նարեկ վարդապետը: Ինձ համար դա շատ մեծ փորձություն էր Քրիստոսի լույս գերեզմանի առաջ ավետել մեր ժողովրդին Հարության տոնի ուրախությունը և խոսել տոնի նշանակության մասին: Հուզումը և ուրախությունը համակել է ինձ: Նախ իմ քարոզի առաջին մասում Հայոց Հայրապետից ողջույններ եմ հաղորդում պատրիարք սրբազան հոր, միաբանության բոլոր անդամներին ու ժողովրդին և հանձնարարեր՝ մեր հայրենի ժողովրդից ու մեր սրբավայրերից, ապա շնորհավորելով ս. Հարության տոնը, խոսում եմ այդ խորհրդի ազգային-եկեղեցական մեծ նշանակության մասին, ցույց տալով, որ ամենից ավելի հայ ժողովուրդը իր կյանքի փորձով հանդիսացել է ս. Հարության հրաշքի վկան:

Հանդիսավոր ս. պատարագից հետո եկեղեցական թափորով դարձյալ վերադարձանք մայրավանք: Գավթի բերդի առաջ եկեղեցական թափորով բարձրացանք պատրիարքարան՝ շնորհավորելու համար հայոց պատրիարքի ս. հարության Զատիկը: Ամբողջ պատրիարքարանը լիքն էր ուխտավորներով: Նորին Ամենապատվությունը իր օրհնության խոսքի մեջ ջերմ բարեմաղթություններ արեց այս առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կյանքի և առողջության համար, մեր հայրենի շինության և բովանդակ հայ ժողովրդի բարօրության ու աշխարհի խաղաղության համար:

Անդաստան վանքի մեծ բակում: Ս. Զատկվա արարողությունների գեղեցիկ մեկ արտահայտությունն է նաև մեծ անդաստանը վանքի մեծ բակում, Զատկվա կիրակի երեկոյան ժամերգությունից առաջ: Ամբողջ միաբանությունը զգեստավորած, եկեղեցական թափորով դուրս է գալիս Մայր տաճարից: Պատրիարք հայրը այդ օրը կրում է Ս. Հակոբյանց վանքի նոագույն և թանգարանային արժեք ներկայացնող զգեստները. և խաչով, խաչվառով, երգով ու աղոթքով թափորը առաջնորդվում է վանքի մեծ բակը, ուր և կատարվում է ուխտավորների ներկայությամբ մեծ անդաստանը: Օրհնվում է արևելյան կողմն աշխարհի «եւ հայրապետութիւն հայոց», օրհնվում է Արևմուտքը. «Թագաւորութիւնք քրիստոնէից», ինչպես և հարավային կողմն աշխարհիս, «երկիրս անդաստանս և պտղաբերութիւն տարուոյս», և հյուսիսայինը՝ «վանքս, անապատս, քաղաքս և գիւղս և ընակեալ ժողովուրդս ի նոսա»:

Արևի լույսի տակ եկեղեցական շողշողուն զգեստները, տյուրդ խաչվառները, երգն ու շարականը էլ ավելի խորհրդավոր, գեղեցիկ ու տպավորիչ էին դարձնում օրվա, արդեն առանց այն էլ շքեղ, հանդիսությունը:

Մեծ անդաստանը վանքի այս բակում տևում է մոտ մեկ ժամ և նույն այս թափորով միաբանությունը գալիս է Մայր տաճարի գավիթը, ուր տեղի է ունենում հոգևոր հանգիստ՝ այնտեղ թաղված պատրիարքների շիրիմների վրա:

Մայիսի 1-ին՝ երկուշաբթի, վերջին հանդիսությունը: Մայիս ամսվա և զատկական հանդիսությունների վերջին օրն է: Զատկի Մեսրոպյան: Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում պատրիարք սրբազան հայրը: Տաճարը դարձյալ փողոցում է լույսերի մեջ: Ս. պատարագի ընթացքին պատարագիչ սրբազան հայրը մի անգամ ևս ողջունում է ուխտավորների ներկայությունը և բարի ճանապարհ է մաղթում նրանց: Իր բովանդակալից քարոզը նա վերջացնում է սրտագին բարեմաղթություններով, որ Աստված անսասանություն պարգևի Մայր Աթոռ ս. Էջմիածնին, որը գլուխն է մեր ս. եկեղեցու, վեր հանելով նաև Ս. Հակոբյանց միաբանության վիճակված դերը սփյուռքի պայմաններում:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում ավանդական թափորի պտույտը՝ գլխավորությամբ պատրիարք սրբազանի, ամպհովանիով: Այդ օրը Մայր տաճարի բոլոր գանձ-մասունքները կամ աջերը դուրս են բերվել՝ նրանցով օրհնելու համար ներկա ժողովրդին: Խոնարհ թափորով ավարտվում է օրվա հանդիսությունը սրբազան հոր «Պանպանիչ»-ով: Ըստ կանոնի այս ս. պատարագով ավարտվում է ուխտավորական հանդիսությանց և երկրպագության խանդավառ օրերը ս. Հակոբի կամարների տակ: Հաջորդ օրն իսկ ուխտավորներից ոմանք վերադառնում են, իսկ ովքեր միջոց և առիթ ունեն, մնում են երկար:

Ս. պատարագից հետո սրբազան պատրիարքը առաջնորդվում է պատրիարքարան՝ ընդունելու համար Երուսաղեմի կրոնական, քաղաքական և այլ պետերի այցելությունները ս. Զատկվա տոնի առթիվ: Այնուհետև կեսօրից հետո նույն հանդիսությամբ ե շարունվ, հայոց սրբազան պատրիարքը փոխադարձում է այդ շնորհավորությունները: Իս ջերմ սիրով և երկյուղածությամբ ներկա եմ լինում այս հանդիսություններին

և ընկնում եմ նոր եկեղեցու հոյակապ պատերին արված այդ այցելությունների:

Հատկապես տներից հետո ուժգին եմ ունենում այցելել Էջմիածնի հայոց մայրավանքի մեջ գտնվող սրբավայրերն ու եկեղեցիները. Գորյան մատենադարանը, Ժառանգավորաց վարժարանն ու Ընծայարանը, Թադեվանգաց վարժարանը, տպարանը:

Հաճախ ոտքով եմ գնում ս. Հարության տաճարը: Կանգնում եմ ս. Աստվածածին եկեղեցին, բարձրանում եմ Ջիթենյաց լեռան վրայով դեպի հավերժման սրբավայրերը, այցելում եմ քաղաքի տեսարժան վայրերը:

Մի ամբողջ օր է տևում իմ այցելությունը Գեղարդավանք՝ ս. Գրիգորյան տաճարը:

Օրերն անցում են արագ, երազային:

Հասավ նաև նրանշանի վերջին օրը:

Մայիսի 21-ն էր: Վերջին ուղևորությունն եմ տալիս պատրիարքարան, միաբանության անդամներին: Որքան դժվար է բաժանվել այս սրբազան վայրերից ու նոյնքան սիրելի միաբան հայրերից:

Գնացքը սրնը անցել էին Երևանի նման. բայց նա տուժել էի և հոգումս սրանով անջնջելի տպավորություններ:

Վերջին անգամ մտնում եմ Մայր տաճար՝ աղոթելու:

Մնաս բարով, սուրբ լեռներ Սիր և պաշտամունք յուր նոր, հայկական Դրուագում:

Ճաշից հետո, երբ Նորին Ամենապատվությունը բարեհաճել էր ինձ իրեն անդամակից դարձնել, պատրիարքական մեքենայով դեպի Դաֆու, ս. գրական Հոպպն բաղարը Նորին Սրբության ընկերակցությամբ պատիվն եմ ունենում:

Վերադարձի ճանապարհին է: Հինգ օր մնում եմ և ուղևորվում՝ հայոց ս. Նիկողոս վանքում՝ ոգին ճարտարապետ Հոսեփ վարդապետի:

Հուլիսի 25-ին օդանավը ինձ հասցնում է Լիմասոլ, որ մի գիշերվա հանգստից հետո, «ԻԼ—18» օդանավով հասնում եմ Մոսկվա և այնուհետև շուրջ մի ամսվա բացակայությունից հետո վերադառնում Մայր Աթոռ, երջանկանալու իմ ուխտագնացությանց անմոռանալի տպավորություններով և հուշերով:



ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ

Սեպտեմբերի 25-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի դահլիճն էին հավաքվել գրողներ, մշակույթի գործիչներ, բանվորներ, ծառայողներ, սովորողներ, հյուրեր երկրի տարբեր հանրապետություններից, արտասահմանյան երկրներից՝ մասնակցելու Ե. Չարենցի ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին:

Իր մեծ դիմանկարով, որը երևում է բեմի խորքից, թվում է, թե այդ հանդիսությանը մասնակից է նաև ինքը՝ բանաստեղծը:

Նիստը ներածական խոսքով բաց է անում կառավարական հոբելյանական հանձնաժողովի նախագահ, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանը:

Նա համառոտակի ներկայացնում է մեծ երգչի դիմանկարը, նրա անցած ստեղծագործական ուղին:

Թեև անցել են տասնյակ տարիներ այն ժամանակներից, երբ կերտվել են այդ ստեղծագործությունները, սակայն նրանք այսօր էլ համահնչուն են մեր կյանքին, որովհետև գրված են մեծ ավյունով, մեծ կյանքով և խոր զգացմունքներով:

Իր խոսքի վերջում Ն. Հարությունյանը ասում է.

— Եղիշե Չարենցի հանճարը մոռացության հանգրվան չունի, որովհետև նա արհամարհում է ժամանակի և տարածության ամենակուլ ուժը: Թո՛ղ նրա հրդեհված սրտի անշեջ կրակը հավերժ վառվի բոլոր սերունդների սրտերում:

Այնուհետև, զեկուցման համար խոսքը տրվում է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար Պարույր Սևակին:

Զեկուցողը հանգամանորեն խոսում է բանաստեղծի կյանքի ու գրական գործունեության մասին:

Բացի հայ գրողներից և արվեստագետներից, մեծ բանաստեղծի և հայ ժողովրդի հասցեին ջերմ և արտագին խոսքեր ասացին նաև հյուրաբար երևույթին ներկա գտնվող Միության հանրապետությունների և արտասահմանյան բազմաթիվ երկրների ներկայացուցիչները:

Հանդիսավոր նիստին ներկա էր նաև Ամենայն Հայոց Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբաններով և ԱՄՆ-ից, Անգլիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Լիբանանից, Եգիպտոսից և այլ երկրներից ս. Էջմիածին ուխտի եկած հյուրերով:

Հանդիսության վերջում տրվում է ճոխ համերգ՝ հանրապետության կատարողական լավագույն ուժերի մասնակցությամբ:

Համերգին իր մասնակցությունը բերեց նաև Մետրոպոլիտենի հանրահայտ երգչուհի Լիլի Զուքասզյանը:

Նույն օրը, առավոտյան ժամը 11-ին, տեղի ունեցավ Եղիշե Չարենցի արձանի հանդիսավոր հիմնադրումը: Մոտ ապագայում այն վեր կխոյանա այն տեղում, ուր միախառնվել են Սայաթ-Նովայի, Լերմոնտովի և Չարենցի անունները կրող փողոցները:

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Գրող հարթանակի ու հավերժության.—Նոյեմբ. Արևելքի բարգաւադիր բլուրներից մեկի վրա՝ Հայաստանի սրբազան, վեր կխոյանա հայ ժողովրդի հավերժությունը խորհրդանշող «Մայր-Հայաստան» կոթողը:

Ֆրիմենի որոնող ու տքնաջան աշխատանքի շնորհիվ է քանդակագործ Ավա Հարությունյանը, ճարտարապետ Ռուֆայել Երզնկյանի հետ միասին, «Մայր-Հայաստան» արձանին կարողացել է տալ մի այնպիսի լուծում, որը լիովին արտահայտում է հայ ժողովրդի մեծագույն սխրանքները՝ ճանաչելի իր գոյությամբ:

28 մետրանոց պատվանդանի վրա կանգնեցվելու է արույր ու տունգստան կնոջ կերպարանք, որի բարձրությունը կլինի 21 մետրից մի փոքր ավելի: Նա իր ձեռքերի մեջ բռնած պետք է ունենա մի սուր, որով հայ ժողովուրդը կերտել է իր հավերժությունը:

Գլուխը կատարված է հայրական կեցվածքով և պատված է գեղեցիկ հարթանակիր թեղեր սուրը: Լայն կեցվածքը արտահայտում է նաև այն միտքը, որ ստեղծագործությունը պետք է ունենա մի ամբողջական տեսք, որը երկինքը դարձնում է կիսաբոլոր ֆոնի:

Կնոջ ոտքերի տակ բռնված է վահանը՝ պաշտպանության խորհրդանշանը:

Նար-Դոսի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ.—Սեպտեմբերի 8-ին մեծ հանդիսավորությամբ նշվեց հայ մեծ արձակագիր Նար-Դոսի 4 հոգյան 100-ամյակը:

Ակ. Ապենիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի դահլիճն էին հավաքվել գրողներ, արվեստագետներ, բանվոր-ծառայողներ, սովորողներ, տարբերակի հասարակության բազմաթիվ ներկայացուցիչներ:

Նար-Դոսի ծննդյան հոբելյանին նվիրված հանդիսավոր նիստը բացում է Հայաստանի գրողների միության վարչության նախագահ Ս. Թոփչյանը: Նա ճանաչողական կանգ է առնում մեծ գրողի գրական գործունեության վրա և մատնանշում այն պայմանները, որոնց մեջ իր ուրույն տեղն ուներ Նար-Դոսը:

Այնուհետև հանդիսականին զեկուցումով հանդես գալիս գրականագետ Ա. Մարինյանը:

Խոսելով մեծ արձակագրի ստեղծագործական ուղիների մասին, զեկուցողը նշում է, որ Նար-Դոսը գեղարվեստական խոսքի մեջ բերեց իր ինքնատիպ աշխարհը, Նար-Դոսական ոճը:

Շիրվանզադեի, Թումանյանի, Արփիարյանի ու Հովհաննիսյանի հետ, Նար-Դոսը նոր արձակի ստեղծագործողներ, ճշմարտության բովանդակություն:

Մեծ կնոջ դայ, անցյալ դարի 80-ական թվականներից մինչև իր կյանքի վերջը, Նար-Դոսը անձնվիրաբար ծառայեց ժողովրդի գրականության զարգացման գործին:

Լիլի Զուբասգյանը Երևանում.—Սեպտեմբերի 11-ին Ակ. Ապենիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում Վերդիի «Այդա» ներկայացման մեջ Ամերիկայի դերերգով հանդես եկավ Լիլի Զուբասգյանը՝ Նյու-Յորքի Մետրոպոլիտենի աստղերից մեկը: Հայ երգչուհու կախարդիչ ձայնը հնչել է աշխարհի շատ ու շատ նշանավոր բեմակներում: Եվ պատահական չէ, որ վերոհիշյալ նամակից հետո Երգչուհին չէր կարողանում ազատվել արվեստի երկրպագուներից:

— Դա անգամի ուրախ է,— ասում է Լիլի Զուբասգյանը,— որ կատարվեց վաղվա երազանքս նույնը ունեցող մայր հայրենիքում: Հիացած եմ երևանցի իմ ասողներով խորհրդակցություններով... Շատ սքանչելի էր հանդիսատեսը: Դա իր հոգեր զգացողությամբ ու անմիջականությամբ գերեց ինձ:

Հայ շատ նշանավոր երգիչներ նիստական խոսքեր ասացին ձայնային հարմարագույն տվյալներով օժտված երգչուհու հասցեին:

Տաղանդավոր երգչուհին հանդես կգա ևս մի շարք օպերային դերերգերով:

Ամերիկահայ երգեհոնահարը Երևանում.—Բոստոնի սիմֆոնիկ նվագախմբի նախկին գլխավոր դիրիժոր Լեոնարդ Սլատկինը սեպտեմբերի 10-ին կազմակերպեց երգեհոնահարների տաղանդաշնորհ դասընթաց: Դա սկսվում էր Հայաստանի Գեղարվեստի պետական ինստիտուտի դասախոսությամբ: Դասընթացի ավարտին Սլատկինը ելույթ ունեցավ Երևանի Գեղարվեստի պետական դահլիճում

Նոր բնակարանային շինարարության մեջ — հասարակական-մշակութային ինստիտուտի կենտրոն, նոր հասարակական կենտրոնը նախագծել է Ինչ Ռարմանի բնակելի նոր կերպի շենք:

Ըստ այդ նախագծի, շենքի միջնորմների մի մասը, որոնցում են ապակեպատ դռներ կլինեն շարժական, որի շնորհիվ անշտությամբ կարելի կլինի փոփոխության ենթարկել ճաշասենյակը, խոհանոցը, միջանցքը բնակարանը հարմարեցնելով տարվա եղանակներին:

Շենքը կունենա նաև այլ առավելություններ: Բացի բնակարանների ներսում եղած մի շարք հարմարություններից, շենքը կունենա նաև ապրանոց, ամենավայրերի ներքին հեռացման միջոցներ, ելուզներ և ավտոպտերների ուղեմասերի:

Դասիրագծումն այդ նոր տիպի շատով կենդանություն կտանա: